


8 2/1 17 249

ԿՅՐ



ԲԱԳԻՆ ԺԴ. Տ Ա Ր Ի - 1975 ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐԹԻ 9-10

digitised by A.R.A.R.@




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- Հ. ԶԱՐԿԱՐԵԱՆ Ժամանակ եւ խորհուրդք իւր
- Հ. ԷԳՈՅԵԱՆ Սոնետների պատկ
- Մ. ԻՇԽԱՆ Սպասում
- Ա. ԳԱՐԱԼԷՔԵԱՆ Անդունդներու ծայրերուն
- Ա. Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ Նոր քաղաքը կը սկսի երբ կը վերջանայ
անապուտը . . .
- Ե. ՐԻՖԱԻԷ Եւ կինը սեւ ածուխ է
- * * * Անթռնէն Լեւիմ
- ԺԻԼ ԼԱՓՈՒԺ «Մտաւորականը կը պայթեցնէ
առասպելները»
- Լ. ՄԿՐՏՉԵԱՆ Փիլիսոփայական մտքի վիճակը
հորհրդային Հայաստանում
- Վ. ՆԻԻՐԲԷՔԻՆԵԱՆ Ազանով կամ լինելութեան մղձաւանջը
- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Գեղանկարչական վերտաղ
- * * * Նշումներ

9880



Բազմը

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Վ. ԵԱՐՆ, ՔԻՒ 9-10 ՍԵՊՏԵՄԲԵՐ- ՀՈԿՏԵՄԲԵՐ 1975 ՊԷՏՐՈՒՄ

Հ. Զ Ա Ր Դ Ա Ր Ե Ա Ն

ՃԱՄԱՆԱԿ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴՔ ԻՒՐ

Մարդու ազնի գացումները չեն հասնիր միշտ իրենց բնական լրումին: Մինչ երբ գործի կ'անցնին, հասուն պտուղն են սրտին: Բռնածէն պրծած մէկ-մէկ հարսեակներ՝ կը թեւածեն, կ'ազդանեն թնութիւնն ու կը կատարեն առաջնութիւնը սրբագնացութեամբ արգասաւորման: Մարդոց մեծամասնութեան համար անոնք կը մնան խակ եւ կը գտանան: Պիտի ծագկի՞նք թէ ոչ, պիտի պրագանա՞նք որ մը չէ որ մը, — անա՛ւ ամբողջ խնդիրը: Եւ նաեւ տէրն ըլլալ պատուական պտուղներու եւ երբեւէ չօգտագործել, — մկարագիրն է, որ դուռը կը բանայ, վստուութիւնը հիւրընկալելու: Մեծատուն անտարբեր, որ կեանքը չի տանիր գոյնին, չի հաներ արծաթ մը չնչին, երբ աչքին առջեւ սովահար մը կը հոգեվարի:

Հասած իրենց լրումին, անոնք ո՛չ միայն են, այլեւ կը գործեն: Մահարոյր ամառութիւնը ռոնակախած՝ գործն զառնալն է, որ կը գատորոշէ յանձնառուէ տարապնոց անհատը՝ ընտրելով էակէն: Այս գատորոշումը բոլոր յատկանշումներուն մեծագոյնն է: Որո՞նք պէտք պտուղներն աւելի, պահուած սրտի կարասներուն մէջ, որ պիտի չնետուին շրջառութեան մէջ կեանքին:

Երբ ալ կ'անայ հրամաններուն սրտին, հասուն պտուղներով յարգանքով, երէկ ոմն մշակ աննշան, այսօր, մէկ խոյանքով կը մտնէ մաւրապետութեանը մէջ հերոսներուն:

Անոնք պատրաստ են ընելու որեւէ գոհազուրթիւն, որպէսզի մարդոց գործերը, կեանքին պատկերը ներդաշնակուին «անանձնական» իրենց գացումներուն հետ:

Գործածուող միակ դրամը կը կոչուի գոհողութիւն. անձնուրացում: Անոնք ունին թիւր տեսակներ եւ մեծութիւններ: Ամենէն մեծը՝ գիտակցական կեանքին գիտակցական գոհաբերումն է: Մաս առ մաս թէ մէկ անգամէն գահավէժ:

Handwritten signature and date: 2.2.79

Կեանքերուն ամենէն զիտակիցը ըլլալով Նագովրեցիները, իր գերգիտակցական գոնարքումն ալ գերմարդկային է: Նման գործին հանճարեղ նկարիչ Տէմիրժ, անսահմանագծելի, գերժամանակային, անսահմանելի: Ահաւորդի չի հանուիր: Գլմ շունի: Գինը որոշող զրամն ու համբանքը դադրած են իմաստ ունենալէ: Իր ժամանակակիցներն ու ժամանակը անգոր են միջամտելու: Իրականութիւնը յափրացած է եւ իր գործը հրաշափոխուած ապրանքի մը հետ է:

Հարկ է մնալ հաւատարիմ վսեմ զգացումներուն: Թոյլ տալ, որ անին անոնք որտի՞ն մէջ եւ փոխարկեն աղբարոյնը պողպատանի: Որպէսզի մէն մի ոք «Իւրովսանն» նպաստէ զահակալութեանն անոնց:

ԳՐԱԲԱՐԻՆ

Ակուր խորհրդաւոր, լեզու ոսկեզնիկ, որուն գանձէն կը ձուլուին նորանոր բաներու ոսկին սրբափայլ:

Եւ մթերանոց անպառ մտածմանց եւ օրէնքներուն՝ մտածումները կազապարելու:

Ո՛ւժ արարչագործ, որ ժողովուրդիդ բիւր անգամ կոտրած ազնասիւնը վերականգնեցիր: Մէն մի հարուածէ յետոյ՝ զրոյեղեցիր պողպատն իր: Եւ թոյլ տուիր, որ նոր կորովով ան դիմակալէ աւելներն զարքուն երկարածից: Ծառացար, բե՛րդ աննիւթական, անհանդի:

Գմբէք պերնաշէնդ ու նրբակերտ, մշտապէս պատրաստ արձագանգելու ձայներուն աղերսարկու:

Ձկայ անգին յուզում մը սրտի կամ խորաթափանց շարժում մը ուզեղի, երբ գայ հայցել հին ու ընտրեալ գաւակներէդ, որ նոյնհետայն չծաղկեցնես, չիմաստապտղես:

Կը չափեմ հզօր, անկործանելի մեծութիւնդ կենարար եւ, անգապիլի սրտագեղումն այս պահուն, կը ձկրտիմ ճշտ, — կը սիրեմ քեզ թելայեղ թափով: Աւելի՛ գորովագին, քան Ռոմէոն իր ձիւլիէթը, աւելի՛ սրտադող, քան Պօզոսն իր վերջինէն:

Դո՛ւն՝ բանի՛շ կախարդագործ: Սուրբ Գրոց Բանն, ինչպէս Բանը Նագովրեցիին՝ վերայայտնեցիր թափանցելով անոնց մէջ շունչն աստուածիմաց:

Ջուարթեց փառակերտ, հրդեհ անշէջ ոգիի, ակնազարի մշտնջենական Բանի, մատանի: Ինչպէ՛ս գոչել, թէ կը սիրեմ քեզ, առանց խռովելու հանգիստը բոյլին քեզ պաշտօններուն մոլորանդ, որ սիրահարներ խելակորոյն, ապրեցան անուաղ, քաղցին բոկոսն ու քարկոծուեցան: Ահա՛ երջանիկները, որ ճանցան գերագոյն տարփանքը եւ, խտտարոյն անապատական, մնացին տարաներժ որեւէ կեանքի աշխարհիկ, վասնզի, անունդ գերիլական, դուն ամէն ինչ էիր անոնց համար:

Հանճարայինին գազտեհին ունիս, ո՛վ մեծաստանչ դու Գրաբար, զոր կը բաշխես գաւակներուդ գերթ ամբաստան:

Քաւ մէ՛կ զարձուած էիդ ծալքերէն, սրտի մը ամբողջ յուզումն ու քմբշուրիւնը կը յորդին: Երաշտագերծ աղբիւր իմաստութեան, քու բուսերդ, նոյնքան՝ ինչքան թափուն անսասանելիովն անոնց: Ձկայ իմացութիւն մը, որ սրտուած չըլլայ քեզի գերագնացել:

Ճակատագիրդ՝ նակատագիրն է քեզ անլուր արբեցումով արտասանող ժողովուրդին: Գեղեցկութիւնդ անդիմադրելի եւ կառոյցը մէկ պարբերութեանդ բաւական են գրելու ընդմիջտ իմացականութիւնը:

Նուազ մնայուն, յաւէտ անգետեղի, անոնց հագրին: Ինչպէս եղա՛ր, նաեւ պիտի մնա՛ս կաւմն գաւակներուդ տարամերժ: Ու ամէն ինչ երբ մայնիսկ մահանայ օր մը, դժուար թէ մեռնիս դուն:

... Աւելի թեթեւ, քան փետուրը արտայտին, կամքը նախահայրերու՝ հրամանատար պահանջատէր, ինքնակատար, եկեր առեր է հոգիս ու կը տանի:

Ո՛չ մահացում մը աննշմար կը խռովէ զիս, ոչ ալ անցած կեանքս վայրավատին ու ամառ:

Լցցի Բամն, ըստ որում երջանկութիւնն անցեալի՛մ մէջ միայն իր դիմակը վար կ'առնէ ժպտելով եւ, քրջալով, կը մնայ միշտ աննանաչելի, ներկայի՛ն մէջ:

Ձկայ երանգ մը երջանկութեան, որ յափշտակէ սիրտս չարչարագործ, այս արեւին տակ, իր ճամբուն վրայ, ի մայր մտանելոյ արեւուն: Կայ միայն քաւ սէ՛րդ, որ կը լեցնէ զայն թերնէ բերան: Կայ մէ՛կ ըզճամբ միայն, որ կը ընայ պարզեւիլ անոր աւիւնն իր երիտասարդութեան:

Ահա այս բոպէ՛ն սկսեալ մինչեւ այն պահն, որ մատներն իր դադրին շարժելէ, բոլոր բոպէ՛ներն ըլլան միայն հիւսելու մտգական բառերդ, ո՛ր Գրաբար, յուշարձան կենսաշնորհ ու անասան:

Ահա կ'երգուրննայ ան իր հայրերուն անունով ու յանուն յիշատակին սնունց արբագան, առ մէկ ծառայականդ չնչին, այս վայրկեանէն սկսեալ կը զատնայ մեռած բոլոր այլահնչիւն բարբառներուն համար:

Ա՛լ ան կ'ըզճայ առնել միայն քաւ հայելիդ, ո՛վ հեշտ բարբառ Գրաբար, ու ցոլարձակութիլ հո՛ն միայն:

Արգա՛նդ սրբագնաստեղծ, մշտակեհա՛մ, ինչքա՛ն ալ անցնող ժամանակը դարբերով հաշուրուի: Յոլարան հրաշագեղ նարակերտումի՛ բառերու, մտածմանց եւ ոճի: Գրաբա՛ր, ո՛ւժ անխոցելի եւ կախարդական: Գեղեցկութիւն, դաշնութիւն՝ զօրութի՛ւն անկորուսանելի: Դիցուհի անխոցելի, որուն բազինը կը մնայ միշտ լուսավառ:

Ինչքա՛ն ատեն, որ դուն կաս, ինչքա՛ն ատեն, որ ժողովուրդդ խորհի ու ձգտի քու նուագիդ կշռոյթովը, ան՝ անվրդով պիտի անցընէ գիշերներն իր կեանքին, գլուխը՝ բարձին վրայ ժամանակին:

ՀՐԱԶ ԶԱՐԿԱՐԵԱՆ

Նիս, 1975



տեղծութեան անհղական ըմբռնումներուն դէմ ապստամբութեան դրօշ պարկած իր սերունդին հազուագիւտ նուաճումներէն մէկը: Ակնարկ, ջիղ, լսողական զգայարանը նորոգած Ռազմիկ Դաւոյեանի բարդ, յախտոն, երեւակայութեան բարձր ոլորտներով եւ ուժականութեամբ կարկառուած «Ռեքվիէմ»-էն ետք, թերեւ դժուար ըլլայ ընթերցողին յիշել ուրիշ գործ մը, որ Հենրիկ Էդոյեանի այս շարքին թիւով ու զօրութեամբ արժանիքներ պարկած ըլլար:

Չափի ու կարգապահութեան դէմ ըմբոստացած երիտասարդներէն ամէնէն կրթուող կը համարուէր Հենրիկ Էդոյեան, այլ իր «Պսակ»ը կազմած է ամէնէն անելի կարգապահութիւն պահանջող անհղական ձեւերէն մէկուն խստութեամբ, անգամ մը եւս հաստատելով այն ճշմարտութիւնը, որ էականը ձեւական հարցերը չեն, այլ խորքն է, տարողութիւնը, բանին անկայութիւնն ու զօրութիւնը: Ի վերջոյ, ոսկին կաղապարի մը մէջ ձուլուած ըլլայ թէ կաղապարէն դուրս մնացած, նժոյզը փարային մէջ արգելափակուի թէ արձակուի բաց տարածութիւններու վրայ, ծաղիկը թաքուն խորշի մը ծոցը նախընտ-

«ՍՈՆԵՏՆԵՐԻ ՊՍԱԿ»

«Սովետական գրականութիւն» ամսագրի այս տարուան Փետրուարի համարէն հետագայ էջերուն արտագրուած «Սոնետների պսակ»ը ատորագրող երիտասարդ բանաստեղծին ընթերցողը առաջին անգամ հանդիպած է «Գարուն»ի առաջին տարուան առաջին թիւերուն մէջ: Երեսունըհինգ տարեկան է ան այսօր եւ առաջին անգամը չէ, որ կը խօսեցնէ իր մասին: Իր «Սոնետների պսակ»ը ունի սակայն բոլորովին տարբեր որակ մը: Անիկա երիտասարդ բանաստեղծին ցայժմ հրատարակութեան տուած բանաստեղծութիւններուն պսակը չի հանդիսանար միայն, այլ վերջին տասնամեակին բանաստեղծութեան գրականութեան զօրութեամբ արժանիքներ պարկած ըլլար:

Ու առաջ քան պամենայն, խորք ունի Էդոյեանի «Պսակ»ը, երեւակայութեամբ, մտքով ու ջիղերու հրավառութեամբ պեղուած, ընկալուած, լուսաւորուած լինելութեան ձեւ մը:

Մարդն է մանաւանդ Հենրիկ Էդոյեանի հնչեակներուն հերոսը, անցեալը ներկային մէջ բերող եւ երկուքին յուշը զօրութեամբ ապրուած ժամանակի մը ըն-

րէ թէ տեսանելի դիրքերը՝ միեւնոյն է, անոնք հաւատարիմ պիտի մնան իրենց բնոյթին, պիտի փայլի առաջինը, պիտի վունջէ երկրորդը, պիտի բուրբ երրորդը:

Ձեւը նախասիրութեան խնդիր է, խորքը՝ պայման:

Մարդն է մանաւանդ Հենրիկ Էդոյեանի հնչեակներուն հերոսը, անցեալը ներկային մէջ բերող եւ երկուքին յուշը զօրութեամբ ապրուած ժամանակի մը ըն-

digitised by A.R.A.R.@

թացքին մէջ բռնուած մարդուն հրաշալի ու ողբերգական կենսագրութիւնն է «Պսակ»ը, դիւցապներգութիւնն ու տրամը երկու ծայրաբեւեռներու միջեւ տատանող այն էակին, որ աշխարհն ու իրերը յաւերժութեան շունչով օժտելու արարչագործ ուժի մը տէրը ըլլալու փառահեղ գիտակցութիւնը կ'ապրի մէկ կողմէն, ու միւս կողմէ՝ կը կրէ իր ճակատագրին տէրը չըլլալու անգութ անէծքը: Բանաստեղծին բառերով՝

**Մարդը մերկ է տարածութեան քամու
դէմ,-**

**Ամէն շարժում, որ հանգչում է ինչ-որ
տեղ,**

Նա բռնում է եւ դարձնում յարատե...

Մարդը մերկ է, այսինքն՝ դատապարտուած, որ սակայն հակառակ վայժանաւոր իր ճակատագրին, թերեաւ ա՛յդ իսկ պատճառով պիտի նետէ ինքզինք որոնման տանջալից արկածախնդրութեան մը մէջ ու պիտի յուպէ հողին, քարին, ձայնին, բառին, սրտին, երեւակայութեան, տարածութեան եւ ժամանակին թաքուն շարժումները ու «յարատե» դարձնէ պանոնք. կարճատե իր կեանքը անմահութեան խառնելու ով գիտէ բնագրական ի՛նչ հրակէզ պապակներով:

Լեզուի՛ն, որ կարիճ է, նոր պատկերներ կազմելու բնագրին, որ յուտքի է, հաղորդական հուրքի՛ն, որ անպակաս է, երաժշտականութեան, որ յանկուցիչ է. վերջապէ՛ս՝ երեւակայութեան թոյլքի՛ն, անծանօթին վարնուելու հմայքի՛ն, տողերուն հետ թաւալող անդաւաճան խորհուրդի՛ն, — առանձին-առանձին ոչ մէկուն հաւանաբար, այլ ամէնքը համագործակցութեան մէջ դնող ընդհանուր ուժին շնորհիւ է, որ «Սոնետների պսակ»ին շղթան կը քակուի ու հնչեակ առ հնչեակ կը յուպէ ընթերցողին ջիղերը, արիւնը, միտքը՝ կեանքի ուրիշ մակարդակի մը վրայ ապրելու յորդ տրամադրութիւն մը ծաւալելով այլակերպելու կարօտ անոր հոգիին:

Աշխարհում շարքին ընդհանուր մըթնոլորտէն, հաւանաբար ուրիշներ եւս մեզի պէս վերադառնան ու կրկին ու կրկին

կարդան «Սոնետների պսակ»ը, որուն հմայքը կ'աճի ու կ'աճի, տողերու միաւորները կը պայծառանան անելի, կը շատնայ պատկերներուն ուժը, հնչեակներէն իւրաքանչիւրը կ'ընդ տողով յաջորդին սկիզբը դնող շարունակականութեան գաղափարին հետ անելի՛ թափանցիկ կը դառնայ խորհուրդը եւ արդէն ծանօթ տասնը-չորս հնչեակներուն առաջինին տողերով կազմուած տասնըինգերորդին հետ կը պզտցուի ժառանգութեան այն նոր մակարդակը, որ ուղղակիօրէն կը մտնէ տուեալ գրականութեան գանձանակին մէջ:

Վերջացող տողով յաջորդը սկսող եւ վերջինը իր տասնըչորս նախորդներուն առաջին տողերով կազմող այս հնարքները միայն ձեւական հնարքներ են արդեօք, թէ՛ նաեւ ու մա՛նաւանդ կեանքին անսպառ խորհուրդը թելադրող իւրաքանչիւր մտքով ոճ: Արդարեւ, կեանքին պէս են այդ կրկնութիւնները, իւրաքանչիւր վերջ նոր սկիզբի մը սաղմը կը կրէ ու ամբողջը մշտախոյով սկիզբ մըն է, սկիզբներու հանդէս մը՝ ճիշդ էդոյեանի «Սոնետների պսակ»ին պսակը հանդիսացող վերջին հնչեակին պէս:

Մեր ծանօթութեան սահմաններուն մէջ՝ ոչ օտար գրականութեանց եւ ոչ ալ մեր դպրութեան տարածութիւններուն վերայ մենք չենք յիշեր բանաստեղծութիւններու ուրիշ շարք մը, որ գրուած ըլլար Հենրիկ Էդոյեանի «Սոնետների պսակ»ին հնչեղութեամբ եւ ճարտարապետական անոր կառոյցին այս վայելութեամբ:

«Սոնետների պսակ»ը յանկարծօրէն բռնուած ու մէկ գրիչով թուղթին անցած կտորներուն ակօսով չէ հասած իր աւարտին, անիկա, պարզ է, գինն է լապտրաթուարային լարուածութեան մը, որ, գիտենք ամէնքս ալ, կը բորբոքի ա՛յն ատեն միայն, երբ գործի կ'անցնի հրաշքներու ծնուցիչ երեւակայութիւն կոչուած առաւելագոյն այն կարողութիւնը. որ ցնորական խանդով մը կը պատկերացնէ կառուցելիք աշխարհը եւ ենթական կը նետէ «ճիգի, տանջանքի աննինջ հնոցում», բեւեռելով վայն հոն, այդ քուրային մէջ,

մինչև որ տեսիլը բառի վերածուի ու բառը բարձրանայ Բանին յաւերժաշունչ մակարդակին: Անպայման այս հոլովոյթը ունեցած է էդոյեանի «Պսակ»ը, որ գոյաման տառապագին երկունքին հետ, աստիճանաբար հասած է այս փայլուն արդիւնքին:

Երեակայութեամբ ընդգրկուած եւ սպա բառ առ բառ, պատկեր առ պատկեր եւ կշռոյթ առ կշռոյթ մարմնատրուած «Սոնետների պսակ»ին գուգահեռաբար՝ ընթերցողը անշո՛ւշտ պիտի յիշէ ճարտարապետ մեր վարպետները, որոնք ստեղծագործական նոյն սկզբունքը կը կիրարկէին, իրենց երեակայութեան մէջ կը ձեւատրէին նախ ամբառնալիք կառոյցին պատկերը եւ ապա քար առ քար, սիւն առ սիւն, զմբէթ առ զմբէթ մարմին կու տային անոր՝ սրբացնելով տարածութիւնը եւ նուաճելով ժամանակը:

Քարեղէն բանաստեղծութիւն ըսած են մարդիկ ճարտարապետական մեր հըրաշալիքներուն. չվախնանք բառերէն ու չվախնանք համեմատութիւններէն, ու բառեղէն ճարտարապետութիւն կոչենք «Սոնետների պսակ»ը, որ անկասկած բանաստեղծութեան մասին հեռաւոր զաղափար մը ունեցողի՛ն անզամ հրճուանք պիտի պատճառէ, այնպէս՝ ինչպէս են ճարտարապետական մեր կոթողները, որոնք իրենց վրայ զամեցին ու կը զամեն նոյնիսկ մշակոյթէ գուրկ նախնական ակնարկները:

Ուպեցինք բան մը ըսել էդոյեանի այս շարքին մասին, բայց ոչինչ ըսած ըլլալու տպաւորութեամբ կը գոցենք էջը: Անիկա այս տողերէն անդին կը մնայ դեռ, գեղեցկագոյն իր մէկ տողին առումով դեռ կը շարունակէ հետապնդել մեզ՝ Չեսսկացուած բառի պէս:

ՍՈՆԵՏՆԵՐԻ ՊՍԱԿ

PRAETERITO NOSTALGIA

1. Մինչև Կ'անցնի յիշողութեան ժամը հիմ,
(որն օրուայ մէջ մի կողմի է Թւում ինձ),
եւ դուրս կը գամ իմ օրերի գծերից,
կը մտնեմամ քա հեռաւոր սահմանին:

Իմ աչքերը կը հանդիպեն շէնքերին,
կը խուսափեմ գիտակցութեան ցանցերից,
բայց անցեալը պիտի գտնի նորից ինձ
եւ մտեցնի իմ սեփական պատկերին:

Սակայն հեռում ինչպէս ծաղիկ դու կ'ապրես,
իսկ ես միայն պիտի դառնամ արձագանգ
եւ օդի մէջ արձագանգեմ բառի պէս...

Ժամը սեղմում եւ դառնում է մի նոր կեանք:—
Նա մեր դէմքը պէտք է վերցնի, քանդակի
դարպասներին եւ պատերին քաղաքի:

2. Դարպասներին եւ պատերին քաղաքի, ուր քաղաքն ու քաղաքն է պատկերած, ով է շարժում յիշողութիւնն իմ լուծ, ով է պոկում փայտէ դիմակն իմ դէմքի:

Քիչերն իջնում, թանձրանում է կրկնակի եւ մի աստղ պահած քարէ ձեռքի տակ, քաղաքի մէջ յայտնում է մի քանակ, ինչպէս քաղաք՝ մակերեսին իր կեանքի:

Չեմքս նորից դէպի դիմակն է ձգում, բայց լուռ ու փակ աչքերի մէջ քանդակի եւ ինքս ինձ աւելի եմ մերկացնում:

(Լուսեան մէջ, որ պատկերն է իմ մտքի, որ հասում է մերկ օրերի փողոցում, եւ կը գրեմ, ինչպէս մահուր ապակի...):

3. Եւ կը գրեմ ինչպէս մահուր ապակի՝ երեք քաղաք (քաղաքն ուրիշ երեք էջ), որոնց խորում, ինչպէս ժամը օրուայ մէջ, ներկան իրեն անցեալի մէջ կը փակի:

Եւ քաղաքը կը շրջուի դէպի ետ, շէնքերն իսկայն ուրիշ ձեւեր կը ստանան, կը քարանայ իրերի հասն անսահման եւ կը ջնջուի յիշողութիւնն առաւելտ:

Եւ կը տեսնեմ մտեցումը քաղաքի, կը շօշափեմ արթնացումը քաղաքի, որը նորից անկացում կը հագնի:

Պահը կ'իջնի, կ'անշարժանայ ինձ վրայ — եւ կը տեսնեմ յուշերի մէջ իմ վերջին քաղաքն եւ քաղաքն առաջին:

4. Քաղաքն եւ քաղաքն առաջին խտանում են իմ օրերի անտառում, անառարկայ ստուերներն են թափանում եւ հանգչում են գիտակցութեան կամուրջին:

Ծառերն արագ քարձրանում են դէպի վեր, քաղաքի սիրտը մարդու եւ հողի, իսկ աչքերը որոնում են այլ ուրիշ եւ իրենց մէջ յայտնաբերում նոր իրեր:

Քաղաքը լուռ հաւաքում է հագուստն իր,
բայց նրա մէջ յայտնում են դու նորից,
իբրեւ մի նոր տարածութեան գծագիր:

Լուսօրեան մէջ յուրփուր չի բնում —
նա կը խօսի եւ պոկուելով նրանից՝
արձագանգը դեռ կը հնչի երկնում:

5. Արձագանգը դեռ կը հնչի երկնում
եւ շարժումը քո մարմնի եւ ձեռքերի
կը վերածուի մի անթափանց պատկերի
եւ կը փակուի իր սեփական գծերում:

Յուշը նորից կը կարցնի առարկան,
մայրամուտը կը խոստանայ նոր ժամեր,
ես կը տեսնեմ կասկածելի նշաններ,
որ իմ շուրջը կը յայտնուեն մի վայրկեան:

Երբ մօտենայ վերադարձի ժամը հին,
ես կը քուտեմ, ինչպէս ստուերն ստուերի,
քո անթափանց շարժումների նկարին:

Ձեռակացուած գիծը ինձ վախ կը բերի,
ես կը շքուեմ, բայց կը նայեմ նորից դուրս,
ես կը մնամ ինչպէս մի հին Դեղալուս:

6. Ես կը մնամ ինչպէս մի հին Դեղալուս
ծովի վրայ, որ ինձ դատարկ կը թուայ,
ոչ առագաստ եւ ոչ կղզի կ'երեւայ,
որ մի անգամ ինձ աշխարհից տարան դուրս:

Ակնբարբը կ'անցնի ինչպէս բեկուած լոյս,
ծովի վրայ մի նոր ստուեր կը քայլի,
ես կը տեսնեմ հորիզոնում ամայի
քո թռիչքը եւ քո անկումն, Իկարուս:

Այդպիսի պահ դեռ չի տուել ինձ աստուած,
իմ քայլերը ինձ տանում են միշտ այնտեղ,
ուր անձրեւներն ու բառերն են քափնուած:

Մի հին անձրեւ, որ տեղում է դեռ անյոյս,
բառեր, որոնք լուռ նայում են ինչ-որ տեղ
լուռ ու լճուած զանգի նման ջրասոյգ:

7. Լուռ ու լքուած զանգի նման ջրասոյգ,
որ հանգչում է յիշողութեան ջրերում,
դէմքի վրայ մի ստուեր է երերում
եւ բարձրանում ինչպէս հայեացք, ինչպէս բոյս:

Աչքերը լուռ հեռանում են դէպի ներս՝
սահմաններից տեսողութեան դաշտերի,
դէպի ներքին տարածութիւնն աչքերի,
ուր ապրելը աննկատ է օդի պէս:

Քփերն անում, փարթամանում են ահա,
երեխաներն իբրև հողի ժառանգներ,
այնտեղ ծնում, մեծանում են ակամայ:

Վերադարձի մեղեդին է հնչում դեռ: —
Դէմքի վրայ մի ստուեր է երերում
մամուռների եւ լուռութեան խորքերում:

8. Մամուռների եւ լուռութեան խորքերում
բարձրանում է, դանդաղ ելնում մի կզզի,
ինչպէս ձեռքը վաղուց լուծ երազի,
որ իրերի այն կողմից է երեւում:

Հորիզոնից նոր գոյներ են մեզ նայում,
նոր դէմքեր են մտնում փայտէ լուսնի տակ,
իջիր այնտեղ, իմ հին, նախկին հրեշտակ,
ք է տանջում ես օտար բառի սահմանում:

(Լռել, ինչպէս մի խոտ, մի թուփ կամ աւազ,
լռել, ինչպէս նաւաբեկեալ, կամ ինչպէս
արեւելեան քամու խորքում մի երազ...):

Այնտեղ չկան խօսքեր, յուշեր, չկայ վերջ —
(արցունքոտ օր) այնտեղ միայն կը գտնես
յիշողութիւնն իմ օրերի շարքի մէջ:

9. Յիշողութիւնն իմ օրերի շարքի մէջ,
իր սեփական սահմաններն է փնտռում դեռ,
հողի վրայ յայտնում են երազներ՝
ինչպէս թփերն անձրևի տակ սնամէջ:

Ժամն ինձ համար նոր պատկերներ չի բերի,
ինչպէս դիմակ, մարդու դէմքն է լուս բացում,
նրա ստուերն ահա իմ դէմ տարածում
եւ ծածկում է մակերեսներն իրերի:

Մարդը մերկ է տարածութեան քամու դէմ, —
ամէն շարժում, որ հանգչում է ինչ-որ տեղ,
նա բռնում է եւ դարձնում յարատեւ...

Ես նայում եմ նրա յտրէք, եւ այնտեղ
մի պատկեր է նորից իմ մէջ թափանցում:
(Օ՛, անցեալի անհատութեան զգացում):

10. (Օ՛, անցեալի անհատութեան զգացում),
խոտի նման բարձրանում ես դու կրկին, —
ես տեսնում եմ՝ իմ աչքերի եզերքին
ապագայի լսարաններն են առկայծում:

Իրերն ահա յայտնում են ու անցնում,
հասում են լուս, եւ դառնում եմ ես անձայն
փառաց մեռած մի թռչունի յուշարձան,
որ էլ երբեք իր թեւերը չի բացում:

Օրերից դուրս, ուր բառերն են թափառում,
դէմքը ահա վերածում է մի քարի —
աչքերից գուրկ, փակ հայեացքի անտառում...

Ապագայի սենեակի մէջ ամայի
մի ստուեր է կանգնած միայն, դա իր մէջ
քա անունի արտացոլումն է անվերջ:

11. Քո անունի արտացոլումն է անվերջ,
շէնքը, որը բարձրանում է նայն տեղում,
ժամը, որը ինձ է նորից հետում,
թռչունը, որ քայքայում է օդի մէջ:

Դու անցնում ես ինչպէս մի յուշ, կամ ինչպէս
օտար ծովում կորած մի նաւ, կամ մի ամպ,
տեսիլք, որը տանջում է մեզ լուսութեամբ,
հետապնդում չհասկացուած բառի պէս:

Եւ քաղաքն է բացում յանկարծ ինձ վրայ,
 եւ փախչում եմ, որոնում եմ նոր կայան —
 (տանիքներին չեմ վստահում եւ հիմա) :

(Կեանքն ինձ համար մի նշան է քո անուան,
 նա իմ մէջ է, իմ աչքերի կառոյցում,
 բայց ոչ մի ձեռք սիրտս հիմա չի ցնցում...):

12. Բայց ոչ մի ձեռք սիրտս հիմա չի ցնցում —
 իմ լուսնեան տարածութիւնն այս ժամին
 վերածնում, դառնում է իմ թշնամին
 եւ ինձ վրայ իր ձեռքերն է տարածում:

Ո՛վ է նորից իմ հորիզոնն արթնացնում...
 (քնած բառեր — եւ շարժում եմ դէպի ձեզ),
 լուռ եմ՝ ինչպէս ծառի մի ճիւղ, կամ ինչպէս
 ժամը, որ իր սահմաններից չի անցնում:

Կեանքը պահն է՝ տպուած դէմքի նկարին,
 ներքին թռչչոյցն անձրեւի մէջ եւ քամու,
 լուռ աշխարհի միաձուլումն իր բառին:

Եւ խօսում եմ՝ բառերն ինձնից պակելով,
 (շարժում՝ ընկած մակերեսին հայելու),
 եւ իմ խորքում քո աչքերը փակելով:

13. Եւ իմ խորքում քո աչքերը փակելով
 եւ քաղաքի պատկերներն եմ դիտում լուռ,
 նա յայտնում, կրկնում է ամէնուր
 նոր հագուստներ միշտ իր վրայ կրելով:

Մի՞թէ սա է վերջին սահմանն իմ օրուայ...
 վերջին խօստում, եւ իմ ձեռքը կը շարժեմ,
 դրսում թողած իր նկարներն անարժէք,
 ինձ մօտ կը գայ փողոցն ինչպէս երեխայ:

Կը պարզուեն շառափոյցներն իմ անկեան,
 եւ կը տեսնեմ օտար ծառեր՝ մտած քուն,
 բայց եւ նրանց կը նանաչեմ մի վայրկեան...

Սակայն այժմ իկարուսի թեւերով,
(նախկին երազ՝ յենուած օդի ապակունն)
ես անցնում եմ իմ օրերի վրայով...

14. Ես անցնում եմ իմ օրերի վրայով
անխօս, ինչպէս մթնում կորած մի անտառ,
ֆաղափի մէջ քո հին անունն ինչպէս բառ
բարձրանում է վտանգաւոր իր փայլով:

Տարածութիւնն իմ կողմերից ընդհատուած,
իմ գծերի գարգացումն է պարզապէս,
այստեղ ես դու, ես շարժում եմ դէպի քեզ,
իբրեւ մթնոլ տարածութեան մի հատուած:

Անա հեռուս կասկածելի մի նոր սպ...
նոր մօտեցում, անյայտ վայրեր, նոր անկում...
(կեանքը փոքր է ծիծեռնակի թևի չափ):

Մերկ ձեռքերով կը մօտենամ ֆաղափն,
լուս կը նստեմ նոր շէնքերի արանքում,
մինչեւ կ'անցնի յիշողութեան ժամը հին:

15. Մինչեւ կ'անցնի յիշողութեան ժամը հին,
դարպասներին եւ պատերին ֆաղափի
ես կը գրեմ, ինչպէս մաքուր ապակի՝
քո անունը եւ քո բառը առաջին:

Արձագանգը դեռ կը հնչի երկնքում,
ես կը մնամ ինչպէս մի հին Դեդալոս,
լուս ու լիւսած զանգի նման ջրասոյզ՝
մամուռների եւ լուսութեան խորքերում:

Յիշողութիւնն իմ օրերի շարքի մէջ
(Օ՛, անցեալի անհատութեան զգացում),
քո անունի արտացոլումն է անվերջ,

Բայց ոչ մի ձեռք սիրտս հիմա չի ցնցում
եւ իմ խորքում քո աչքերը փակելով
ես անցնում եմ իմ օրերի վրայով:

ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԵԱՆ

Մ. ԻՇԽԱՆ

Ս Պ Ա Ս Ո Ւ Մ

(Վ Ի Պ Ա Կ)

Յաջորդ օր, գրասենեակին մէջ, խօսակցութեան նիւթը պարանցիկ երեկոյթն էր: Ես շատ յաջող կը գտնէի զայն եւ չէի ծածկեր դռնունակութիւնս: Արշակ, բնդհակառակն, զժպտէ էր մնացած: ՎՄԻՂը ծախսին, — կ'ըսէր շուրջիններուն, — խանդավառութիւն չտեղծուեցաւ, կարծես պարտականութեան համար կը պարէինք: Սոնան կը զգուշանար կարծիք յայտնելէ: Մագերը թեք սանտրած, սովորական հաղուստին մէջ, նստած էր իր գրամեքենային առջեւ, լուրջ, զիտուկից, պարտաճանաչ: Բաւական մեծ տարրերութիւն կար երեկոյթին պարող-ցատկող աղջկան եւ ճակատը լրջութեամբ թուղթերու վրայ հակած սա գրագրութիւն միջեւ: Վերջն անձին երկու տարրեր երեսները», պիտի ըսէր վիպագիր մը:

Կէսօրուան դադարին երբ Սոնան տուն մեկնեցաւ, Արշակ քովս վազեց, օրուան թերթը աչքէ անցնելու պատրուակով նստաւ աթոռին, զլանիկ մը դրաւ շրթունքներուն եւ հակեցաւ լրագրին վրայ: Կը գզայի, թէ չէր կարգար: Ըսելիք ունէր, բայց չէր համարձակեր ըսել: Վերջապէս թերթը մէկ կողմ նետեց եւ դարձաւ ինծի.

- Երէկ ապրեցար, հա' :
- Ի՞նչ եղաւ օր:
- Ի՞նչ պիտի ըլլայ, Սոնան մեռաւ հետոյ պարելու համար:
- Ամէնուն հետ ալ պարեց աղջիկը:
- Այո', բայց քու հետոյ ուրիշ տեսակ էր:
- Ի՞նչ քու Աստուծոյ, բաներ մի' հնարեր:
- Ձէ', չէ', ես յիմար չեմ, ես ամէն բան կը տեսնեմ: Ատենէ մը ի վեր Սոնիկը մասնաւոր ուշադրութիւն կը դարձնէ կոր քեզի:

Ձեռքի լայն շարժում մը քրի' բողոքելու համար այս հաճելի «ամբաստանութեան» դէմ, բայց Արշակ խօսելու առիթ չձգեց ինծի եւ իսկոյն աւելցուց.

— Ձկարծես սակայն, թէ քու սեւ աչքերուդ համար է: Ան քու շուրջը կը գտնուայ, որպէսզի իմ նախանձս դրզուէ: Ի՞նչ վարպետորդի աղջիկ է ան...
 Իմ անձիս հանդէպ Սոնայի ունեցած սիրայի վերաբերումը մեկնաբանելու ինքնատիպ կերպ մըն էր ասիկա, որուն մասին շիտակը չէի մտածած մինչ այդ: Ետա ճշմարտանման չթուեցաւ ինծի: Արշակի տուած բացատրութիւնը, սակայն առարկութիւն չլրբի: Թո՞ղ այդպէս կարծէր բարեկամս եւ միտթարուէր: Ես բան չէի կորսնցնէր:

Ամբողջ միտքս կառչած մնաց այս իրողութեան: Ուրեմն ճիշդ էր, որ Սոնան ինձմով կը հետաքրքրուէր: Ուրեմն նոյն իրողութիւնը դիտած էր եւ բարեկամս, հաւանաբար դիտած էին նաեւ ուրիշներ: Ես առիկա տարտամօրէն կը զգայի եւ չէի ուզեր խոստովանիլ: Պարսպ բան է Արշակի յաւակնութիւնը: Սոնան ի՞նչ պէտք ունի շուրջս զտանալու՝ ուրիշի մը նախանձը զրգոելու համար: Նախ՝ ատանկ աղջիկ չէ՝ երկրորդ՝ Արշակ ծուղակը ինկած է արդէն եւ յաւակնալ ճիգեր թափելու կարիքը չկայ իրեն համար:

Ձէք կրնար երեւակայել, թէ ի՞նչ հրաշալի բան է նուաճող ըլլալու գիտակցութիւնը: Ազնկան մը սիրտը նուաճած ըլլալու խոր գոհունակութիւնը: Ասիկա ձեզի կը ներշնչէ ինքնազոհութիւն, հպարտութիւն եւ ապրելու հանոյքէն մաս մը: Ո՛չ ամբողջ հանոյքը, որովհետեւ դայն ունենալու համար անձնապէս պէտք է սիրահարած ըլլաս, ամբողջապէս սիրով գինովցած:

Օրէ օր ես աւելի կը համոզուէի, թէ Սոնան կը հետաքրքրուէր ինձմով: Տեսակ մը մասնաւոր ուշադրութեամբ շրջապատած էր զիս. ուշադրութիւն՝ որ շատ կը մօտենար զքոջական գուրգուրանքի: Եթէ տեսնէր, որ գլխու ցաւ ունիմ՝ իր ձեռքով կը բերէր անմիջապէս ասփիբրինի դեղահատ մը, կը ստիպէր, որ դայն առնեմ եւ քառորդ ժամ դադրեմ աշխատելէ: Նրբ հաստատութեան տնօրէնը Ղըային վիճակի մէջ տեսնէր, կը զգուշացնէր զիս, որպէսզի համապատասխան միջոցներ ձեռք առնեմ քովը մտած ատենս: Երբեմն տունէն համեղ կարկանդակ բերած կ'ըլլար եւ անպայման բաժին կը հանէր ինձի: Դուրսը, բնտանեկան յարկէն ներս ունեցած դժուարութիւններն ու դժգոհութիւններն անդամ ինձի կը խոստովանէր, սիրտը պարպելու ձեւով: Օրինակ, գիտէի, թէ հայրը շուկայի մարդ՝ յետամնաց գաղափարներու տէր մէկն էր, չափազանց խիստ՝ զաւակներուն հանդէպ. չէր ձգած, որ ինք ուսումը շարունակէր. հակառակ էր նաեւ պիւրոյթի մէջ աշխատելուն: Մայրը՝ մեզմ ու բարի խառնըւածքի տէր կ'լին մը՝ աղջկան գինակիցն էր գրեթէ ամէն հարցի մէջ:

Այս բոլոր հոգածութիւններն ու վստահութիւնները, որոնց արժանի կը դարձնէր զիս Սոնան, փոխադարձ գորովի քնական տըրամադրութիւն մը կը ստեղծէին իմ մէջ: Սիրահարութիւն: Երբեք՝ շատ հեռու էի այդպիսի հրդեհի մը բոցերէն: Մեղմ, շոյող, համելի ցօյք մըն էր հոգիիս վրայ ծագած զգացումը: Նւ յետոյ, չըմոռնանք, որ տարիներ շարունակ ես սէրը երեւակայած էի բոլորովին ուրիշ ձեւով, երազած էի անոր ամենակալ զօրութիւնն ու հոյակապ շքեղանքը, հետեւաբար կարելի բան չէր, որ ես զայն չփոթէի Սոնային եւ իմ միջեւ ստեղծուած սովորական, առտնին կոչուելու շափ ընթացիկ սո բարեկամութեան հետ:

Այսպէս տեսցին մեր յարաբերութիւնները բազմաթիւ ամիսներ, առանց ցնցումի, առանց յեղաշրջող նորութեան: Նս դարձեալ, առաջուան պէս, առանձնութեան պահերուս, կ'ոգեկոչէի լուսեղէն գէմքն ու սլացիկ հասակը երազներուս կապոյտ աղջկան:

Ես հաւատարիմ կը մնայի իմ մե՛ծ, իմ իսկական սիրոյս, սր պիտի դար...

Սոնայէն խնդրած էին, որ Հանդէսի մը իր մասնակցութիւնը բերէ՝ դաշնակով ընկերակցելով մեներդոյ օրիորդին: Հանդէսը տեղի պիտի ունենար քաղաքի ծայրամասը դոնուոզ օրահի մը մէջ: Նոյն խնդրանքը հեռախօսով բարեկամ մը փոխանցեց ինծի, որպէսզի Համոզեմ օրիորդը: Ես խոստացայ եւ նոյնիսկ թելադրեցի յայտագրին մէջ Սոնայի անունը դնել, խնդիրը կարգադրուած Համարելով: Վստահ էի, որ Սոնան զիս պիտի չմերժէր: Սակա՛ն մեծ եղաւ զարմանքս, երբ խնդիրը ներկայացուցի եւ կտրուկ կերպով մերժուեցայ:

— Ի՞նչ կայ որ տար մէջ, ինչո՞ւ նազ կ'ընես, դժա՛ նուազէ, Հանդէսին փայլը աւելցուր, — ըսի կէս-կատակ, կէս-վշտացած:

— Ձե՛մ կրնար, տեղը շատ հեռու է, գիշերը ուշի կը մնամ, — առարկեց Սոնան Համոզիչ մեղմութեամբ:

— Իրենք կը տանին եւ կը բերեն, դուն անհոգ եղիր:

— Ճիշդ հոն է Հարցը. անծանօթ երիտասարդներ, հեռուորթադ: Պայպային քնաարութիւնը զիտես: Ձե՛մ ուզեր տան մէջ նոր անհամութիւններու դուռ բանալ:

— Է՛, ի՞նչ պիտի ընենք հիմա. ես խօսք տուի վարչութեան ատենապետին...

Սոնա վայրկեան մը լռեց, ինծի նայեցաւ յանցաւորի պէս, ձեռքը անցուց մազերուն վրայէն եւ ըսաւ.

— Մէկ միջոց կայ. եթէ դուն անձնապէս գաս, տունէն առնես զիս եւ վերադարձնես, այն ատեն կ'ըլլայ: Մաման մեծ վստահութիւն ունի քու վրադ:

— Իսկ մամադ Հազիւ թէ պիտէ ի՛մ ով ըլլալու:

— Կը սխալիս, ան քեզ շատ լաւ կը ճանչնայ: Մեր տան մէջ յաճախ քու խօսքդ ըրած եմ:

Ընդունեցի սիրով եւ երկու օր ետք, գիշերը, ներկայացայ Սոնայինց տունը: Մայրն էր, որ բացաւ դուռը եւ զիս առաջնորդեց հիւրանոց: Առաջին անգամ կը մանէի այդ տունը եւ կը տեսնէի այդ կիներ: Անմիջական եւ յստակ տպաւորութիւն մը չկրցայ ունենալ: Հիւրանոցին կահաւորումը քիչ մը շատ ցուցական երեւոյթ կը պարզէր. զանգուածեղ թիկնաթոռներ, փարթամ ջահեր եւ տեսակաւոր մոխրամաններ: Ես՝ որ պարզութիւնը սիրած եմ միշտ, խորթ միջազայրէ մը ներս մտնողի նեղութիւնը զգացի առաջին րոպէին: Տանտիկինը, ընդհակառակն, զիւրաւարող ու մտերմական բան մը ունէր իր վրայ: Սոնային առաջին տպաւորութիւնը, բնականաբար քիչ մը աւելի հինցած, սպիտակի զարնող մազերով, նոյնպէս կարճահասակ ու լեցունկեկ: Փպիտը եւ աչքերը ազնկան հարազատ արտայայտութիւնը ունէին: Ձիս ընդունեց պարզութեամբ, հին ծանօթի մը պէս:

— Հրամմեցէք, պարոն Արամ, շատ ուրախ եղայ ձեզ տեսնելով, մենք ձեզի ծանօթ ենք արդէն, Սոնա միշտ ձեր մասին կը խօսի: Երտակր, շատ շնորհակալ ենք, որ ձեր ձեռքէն եկած օգնութիւնը չէք ինչայր Սոնայիս, պիւրոյին մէջ. շատ ազնիւ էք: Աղջիկս շատ բան կը պարտի ձեզի...

— Բան մը չէ, տիկին, մեր պարտականութիւնն է...

— Ո՛ւշ, ինչո՞ւ ատանկ կ'ըսէք, ամէն մարդ նոյն պնդումներու
նը չ'ունենար: Երեսակը, երբ Սոնաս, Հակոբակ հօրը կամօքին, ոտք
կոխեց, որ պիտի աշխատի, սիրտս դողի մէջ էր... Աղջիկ դաւակ է,
անփորձ, հրեշտակի պէս անմեղ... Հետը աշխատողներուն ի՛նչ ըլ-
լալը շեռ գիտեր. տասը տեսակ փորձանք կրնար վալ գլխուն: Հիմա
սիրտս հանդարտ է, քանի որ ձեզի պէս պատուաւոր հայ երիտասար-
դի մը ձեռքին տակ կը գործէ:

— Ենորհակալ եմ...

— Առջի օր, երբ յայտնեց, թէ գիշերը դուրս պիտի ելլէ,
հանդէսի պիտի երթայ, չիտակը՝ հակառակեցայ: Հայրը, դիտէք,
խիստ մարդ է: Ես ալ չեմ ուզեր, որ մանր խնդիրներու համար տու-
ներնու հանդարտութիւնը խանգարուի: Բայց երբ ձեր անունը աը-
ւաւ, այլեւս չէի կրնար մերժել: Դուք էր եղբայրը կը համարուիք:

— Ենորհակալ եմ...

Այս մեծարանքները երեւի դեռ բաւական երկար պիտի տե-
ւէին, եթէ Սոնան քոյի սենեակէն դուրս չդար: Եունչ մը քաշեցի եւ
ոտքի ելայ: Սոնան հագուած էր արդէն եւ մենք թաքսի մը առնելով
ուղղակի հանդիսասրահ դիմեցինք:

Վերադարձին՝ կէս պիշիւր էր: Գիտէք մեր հանդէսները, յայ-
տարարուած ժամանակէն որքա՞ն ուշ կը սկսին, որքա՞ն արտասա-
նութիւններ իրարու կը յաջորդեն եւ բանախօսներն ալ որքա՞ն ա-
զատ են իրենց ուղածին շփի խօսելու: Այնպէս որ, երբ ինքնաշարժ
ճարեցինք եւ տուն հասանք, կէս պիշիւրը կ'անցնէր արդէն:

— Ես՞ ուշացանք, ձերիները պիտի մտահոգուին, — ըսի
ճամբան:

— Հոգ չէ, — պատասխանեց ուսերը թօթուելով, — հայրս
յոզնած եւ քնացած կ'ըլլայ, մայրս ալ՝ լսեցիք ի՛նչ ըսաւ. դուն իմ
եղբայրս կը համարուիս:

Չարածճի հեղնանք մըն էր Սոնայի կողմէ մօրը խօսքերուն
այս կրկնութիւնը, թէ լուրջ զգացումի մը արտայայտութիւնը:
Մութ էր, երեսը յստակ չէի տեսներ՝ դատում մը ընելու համար:

Սոնայինք բնակարանը կը գտնուէր շէնքի մը շորրօղ յարկը,
ուր պիտի բարձրանայինք երկար ու ոլորազտոյտ սանդուխներէ:

— Աս ի՛նչ սոսկալի խաւար է, աստիճան չեմ տեսներ կոր, —
ըսաւ Սոնան կողքիս սեղմուելով:

— Մի՛ վախնար, ձեռքդ տուր ինծի:

Ձեռքը ձեռքիս մէջ՝ մենք սկսանք բարձրանալ սանդուխներէն:
Այդպիսի վերհիւք եւ երրեք չեմ ունեցած կեանքիս ընթացքին: Մի-
այն մեր քայլերը չէ, որ կը բարձրանային, այլ ամէն ինչ կը բարձ-
րանար մեր մէջ եւ մեր շուրջ, հետզհետէ աւելի հեշտալի ու անմար-
մին ամբարձումով մը: Սոնայի թաթիկէն փոխանցուող քաղցր ջեր-
մութիւնը կը թափանցէր երակներէս ներս, կը հասնէր սրտիս, կը
հասնէր ուղեղիս վերնախաւերը եւ կը վարակէր ամբողջ մարմինս:
Մե՛ղք, որ Սոնան Սոնան է եւ ոչ թէ հրազներու խարտեալ գեղու-
հին, կը խորհէի տարտամօրէն, մե՛ղք, որ սպասումիս ճակատագրա-
կան հանգիղումը չէ ասիկա, այլապէս հրաշքը կատարուած պիտի
ըլլար եւ մեր սիրովէպը՝ սկսած: Այսուհանդերձ, զգացած դիմովու-
թիւնս այնքան մեծ էր, որ կ'ուզէի պահին յաւերժացումը: Կը մազ-
թէի, որ սանդուխները երկարէին անլերջ եւ մենք ձեռք ձեռքի,
կողք կողքի բարձրանայինք շարունակ:

Կը խոստովանիմ, որ իմ երազներուս տարեգրութեանց մէջ
 սանդխազրուիներու մութն ու ամայութիւնը չէին նախաստեղծած :
 Կը խոստովանիմ, որ միջառայրը շատ բանաստեղծական չէր : Բայց
 պատահեցաւ ա՛յն՝ ինչ որ անխուսափելիօրէն կը պատահի երիտա-
 սարդներու՝ նման վերելքներու ասեմն, նման բարձունքներու կատա-
 րին :

Երբ հոսանք վերջին յարկը եւ երբ Սոնան ձեռքը արկէս դուրս
 քաշելու թոյլ փորձ մը կատարեց, ես հակադրեցի եւ ան ինկաւ
 կուրծքիս վրայ՝ մանուկի մը ինքնալքումով : Այնուհետեւ դիչերա-
 յին խաւարը լեցուեցաւ տաղերու լոյսով եւ յամենիկներու բոլորով :
 Թեւերս անոր մարմնին շուրջն էին, եւ շրթունքներս՝ անոր դէմքի
 բոլոր ելեւէջներուն վրայ : Զգալու համար, որ երազ չէր այս ամէնը,
 հաստատելու համար իրականութեան բազմաբանի զարկերը համա-
 տարած լուսութեան խորին, շա՛տ մեղմ ձայնով երբեմն կը մրմնջէի .
 «Սոնա՛, ա՛յն Սոնա», ապա շրթունքներս կրկին կը գոցուէին անոր
 թարթիչներուն, այտերուն եւ բերնին վրայ : Սոնան լուս էր, սար-
 սըռուն, բայց տաք, տարօրինակ կերպով եւ հեշտախօսէն տաք :
 Որքա՛ն ասեմն մնացինք այդպէս զիրկընդիսան, քանի՛ անգամ մատ-
 ներս մխրճուեցան անոր մազերուն մէջ եւ շրթներս դասն իր շըթ-
 թունքները՝ զժուար է ըսել : Ժամանակը դադարած էր քայելէ եւ դի-
 շերուան բովանդակ կեանքը կը բարախէր միայն մեզմով :

* *

Առաւօտեան սովորական ժամուն, սովորականին պէս Սոնան
 իր զբամեքենային առջեւն էր : Դէմքը ամբողջած էր զիւ մը : Զիս
 տեսնելուն՝ ժպտեցաւ ամօթխած եւ խորհրդաւոր ժպտով մը եւ աշ-
 քերը վար առաւ կրկին : Հանդարտ էր ու քնական, իբր թէ ոչինչ
 պատահած ըլլար : Ես երգելու, կատակելու զեղուն սրամազրութեան
 մէջ էի : Կարեւոր, կենսական բան մը փոխուած էր կարծես զիս շըթ-
 ջապատող աշխարհին մէջ : Արեգակը աւելի պայծառ կը շողար եւ
 մարդոց դէմքերը աւելի բարի, աւելի համակրելի երեւոյթ մը ունէին :

— Նայէ՛, — ըսաւ Սոնան, հեռուէն կարմիր ծաղիկ մը ցոյց
 տալով ինծի, — նայէ ի՛նչ գեղեցիկ մեխակ է . . .

— Ո՞վ բերաւ, — հարցուցի՝ բաժնելով իր հիացումը, — ի-
 րա՛ւ գեղեցիկ է :

— Արշակը բերեր, աստուն սեղանիս վրայ դրեր է : Ուրիշ ո՞վ
 ասանկ բաներ կրնայ մտածել . . .

— Կնամեծար, բան դիտցող տղայ է :

Ժպտեցանք իրարու՝ անհո՛ւն ներոգամութեամբ : Իրար լուս
 կը հասկնայինք հիմա : Նոյն դաղանիքը մեր սրտերը կը լեցնէր այն-
 պիսի հարստութեամբ մը, որմէ վեհանձնօրէն կրնայինք փշրանք-
 ներ նետել Արշակին եւ բոլոր աղքատներուն :

Արշակ ջովի դրան մէջ կեցած մեր խօսակցութեան կը հետեւէր
 երանեալ մարդու մը զոհունակութեամբ : Խեղճ տղայ, կ'ըսէի մըտ-
 քէս, եթէ դիտնա՛ր դիտուն եկածը . . .

— Ասկէ ետք փուշ անդամ պիտի չըրերեմ, — զոչեց յանկարծ
 բարեկամս դրան մէջէն :

— Ինչո՞ւ, ի՞նչ պատահեցաւ, ինչո՞ւ բարեկացի ես, — հար-
 ցուցի զարմացած :

— Ես այսքան յոգնիմ, զոհուիմ, հոգամ եւ օրիորդը չըսարեհածի հետս մէկ անգամ դուրս ելլել:

— Կու գամ, պիտի գամ, որոշեցէք օրը եւ երեքով սիննեմ մը երթանք, — բացաւունչեց Սոնա յորդուն խանդավառութեամբ:

Արշակի աչքերը փայլեցան: Պիտի նախընտրէր անշուշտ երկուքով դուրս ելլել Սոնային հետ, բայց այսքանն ալ յաղթանակ նշանակեց: Գացինք եւ դիտեցինք սիրային յուզիչ Ֆիլմ մը, Սոնան մեր երկուքին մէջ առած: Ամէն անգամ, որ Արշակ աղջկան ականջն ի վար ծռած խորհրդածութիւն մը կը փորձէր, Սոնա ձեռքս կը բռնէր ու կը սեղմէր ուսիս: Այնուհետեւ Սոնա Արշակին հանդէպ աւելի սիրայիք եւ ընկերական դիրք օրդեզրեց, քան առաջ:

Նախանձը անծանօթ զգացում մըն էր հողիին համար:

Օրէ օր, շարաթէ շարաթ երազը նահանջեց իրականութեան շրջանը: Սոնան գրուեց ամպերուն մէջ քնակող կապոյտ աղջկան տեղը, հակառակ իր ծանր մարմնին, սեւ մազերուն եւ սլացքէ զուրկ հասակին: Ան, միւսը, տարիներու իմ հեղ, բարի ու հաստատրիմ սիրուհին հեռացաւ կամացուկ, անադիուկ, առանց թատերական ելույթներու: Եւ ես դաշտեցայ այլեւս մտածելէ, թէ ինչո՞ւ այսպէս եղաւ, ինչո՞ւ իրականութիւնը դաւաճանեց երազին եւ չհաջող տար մարմինը: Ռ՛ւշ էր աս մտաին մտածելու համար: Ձիգերս եւ ըզգայարտիներս ոգոգուած էին Սոնայի ընծայած արբեցութեամբ: Անոր ներկայութիւնը կը փնտռէի ամէն ժամ եւ անկէ հետո միտակ ու դժբախտ կը զգայի ինքզինքս:

Աստիճանաբար իր վրայ փոխադրեցի այն բոլոր գուրգուրանքները, դպրոցականն ու սիրազեղումները, զորս ժամանակին կը շուայէի երազին աղջկան: Սոնան շրջան էր, վերացած, գիծովցած՝ զոպուած զպոստիկ այսքան յորդ ժայթքին առջեւ: Կը զգայի, որ դիմու դատու կ'ունենար եւ կը դժուարանար իմ հեռովս շնչել՝ սիրոյ այս յանկարծական ալեկոծութեան մէջ: Ան երբեք չէր ականկալեր անշուշտ, թէ ինձի պէս լուռ եւ ինքնամփոփ սղու մը մէջ այսքան խելայեղ սիրահար մը կրնար ապրել:

Սիրահար: Ա՞յս էր ուրեմն իրական սէրը. ամպերէն վար, գետնին վրայ հաստատ քայլերով առաջացող բո՛ւն սէրը: Ձեմ գետներ, չէի ուզեր գրտնալ: Լիացած էի եւ երջանիկ: Հարցումներ տալու եւ վերլուծումներ ընելու ժամանակը չէր:

Հետագայ ամիսներու մեր կեանքը սիրոյ հեռազնաց եւ արկածային ճամբուն վրայ անդադրում վազք մը եղաւ: Հեւասպառ վազք մը, որ հանդիստ շունեցաւ եւ յոգնութիւն չճանչցաւ: Ես էի հետս միտաին խելացնոր այդ վազքին մէջ Սոնան քաշող տանողը: Անսահման կարօտով ես տարինե՛ր սպասեր էի այս արշաւին, որ հիմա Լրբեմն սլացքի կը վերածուէր, երբեմն գահավէժ սահանքի, բայց որ իր արագութիւնը կը պահէր միշտ:

Փոքրիկ բռնատէր մըն էի: Սոնան յուզիչ խոնարհութեամբ կ'ենթարկուէր բոլոր քմայքներուս: Իմ ուզած հագուստս կը հագուէր, իմ նախընտրած ձեւովս կը յարդարէր մազերը, իմ թերազրած գիրքերս կը կարդար, իմ գիտակցութեամբս կը շփէր իր ընթացիկ գործերուն մէջ անգամ: Կը անսնելի, թէ ամբողջական այս ենթակայութիւնը հաճոյք մըն էր Սոնային համար: Ամբողջ օրը, զրասննետ-

կին մէջ, տն աչքին գլմացն էր արգէն ու ես տէրն էի անոր ամէն մէկ շարժումին: Աշխատած պահուն, մեքենան կը զաղրեցնէր յաճախ եւ խորհրդաւոր ժպտալ մը հետ սրտապին նայուածք մը կը նետէր ինծի: Ատիկա մեր անձայն բարբառն էր, բազմաբովանդակ ու խորունկ իմաստով լի: Ատիկա տոնուազն կը նշանակէր. «Հոգի՛ս, կը սիրեմ քեզ...»: Ես կը պատասխանէի ծանր, արքայական նայուածքով մը, որ դո՛ս էի կացուցիչն եւ յետոյ կրկին աշխատանքը կը մտնէր իր հունին մէջ: Սակայն օրուան արեւակալութիւնը շէր զոհացներ զիս: Կ'ուզէի, որ իմօ բլայսին նաեւ Սոնայի միւս բոլոր ժամերը, գործէն ետք, տան մէջ, առանձին կամ ընտանիքին հետ. մինչեւ անգամ կ'ուզէի գիտնալ քնացած միջոցին անոր տեսած հրազները: Սովորութիւն էինք ըրած առատները հինգ-տասը վայրկեան կանուխ դրասենեակ գալու: Գործի սկսելէ առաջ անփոխարինելի հաճոյք էր նստիլ դէմ դէմի եւ շաղակրատել: Վա՛յ որ Սոնան քիչ մը ուշանար. բարկացաւս դէմք մը կ'առնէի եւ ամենախիստ թոնով կը յանդիմանէի ղինք:

— Ինչո՞ւ ուշացար...

Սոնա զոգ ելած՝ կը շփոթէր, կը կարմրէր եւ կցկտոր չքմեղանքներ կը թոթովէր.

— Ներողութիւն... մայրս... ստիպուեցայ թէյը ես պատրաստել... մաման քիչ մը անհանգիստ է...

Ես չէի ուզեր ներել՝ առաւօտեան մեզի պատկանող թանկահարկ վայրկանները ուրիշին զոհելու այս սճիբը: Սոնան ներքնապէս դո՛ս էր անշուշտ իմ անհամբերութիւնս տեսնելով եւ սիրտս առնելու բազմաթիւ հնարքներ ի դործ կը դնէր, մինչեւ որ ներողամտութեան ժպտը փայլէր դէմքիս վրայ:

Չափազանց տարօրինակ կը թուէր ինծի կեանքը, երբ կը մըտածէի, թէ սա աղջիկը աւելի քան տարի մը դէմս նստաւ, հետո աշխատեցաւ եւ ես ամբողջ տարի մը անտարբեր դիտեցի զինք, աւելի իր թերիները տեսայ, քան առաւելութիւնները, առարկայական դատողութեամբ վերլուծեցի զինք այնպէս՝ ինչպէս սովորութիւն ունէի ընելու ոեւէ սերիչ աղջկայ մը պարագային, իսկ այսօր իրժով կը լեցնէի կեանքս, ազատօրէն հաշուէ առնելով իւրաքանչիւր կորսուող վայրկեան: Ինչո՞ւ, ի՞նչ սլատահեցաւ:

Ես կը հաւատայի նախատեսմանեալ էակին, մինչ անոր տեղը գրաւեց այս պատահական անցորդը: Ես կը հաւատայի փայլակի պէս իջնող սիրոյ կրակին, մինչ աննշան կայծ մը ժամանուկի շունչին առջեւ զաղտնօրէն անեցաւ եւ լեցուց հոգիիս ակութը:

**

Սէրը բոլոր գաղտնիքներուն մէջ այն դազանիքն է, որ ամէնէն առաջ կը յայտնուի: Աւելի ճիշդ՝ ինքզինք կը մատնէ ծածկուած վարդի մը պէս, որուն բոյրը կը տարածուի մթնոլորտին մէջ: Որքան ալ նախագուշտութիւններ ձեռք առնէինք, մեր կապը չէր կրնար ծածուկ մնալ պաշտօնատան աշխատանքներու աչքին: Ամէնէն սուր հոտառութիւնը Արշակին կը պատկանէր անշուշտ, որովհետեւ բաբակի մը քիթով կը հետեւէր մեզի:

Ես ծանր բախումներ կը նախատեսէի Արշակին հետ, բայց ո՞վ

զարմանք, որ օրի վրայ աւելի սիրալիր դարձաւ հետս : Միամտութիւն պիտի ըլլար անոր այս ընթացքը վեհանձնութեամբ քաջատրել : Հաւանականը այն է, որ ժամանակաւոր մոլորանք կը նկատէր Սոնայի վերաբերումը եւ կը շարունակէր վստահ մնալ իր վերջնական յաղթանակին : Երբեք չզարեցաւ Սոնան դարպասելէ՝ մեծարանքի իւրայատուկ ձեւերով : Այս մարդին մէջ Արշակի ունեցած ճկունութիւնն ու դիւրութիւնները եւ երազել իսկ չէի կրնար : Եթէ, օրինակ, Սոնան նոր փէշ մը կամ պլուզ մը հաղած ըլլար, բարեկամս կը նշմարէր իսկոյն, կը կենար դիմացը եւ մեծ հանդիսաւորութեամբ կը յայտարարէր .

— Գարնան պէս ծաղկած ես այսօր, հրաշալի է . . .

Աննկատ չէր ձգէր անոր մագերու յարդարանքին մէջ եղած փոփոխութիւնն անդամ : Ինկած թաշկինակ մը կամ սեղանին վրայ մոռցուած պայուսակը վերցնելու եւ շնորհալի շարժումով մը Սոնային մատուցանելու քաղաքավարական կերպերուն մէջ մէկ հատիկ էր Արշակ : Եւ ինչ որ զարմանալի կը թուէր ինծի՝ տեսարար բարձր արամազրութեան մէջ կը գտնէի զինք : Ձախողանքները, մերժումները չէին ազդեր վրան : Ետն կատակարան տղան էր միշտ : Իմ պարբերական խոժոռումներուս ան կը հակադրէր անայլալ պուարթութիւն մը, որ զինաթափ կ'ընէր դիմացինը եւ աստեն-աստեն կը սպառնար վտանգաւոր դառնալ :

Հանրային կարծիքին դէմ պաշտպանուելու համար ես ու Սոնան համակերպած էինք, որ կարգ մը տեղեր Արշակ հետերնիս ըլլայ : Երեք հոգին ժողովուրդի աչքին կ'արդարանան միշտ, ո՛րք ալ գտնուին : Արշակ անզուգական բնկերակից մ'ըն էր պտոյտներու ընթացքին եւ նման ամէն մէկ հրաւէր կ'ընդունէր սիրով, իբրեւ բախտաւորութիւն : Պտոյտի համար մեր նախընտրած վայրն էր ծովազերհայ հեռաւոր սրճարան մը, ուր կր նստէինք երեքով : Արշակ կը ճըռտողէր շարունակ, իսկ ես ու Սոնան կը դիտէինք ծովը, լսու, խորատոյզ, երբեմն ծովու անհուն կապոյտով ողողուած մեր նայուածքները միախառնելով իբրբու :

Մեկնումի պահուն, ասպետական սիրահարի իր դերը ամբողջացնելու համար բարեկամս կը ցատկէր տեղէն, Սոնայի վերարկուն կը բռնէր, որ հազուի եւ ճամբայ կը բանար անոր :

— Ես'տ ազնիւ ես, շա՛տ շնորհակալ եմ, — կ'ըսէր Սոնա ժպտելով :

— Աղնութիւնը ի՞նչ կ'արժէ այս աշխարհիս երեսին, — կը հարաշէր Արշակ :

Ի հարկէ, այս բոլորին մէջ կատակը մեծ տեղ կը բռնէր, բայց այդ կատակներուն տակ անկարելի էր չզգալ լուրջ զգացումի մը խուլ որոտը :

Մեր առանձնութեան պահերը հազուադիւտ էին : Առիթ եւ յարմարութիւններ շունչէնք գլուխ-գլխի մնալու եւ այս զրկանքը առաւելապէս կը տատապեցնէր զիս : Սոնան զո՛հ էր երբ միասին էինք, հոգ չէ թէ ուրիշներու ներկայութեան, բազմութեան մէջ : Այսքանը չէր բաւարարէր այլեւս յարաճուն իմ կարօտս, որ երկամբմայ զրկանքի մը հատուցումը կը պահանջէր հիմա կեանքէն : Անծանօթ փողոցներու մէջ կամ հեռաւոր սրճարանի մը մէկ անկիւնը քանի մը փախուստներ որքան ուլ գրաւէլ ըլլային իբրեւ վտանգ

գալից արկածախնդրութիւն, չէին կրնար կրկնուիլ շարունակ: Սոնան շատ կը վախնար հետեւանքներէն, շար շեղունքէն եւ հօրը ձեռք առնելիք միջոցներէն: Սակայն սէրը հնարամիտ կը դարձնէ աղջիկները: Շատ չանցած՝ ան սքանչելի գաղափարը յղացաւ հետո միասին սղագրական վարժութիւններ կատարելու իրենց տան մէջ: Այնուհետեւ շարաթը մէկ-երկու անգամ ազատ մուտք ունեցաւ այն տունէն ներս, ուր կը ձգտէին բոլոր տենչանքներս: Կը նստէինք հիւրանոցը, փոքրիկ սեղանի մը շուրջ կամ տիւանին վրայ եւ իբրեւ թէ կ'աշխատէինք միասին: Մայրը ուրախ էր, որ աղջիկը բան կը սորվի, ատալ կ'երթայ ամենայն ապահովութեան մէջ, ընտանեկան յարկին տակ, իր աշարով հսկողութեան ներքեւ: Արդարեւ, ան կը ջանար, որ բոլորովին առանձին չմնանք եւ իր ներկայութեամբ կը պատուէր մեզ: Հազիւ թէ քանի մը կարճ վայրկեաններ կ'ունենայի համարյոք մը զողնայու համար, երբ տիկինը խոհանոց կ'երթար եւ սուրճ կը պատրաստէր մեզի: Այդ պահերուն ոչ մէկ բան այնքան աստիճ կը թուէր ինձի, որքան խաթունիկ այդ կինը՝ իր ձեռքի յաւիտենական հիւսքով:

Մայրական իր սուր հոսանքով իր զգար անշուշտ, թէ բաներ մը կը դառնան իմ եւ աղջկանը միջեւ եւ անձանօթ վտանգը կանխող միջոցներ ձեռք կ'առնէր: Յոյց տուած ջերմ վերաբերումէն եւ կատարած հիւրասիրութիւններէն դատելով՝ շատ լաւ տրամադրութիւններ ունէր ինձի հանդէպ: Բայց կ'ուղէր, որ ես ու Սոնան նստինք իր աջին տակ եւ գողտիք չունենանք:

Մոնայի հայրը, քաղաքացի մարդ, կարծուածին չափ ալ խիստ չէր: Քանի մը Հանդիպումներ բաւ եղան, որ բարեկամանանք: «Ընտանիքի դատան հայր» անունը շահած էր աւելի իր երեւութական պտոթկումներով, քան իրական անգիտութեամբ: Կը սիրէր խոստատարութեան գործածել, ծանր որակումներով խորտնել ներկայ եւրոպայականութեան բարբերը եւ մեծազորը սպասակիքներ կատարել:

— Եթէ իմ աղջիկս ալ անանկ ընթացք մը ունենայ, Էէօր դանակով կը մորթեմ, ողջ-ողջ կ'այրեմ...

Շատ ժամանակի պէտք չունեցայ հաստատելու, թէ այդ մարդը ո՛չ միայն անընդունակ էր իր աղջիկը «մորթելու», այլեւ կը պաշտէր զայն՝ շարտադրութեամբ ու խորունկ սիրով մը: Իր յարուցած ազդուէն ու սպառնալից կոտորները այդ գրագրութիւն այլափոխ պտոթկումներն էին պարզապէս: Կը վախնար այն բոլոր շրջանակներէն, ուր մուտք չունէր ինք եւ այն բոլոր անձերէն, որոնք ծանօթ չէին իրեն: Կը կարծէր, թէ իր մէկ հատիկ աղջիկը այդ վայրերուն մէջ եւ այդ անձերուն հետ ստոյգ կորստեան պիտի դիմէ եւ ինք անկարող պիտի ըլլայ զայն պաշտպանելու: Այս իմաստով եւ վտանգ մը չէր: Ինձմէ ինչո՞ւ պիտի վախնար. կը տեսնէր զիս եւ կը հաստատէր, թէ բազմաթիւ հարցերու մէջ իրեն պէս մտածող հայ երիտասարդ մըն էի, կը ծանօթանար գաղափարներուս, զործիս մանրամասնութեանց եւ կը գնահատէր կարողութիւններս:

Ինձի այնպէս կը թուէր, թէ որոշ ատեն ետք, լուռ համաձայնութեամբ մը, Սոնայի հայրն ու մայրը սկսած էին քայլ առ քայլ նահանջել իմ նուանդական ձգտումներուս առջեւ:

Մեր սիրոյ ոսկեղարր անցու Լիբանանի նկարչազեղ գիւղե-
րէն մէկուն մէջ: Իրականութիւնը քիչ անգամ կը հաւասարի երազին
եւ այդ հագուազիւտ սպարազաներէն մէկն ալ մեր կեանքը եղաւ,
հոգ չէ թէ կարճ շրջանի մը համար:

Իմ երեւակայութեանս պատաստին վրայ գտնուող բոլոր գոյ-
ները հանդէս եկան մեր այս հովուերգութեան մէջ, որուն երկու
վիպական հերոսներն էինք Սոնան ու ես: Գրքերը՝ իրենց հոգեգծայլ
նկարագրութիւններով, Ֆիլմերը՝ իրենց սակեւոյ դրուագներով, ե-
րազը՝ իր հրաշագան բռնկումներով կը տփուցեն մեր օրերու շքեղ
գնացքին սուջեւ:

Գիւղը ունէր նման մեծ զգացում մը շրջանակելու բոլոր
տուեսայնէրը: — շոնիի պուրակներ, հովերուն դէմ խլլացող վերա-
սլաց բարտիներ, հոսուն ջուրեր, ծանրախոհ ժայռեր, ձորեր ու ծը-
մակներ: Կարծես ստեղծուած ըլլար սպաստան տալու համար սիրող
սրտերու անկաշկանդ թռիչքին:

Այս հոյակապ շրջապատին մէջ էս իմ դերիս ըմբռնումը ունէի
ներշնչելու արուեստաղէտի մը նման: Ամէն ինչ վեհ ու զեղեցիկ կը
տեսնէի եւ կ'ուզէի, որ այդ վեհութեան մէջ մեր սէրը աստուածային
եւ անկորնելի շունչի մը վերածուէր ճիշդ այնպէս՝ ինչպէս երա-
զած էի տարիներ: Ձեռ գիտեր, Սոնան ալ ունէ՞ր իր ստոնձնած դե-
րին հանդէպ այս քայտիկ ըմբռնումը: Յամենայնդէպս բեմը լեց-
ած էր մեր երկուքին ներկայութեամբ եւ կը թուէր, թէ այդպէս ալ
պիտի մնար յաւիտեան:

Երեք ամիսներ ունէինք այդ գիւղի կախարդանքին անձնատուր
ըլլալու: Մեր ընտանիքները հոն բնակարաններ վարձած էին ամբողջ
ամառուան համար: Պարզ զուգարիպութեան արդիւնք չէր հարկաւ
նոյն գիւղի ընտանիքներ Սոնայի ծնողքին եւ մերիներուն կողմէ:
Նախապէս մենք ծրագիրը պատրաստած էինք արդէն եւ վարպետ
ուղղամարութեամբ մը պարտադրած մեր ընտանիքներուն: Գրասեւ-
եակի աշխատանքները, ամառնային կանոնադրութեան համաձայն,
կը դադարէին ժամը երկուքին եւ մենք իսկոյն գիւղ կը բարձրանա-
լինք անհամբեր, կարօտաբարձ, երջանիկ: Թեթեւ նախրնթրիքէ մը
եսք, իրար կը վերադռնէինք հսկայ սօսիի մը տակ կամ կարկաշտուն
առուի մը եզերքը:

Սոնա կու գոր՝ լայնեզր յարդէ գլխարկ մը գլխուն, բաց կա-
պոյտ կամ ծաղկաւոր շրջագգեստի մը մէջ, մազերը արձակ, դէմքը
խնկով ու սիրով լուսուոր: Կը նեւուէր բազուկներու մէջ եւ ամէն
անգամ ինծի կը թուէր, թէ թեւերս կը լեցուէին ամբան բոլոր միտ-
զերու բերքով, հոյին գգլիւն բոյրով եւ արեգակին կենսայորդ ջեր-
մութեամբ: Ի՞նչ հրաշալի բան էր կեանքը: Եթէ ինծի հարցնէին,
թէ ի՞նչ է կեանքը, անվարան պիտի պատասխանէի. «Կեանքը սէր
է»: Ինչո՞ւ արդեօք այնքա՞ն մեծ փիլիսոփաներ անճրկած էին դա-
նանցած սէրը: Այլապէս՝ ուրիշ անկատար ու անիմաստ պատասխան-
ներ որոնելու պէտք պիտի չունենային բնաւ:

Եթէ ըսեմ, թէ գիւղին ծեր կողմները մեզի հետ կ'երիտա-
սարգանային կարծես, խոժոռաղէմ ժայռերու քարեղէն սիրտը կը

բարախէր մեր զգացումներուն հրայրքով, թուշուններն ու հոյն ան-
գամ մեր սէրը կ'ապրէին, վահնամ՝ բանաստեղծութիւն ըրած ըլ-
լամ եւ քմծիծաղով ընդունուին խօսքերու: Սակայն բացարձակ ճշ-
մարտութիւն էր այդ: Գիւղը իր հիմնուելէն ի վեր երբեք այդքան
պարծառ եւ այդքան հմայիչ չէր եղած: Կարծես մոզական գաւա-
ղան մը հպած էր ամէն բանի եւ հրաշագոյտած:

Յաճախ, ընկողմանած ծառի մը տակ, խոտերուն վրայ, Սո-
նան եւ ես երկարօրէն կը մնայինք լուռ, դիտելով դիմացի կանաչա-
խիտ լեռները, որոնց վրայ երեկոյեան արեգակը կը փռէր պահ մը
իւր թափանցիկ ծիրանին, ապա մանուշակէ մատներով կը շոյէր ա-
նոնց ճակատները՝ հրաժեշտ տալէ առաջ: Անսահման խաղաղութիւն
մը, որ այդ լեռներէն կը հոսէր, կը ծոփանար հովիտին վերեւ եւ
ձորին մէջ: Այն ատեն՝ գիւղին խոնարհ զանգակատունէն հնչող կոշ-
նակը ողոթքի, վերացումի, երկնային հաղորդութեան ճշմարիտ հը-
րուէր մը կը դառնար: Չարը, վիշտն ու տառապանքը տեղ չունէին
մեր ապրած աշխարհին մէջ, որ տարբեր մուրափի մը մէկ կտորը
ըլլար կարծես: Մենք ուրիշ բան չէինք, էթէ ոչ տերեւներու խոր-
շափում, զանգի զօղանլով եւ միջոցի մեծ անդրբով հիւսուած հա-
մանուագի մը անբաժան մասը, երկու պզտիկ նոթ, առոնց որուն
սակայն համանուագը պիտի քայքայուէր ողբական հեծութեամբ:

Նայուածքս կը դարձնէի Սոնային, որ ինքնամոռաց երեւոյթ
մը կը պարզէր ընդհանրապէս եւ մազերուն հետ խաղալով հարց կու
տայի իրեն.

— Ի՞նչ բանի մասին կը մտածես...

Սոնա գլուխը վեր կ'առնէր երազէ արթնցողի մը պէս, նայ-
ւածքը կը սեւեռէր հեռուն եւ կ'ըսէր.

— Ամբողջ կեանքս պիտի ուղէի ապրիլ հոս, քեզի հետ, կա-
նանչներու խորը կարտուած կարմիր տանիքով սա տնակին մէջ եւ
այլեւս ո՛չ մէկ ուրիշ տենչանք ունենալ...

Սոնան այս բառերը արտասանած միջոցին այն տողաւորու-
թիւնը կ'ունենայի, թէ սակեղէն տաւերով գրուած իմաստութեան
մատենարի մը բաց ձեռուած մէկ էջը կը կտրուար:

Կը սիրէինք քաղի, արեւուն տակ կամ իրիկուան ստուերնե-
րուն մէջ, թուփերու եւ քարերու վրայէն ցատկելով, բլուրն ի վեր
մաղցող արահետներէ, այգիներու եւ պարտէզներու մէջէն... եր-
ջանկութեան ուղեւորներն էինք եւ բոլոր ճամբաները կարօտարող
թեւերու նման կ'երկարէին մեր քայլերուն: Ես կասկած չունէի ա-
լեւս, որ այդ պահերուն մարմնացած երազս էր քովէս քալողը: Գո-
ղունի կը դիտէի անոր կարմրած դէմքը յարգէ զլիտարկին տակ,
նայուածքին ճանաչող փայլը, որ տարօրինակ լոյսով մը կը գրկէր
անոր ամբողջ էութիւնը, կը դիտէի աշխոյժ շարժումները, պարա-
նոցն ու բազուկները եւ շատ գեղեցիկ կը գտնէի գինք: Թեւս ինքնու-
րերարար կը պրկուէր մէջքին՝ անյադ եւ յարածուն կարօտով: Հո-
գիս փոթորկող զգացումները չէի սիրեր բառերով արտայայտել,
բայց երբեմն տեղի տալով ներքին զօրաւոր պոռթկումի մը արջեւ,
կը կեցնէի գինքը ճամբուն մէջտեղ, կը նայէի աչքերուն խորը եւ կը
բացազանչէի.

— Ի՞նչ աղուոր աչքեր ունիս...

Սոնայի կարմրած այտերը աւլի եւս կը շիկնէին հրճուանքէն

եւ կը զգայի, թէ մէկ խօսքս անհուն երանութեամբ կը լեցնէր անոր հոգին:

Անամպ էր մեր սիրոյ երկինքը, կայոյտ ու շողարձակ: Մոնա իր հեղ քննարութեամբ ենթարկուած էր ինծի եւ իմ քմայքներու կատարումը հաճոյք մըն էր իրեն համար: Ոչ մէկ մտահոգութիւն կու գար խոռվել մեր յարաբերութիւնները: Ես էի դարձնալ, որ իմ անհանդիստ բնութրութեամբ, անիմանալի պահանջք կ'ունենայի արահատումի առիթներ ստեղծելու: Արուեստական ամպեր էին ասոնք, որոնց սիրատուէն ետք, մեր երկինքը ակելի խորունկ ու պայծառ կը դառնար կարծես: Զարմանալի չէ՞, կը սիրէի երբեմն Սոնայի արցունքները տեսնել: Չնչին պատճառ մը կը բուէր, որ ողբերգական կացութեան մը առջեւ զնէի հէք աղջիկը: Այսպէս, լուս կը յիշեմ, որ մը երբ իրենց տան պատշգամը նստեր էինք միասին, առաջարկեցի պոստի ելլել: Սոնա առարկեց, թէ ուշ է եւ թէ քանի մը վայրկեանէն հայրը կը հասնի քաղաքէն: Ես չուզեցի լսել զինք, ոտքի ելայ եւ յայտարարեցի կարուկ:

— Ահա ես կ'երթամ կոր վերի աղբիւրին ուղղութեամբ. կ'ուզես՝ եկուր, կ'ուզես՝ մի գար...

Առի ու քաղցի բարկութեամբ: Կը դրայի, թէ անբաւ եմ եւ կռչտ, բայց կը զգայի նաեւ, որ պիտի դար. պէ՛տք է որ գար: Իրիկունս մթնշաղիս կանգ առի ծառի մը տակ եւ օպուսեցի: Հապա եթէ չգար, ի՞նչ պիտի ընէի, ո՛ւր կը մնար իմ հպարտութիւնս: «Կը ձգեմ ու կը հեռանամ, կը խզեմ բոլոր յարաբերութիւններս», կը ծրարէի ջգանազամ: «Ձեռ կրնար, պարապ տեղ մի՛ յոխորտար», կը պատասխանէր ինծի ներքին ուրիշ ձայն մը: Քանի մը վայրկեան ետք, Սոնան թեւերուս մէջ էր, զղջահար, թոյլ ու խոնարհ եւ արցունքներուն մէջէն կը մրմնջէր:

— Կենթ, իննթ տղայ, ինչո՞ւ կը տանջես զիս...

Ես յաղթական ու ինքնաբաւ՝ կը դռուէի մազերը եւ ամէն ինչ կարգի կը մտնէր ճիշդ այնպէս՝ ինչպէս կ'ըլլար իմ երեւակայած սիրովէպիս մէջը:

Կ'ըսեն, թէ երջանկութիւնը յարմար հող չէ արուեստի ծաղկումին համար, եւ թէ՛ ծաղիկ մըն է անիկա, որուն արմատները կ'անդին տառապանքի մէջ: Իմ պարապոյթս՝ հակառակը ճշմարիտ դուրս եկաւ, գուցէ անոր համար, որ անտազանգ արուեստագէտ մըն էի եւ: Յամենայնդէպս, շատոնց ի վեր մէկ կողմ նկատած ներկերու տուփս բաց էր յանախ ու ես մեծ հաճոյքով կը նկարէի: Սոնան թէ՛ ներշնչումի աղբիւրս էր, թէ՛ գլխաւոր նիւթս եւ թէ արուեստս պնահատող միակ անձը: Այդ ամառուն ընթացքին աւարտած պատասաններս կը պահեմ դուրգուրանքով, իրբեւ յիշատակի շորքած ծաղիկներ: Գլուխ-գործոցս անկասկած այն մէկն է, որ կը ներկայացընէ Սոնայի գիմանկարը: Ահա կրկին կը հանեմ զայն փոշիներու մէջէն, կը զնեմ գիմացս ու երկա՛ր, երկա՛ր կը նայիմ վրան: Սիրտուս կ'աբիւնի սուր ցաւով, ճմրտող վէրքի մը պէս: Ի՞նչ օրեր էին... Անվերադարձ երիտասարդութիւն մը կայ կայունած այդ նկարին, կեանքի զգլխիչ գարուն մը, որ պիտես, թէ տարուան եղանակներուն չի նմանի եւ ալ եւ չի գար: Սոնան, իմ ճանչցած եւ ստեղծած Սոնան, նստած է խոտերու մէջ, կեանքով ու ժպիտով զեղուն: Գլուխը թեք է թեթեւ մը, աչքերը շարճճի հարցումով լի, ակուններուն

մէջ սեղմած հասկի ցողուն մը: Հեռո՛ւն, Ֆոնին վրայ՝ ծառեր, բըլուրներ: Առատ ու ոսկի արեւ մը ողողած է ամէն բան: Ո՛չ մէկ տարտամ գիծ, ո՛չ մէկ մշուշ: Որքա՛ն մեծ է տարբերութիւնը այս նկարին եւ այն միւսին միջեւ, որ կը ներկայացնէր մշուշներու մէջէն առաջացող երազներու մշուշադէմ դեղեցկուհին:

Դպրոցը, նկարչութեան ուսուցիչս կը կարծէր, թէ ես նկարիչ պիտի դառնամ, Մերոպա պիտի մեկնիմ եւ նկարչութիւնը պիտի ըլլայ կեանքիս ասպարէզը: Հետագայ պայմանները ուրիշ կերպ դասաւորուեցան եւ ես պաշտօնեայ դարձայ զբառնեակի մը մէջ: Սակայն նկարչու բնածին շնորհքս չմեռաւ բոլորովին եւ ինչպէս հոգեկան իմ բոլոր կարողութիւններս, այդ մէկն ալ վերածուեցաւ իմ երգած մեծ սէրս փառակերտելու օժանդակ միջոցի մը: Սկիզբը իմ նկարչութիւնս ուրիշ բան չէր, եթէ ոչ կարօտողին կանչ մը, խանդակաթ որոնումը անծանօթ էակին, որուն նախասահմանում էի ես: Իսկ հիմա, Սոնայի հանդիպումէն ետք, կը նկարէի պարզապէս՝ սիրոյ կենսախայտ գէժքը շօշափելի գոյներով ընդմիջա սեւեռելու համար: Իմ կեանքիս մեծ երկը սէրն էր: Այո՛, որքան ալ տարօրինակ թուի այս յայտարարութիւնը, ես այս աշխարհի վրայ կ'ապրէի հոյակապ, անհուսափելի սէր մը իրադրօնելու կոչումով: Ուրիշներ կը ծնին նկարիչ, բանաստեղծ, երաժիշտ կամ բժիշկ դառնալու համար եւ ուրիշ ամէն բան կը ստորադասեն այդ հիմնական նպատակին: Ես ծնած էի սիրահար դառնալու սրբազան կոչումով...

Մահը ծիծաղելի եւ ցնորածին դազափար մըն էր լող, հրը սէրը կար եւ կեանքը կը լուսաւորուէր սիրոյ անմայրամուտ արեգակով:

Այսպէս կ'անցնէին մեր օրերը եւ այսպէս էլ առ էլ կը դըրուէր այն սիրավէպը, որուն ստուերադիմը տարիներով պտըտցուցեր էի մտքիս մէջ:

Կ'ափսոսայինք իրարմէ հեռու անցած բոլոր տարիներուն համար, որոնք կորուսած դացած էին, իրենց հետ տանելով չքաղուած համբոյրներու եւ չբաշխուած զգուանքներու այնքան հրափառ կարօտները: Այս կորուստը մեզ կը դարձնէր աւելի անհամբեր եւ անկուշտ՝ ի զուր փառնուած ժամանակը վերաշահելու համար կարծես: Մատերը, ծաղիկները, լեռներն ու այգիները աստուածային գեղեցկութեամբ օժուն կ'երեւէին մեզի, որովհետեւ սէրը մեր մէջ էր եւ հիմա ուրիշ աչքերով կը դիտէինք այդ բոլորը: Կեանքը եւ բնութիւնը ամէն տեղ եւ ամէն վայրկեան նոր զանձեր ունէին յայտնագործելիք՝ մեր հիացիկ ու սիրափառ հողիներուն առջեւ: Սոնայի անգամ, զոր կը շնչէի, նախկինը չէր, անոր կը խառնուէր Սոնայի քաղցր շունչը:

(Շար. 2)

Մ. ԻՇԽԱՆՆ

Ա. Գ Ա Ր Ա Լ Է Ք Ե Ա Ն

ԱՆԴՈՒՆԴՆԵՐՈՒ ԾԱՅՐԵՐՈՒՆ

Խուժող պատկերներու ի՞նչ կրկներեւոյթ,
 Ուր կը ծփան կարօտներու հրախաղաւթիւնները բոլոր՝
 Գաղտնահաւ լռութեամբ ծխելով յոյսի կնդրուկը վերջին,
 Ամէնօրեայ սիրոյ եւ անբարբառ կարեկցանքի խորաններուն աներգ...

Կէսգիշերային անշքումք սէրեր
 եւ մանուկներու ճիշեր աղակէզ
 Կամըրջընկէց գետերու ափին կը յառնեն,
 Ուր ես՝ լուռ վկայ,
 Ուր ես՝ ողբասաց:

Անարցունք օրերու ցոյքը անհանգրուան
 Ցաւով աստղերու,
 Ասուպի վիշտով՝
 Բարձրացաւ կրկին խորաններէն հին,
 Ուր կարծես մարդիկ տառապանքի բուրվառներէն կը շնչեն ազահ
 Սեւաթույր կնդրուկ
 եւ կը խշխշան սէր,
 Ուր կարծես մարդիկ կ'երգեն շնչահեղձ
 եւ կը խշխշան սէր,
 Ուր կարծես մարդիկ կ'երազեն արցունք
 եւ կ'որոնեն սէր,
 եւ կ'աղերսեն սէր,
 Մի՞նչ սէրերը կայտաւած անգունդներու ծայրերում՝
 Ովկիաններու հեռարձակ յաւերժութեամբ
 կը պսակուին կարօտներու անհուն ճայներում...

ԱՋՆԻԻ ԳԱՐԱԼԷՔԵԱՆ

ՆՈՐ ՔԱՂԱՔԸ ԿԸ ՍԿՍԻ ԵՐԲ ԿԸ ՎԵՐՋԱՆԱՅ ԱՆԱՊԱՏԸ...

Քաղաքը կը հեռանար իրմէ, ինչպէս լոյսը՝ խաւարէն:

Արշիպոյց բոսկէ մը կը նայի կարծրած ափերուն, ձեռքերը կը քսէ այրող զիտերուն եւ շնչասպաս կը քայլ: Տարածուող փառքը կը ճեղքէ արդէն կարծրացած մորթը, իսկ աչքերուն արիւնը կը փայլի արեւին շողերէն: Եղունգները կը քսէ կործէքի մազերուն...

— Քիչ մը պէտք է նստիմ, բայց ո՞ւր, — կը մըմտայ շատ կամայ:

Երկնքի անարցունք անդորրութիւնը, որ գլխուն վրայ կը կազմէ շղարշ մը, կը ցրտի տակաւ, եւ կը զգայ, թէ կ'ապրի, սակայն անապտոտի մը մէջ: Կը շնչէ ուժգին եւ շորքած թոքերը դուրս կու տան իր կեանքէն մաս մը: Փոքրիկ եւ խոշոր մաս մը... Օր մը պիտի հասնէ՞ր անհունութեան մը ափին եւ պիտի կարենա՞ր մտնայ այս տիղմը:

Միտքը կ'իյնայ Սթէյլան, կինը, անոր հանդարտ համբոյրները, զգուանքները, սարսաղացնող թարթիչներուն արհամարհանքը... Սթէյլան, որուն հետ քայած էր փողոցներէն, նայած էր վարդերու արիւնշատ կղակներուն եւ խնդացած... Սթէյլան, որուն հետ մոռցած էր ամբոխին ատելութիւնը եւ ստեղծած էր զեհեհեհի մը ստինքները...

Պիտի տարէ՞ր կրկին կակի՞ծի մը մթութիւնը եւ պիտի մտնէ՞ր յուսահատութեան մը կոկորդիլին մէջ՝ ինչպէս մայրը կորսնցուցած փոքրիկ մը:

— Չաւա՛կս... Թերեւս հիմա, ահաբեկած եւ ջարդուած՝ պատի մը տակ պիտի հեկեկայ եւ ես հոս կը մտնամ տղու մը մոռցուած երեխայութիւնները:

Ուրքը կը սահի աւազին վրայէն, ու-

ղեղը կը հայի այրող կրակներէն:

— Ո՞ր երկիրն էինք տարիներ առաջ, շեմ յիշեր: Կը յիշեմ միայն այն օրերը, երբ փոքր էի եւ զնդիկ կը խաղայի կեղտոտ եւ սեւարիս տղոց հետ: Յաճախ միւսները զիս կը ծեծէին, քաբ կը նետէին գլխուս: Յետոյ՝ կը թափառէի եւ ծամերու յորձանքին մէջ կը ջախջախէի արցունքներս եւ, վարանոտ ջուրջերու մէջ սեղմուած՝ կը ստեղծէի փոքրիկ եւ տըխեղծ երազներ...

Յետոյ, յետոյ կը յիշե՞ս, Արշի, կառքերով, սայլերով, զնացքներով ճամբորդեցիք դուն, փոքրիկ եղբայրդ եւ մայրդ: Երկար, երկար հողեր կտրեցիք, եղկելի արշաւներու հեռէն մոլորեցաք, ցաւեցաք, արիւնեցաք եւ հասաք տեղ մը: Երկիր մը հասաք, ուր կապոյտ ջուրերով ապաններ կային, արեւները անխաթար էին, երկինքը՝ անբծ:

— Ամբողջ օրեր փողոցներու մէջ կը խաղայինք, մեր արձակ խինդերով կը ճեղքէինք եկեղեցիներու զմբէթները, ծառերու բունները, տանիքներու կտտարները, մեր ծիծաղներուն մէջ խառնուած շէր սուգի ու լուցը, ժաման ու ախար, եւ մեր ճակատներէն ու այտերէն ճրագներ կը հոսէին: Սակայն երկար շտեղծ մեր սըրտերուն ջերմութիւնը, ցաւը վրայ հասաւ: Ապրելու համար մայրս մոռցաւ իր ստուկայի աղօթքներն ու կապոյտ իղձերը, նետուեցաւ մոայլ եւ լիբբ լուծերու ներքեւ, նետուեցաւ ստրկային կեանքի մը անապաստան որովայնին մէջ: Իրիկունները, գործէն վերադարձին՝ ան ճաթած մատներով ուպէ ապուր կը պատրաստէր մեր երկունքին համար: Անկարող կ'ըլլայինք զգալ մը իսկ մեր բերնին տանելու:

Տմոյն լուսինը իր լանջքին մէջ կը սեղմէր մեր ա՛նուշի անթուփիւնը: Երկար կը սպասէինք անտուան, որ երբեմն այնքան ուշ կու գար, որքան մեր խաղերը:

Օղբ թեթեւօրէն կը պարէ, իսկ չըզջինները հետու են:

— Արդեօք կը տեսնէ՞ր ժօրդ աչքերուն հսկայ անուշաբուր, ա՛յն կնոջ, որ քաղաքներ կը փոխէր, սալալատակներ կը սրբէր՝ սպրեւում եւ սպրեւցնելու համար: Պիտի խաղայի՞ր ալիւս, պիտի խնդայի՞ր մանուկի քու վճիտ ինդուքովդ եւ պիտի կարենայի՞ր տեսնել ժօրդ պատրուած բիբերը գիշերուան խաւարին մէջէն:

Շունը կ'անէ տագնապով եւ սպասած՝ կը շարունակէ քայլել:

— Գիշերները, անձրևը վայրագօրէն կը զարնուէր հինգած թիթեղէ կտուրին: Մօրս թեւեւուն ներքեւ սպասասանած՝ կը համբիտի անոր երանկերուն զարկերը: Մէկ, երկու, երեք: Անոր կնճիռներուն սեղմուած՝ կ'ուզէի փշրել յաւերժութիւնները: Այտեհս կը քսէի սառած միտերուն եւ, ընկղմած բունութեան մը երազին խորերը՝ կը հշայի գոյութիւնս եւ կ'իյնայի թշուառութեան թմբիբին մէջ: Արդեօք օր մըն ալ պիտի խմէ՞ր վայրագութեան մը գրինն եւ ինչայի զգայալիբի, պանդուխտի մը անկումով:

Վարդազոյն եւ պատուող հորիզոնները հետու են եւ ժօրը ժպտը հիմա յաւիտեան կ'որսուած:



Գանդազօրէն կը քայլէ: Աւագը այնքան տաք է, որ կարծես մարմնին մէջ մխրճուած են բազմաթիւ գամեր: Քրտինքը, հեղեղի մը թափում, կը լուսայ մկաններուն մերկութիւնը, սակայն ինք, հերոսի նման պինդ՝ կը շարունակէ քայլել այնքան արագ, որքան սիրահար մը, որ կ'երթայ իր սիրուհին փնտռելու:

Գանկը կը բռնէ ափերուն մէջ, ձնշու՝ մը կը պրկէ երակները: Կը մթմթթայ:

— Օր մը, զաւակս դպրոց չէր մտած: Վախցած էր կրկին: Տղաքը անդադար գինք կը ծեծէին: Կր կամթէին, կ'արիւնէին: Սթէլլա անտարբեր դարձած էր:

Օրեր շարունակ չէր խօսեր: Կը սպասէր: «Վերջին դասարանին մէջ հայ տղայ մը կար: Կը յիշեմ անունը, Վահէ: Այդ սեւաշեայ փոքրիկը յաճախ կուրծք կու տար բոլորին, սրպէսզի տղաս ծեծ չուտէր: Երբեմն ինքն էր, որ ծեծ կ'ուտէր, լուս, խրոխտ ճակատով, ակունները սեղմած, աչքերը շմորուն: Օր մը, վրայ հասայ, երբ դպրոցին բակին մէջ երկու տղայ կը քաշէին իր օձիքէն եւ պտտին կը հրէին անոր վտիտ եւ ջղուտ մարմինը: Նոյն բույէին, այդ մանուկին բիբերուն մէջ նըշմարեցի գինուօրի մը ահաւոր եւ զարհուրելի քաղցրութիւնը, եւ մօտենալով՝

— Տղայ, — պտտացի յանկարծ, — ինչու՞ այս բոլորը կ'ընես, ինչու՞: Միթէ սեւ արգանդէ՞ մը ծնած ես դուն:

«Օր մըն ալ հանդիպեցայ անոր ժօրը: Մատներուն վրայ կը կրէր օսֆիրէ մատանի մը, խոշոր, ոսկիէ շրթայ մը կը խեղդէր վիզին ճերմակ կտրութիւնը:

«Ժպտեցաւ ինծի:
«Երկարեց ձեռքերը:
«Ձիտեցայ:

«Սակայն անոր շրթունքները կը դողային կարծես: Ուրիշ օրեր եւս հանդիպեցայ այդ կնոջ: Կը զգայի, որ եւ ալ մեզմէ էր եւ բան մը ունէր ըսելիք:

«Նոյն գիշերը, երկարօրէն խմեցի եւ ուղեցի զիչ մը մոռնալ մօրթուած դարուններս»:

Արշի կը կենայ յանկարծ: Կոկորդին եւրակները, ըմբոսս եւ կատղած որդերու պէս՝ կը պատուեն վիզին թազանդը: Կրակ մը կը բզկտէ միտերը:

— Սթէլլա՛, — կը պոռայ յանկարծ անսպասին մէջ, — Սթէլլա՛, — եւ կը յիշէ, դառնօրէն կը յիշէ ստաջին հանդիպումը:

— Ծեփ-ճերմակ ափերը ափերուս մէջ, խարտեալ մազերը շրթունքներուս վրայ, ծաղիկներու բոյրը մատներուս ներքեւ: Ինքն էր միայն, որ դասարանին մէջ զիչ մը հետս կը խօսէր: Միւսները սրբան անտարբեր էին: Նոյնիսկ ատելութիւն չէի նշմարած անոնց խոշորցած կողերուն վրայ: Եթէ զիչ մը, այո՛, զիչ մը միայն ատելութիւն նշմարած ըլլայի, պիտի երթայի ու խօսէի, հաւկցուէի, բարեկամ-

ներ ունենայի, շոյէի անոնց ճերմակ, անկնճիռ ճակատները, սիրէի եւ ժպտէի:

Անպոնեղը շէր կրնար ջնջուիլ: Կը պըզտիկնար միայն:

— Եւ եւ Սթէլլան երկար օրեր պտըտեցանք միասին: Յետոյ, օր մը, զայն առի խաւարէն զրկիս խորները: Սեղմեցի վայրենիի մը նման, անոր շրթունքները պատուեցի եւ զգացի, որ կը ստանամ նոր ձեւ, նոր հոգի: Եւ կողոպտուէ ազատած տղու մը տենդով, կենդանի եւ թարմ քրոնոմաներու հետ, մտայ սարսուռներու նոր կազմապարի մը մէջ:

Արշի կանչ կ'առնէ յանկարծ, սաստիկ զարմացած.

— Ի՞նչ է այս լոյսը, — կը հարցնէ եւ թեւերը կ'երկարէ միջոցին մէջ:

Իրիկունը կը տարածուի իր շուրջը, եւ աստղերը կը սկսին երեւնալ, եւ լոյս մը հեռաւոր, մաքուր լոյս մը կը պլպլայ կանթիղի մը պէս, կը ստանայ խորհրդաւոր պատկերի մը ճառագայթումը: Փոքրիկ եւ զգալուն տիեզերքի մը բացարձակ ամփոփումը: Շուտով կը բանայ վիզէն կտրուած պայուսակը: Ձորցած թռչերը կը հեւան՝ յոգնած անասուններու պէս: Կը խմէ կաթիլ մը ալտուտ լուրը, որ շեւշեւ խորերը վերածուած է ցեխի, կը բանայ ըրերը եւ կրկին լոյսը կը զպի ցանցնիին:

— Լո՛յս, — կը պոռայ անպատին մէջէն, — Ի՞նչ է այս լոյսը, զէպի ո՞ւր ուղղած եմ քայլերս հիմա: Ի՞նչ է այս կըծկըւած տիեզերքը, որ կը նիրհէ եւ որուն զէմքը նման է սքանչելի տրեւին: Ա՛յն արեւին, որ երկար ատենէ ի վեր չեմ տեսներ:

Շունչ մը կ'առնէ, կը սկսի քայլել՝ աչքերը յառած հեռաւոր լոյսին:

— Սթէլլային հետ ծառերուն զոյները սկսան փոփոխել: Օղին մէջ կը տարածուի անբացատրելի տրոփելը կեանքիս, որ երբեք չէի նշմարած մինչեւ այդ ատեն: Տակաւ սկսայ մանեղ անմահութեան մը շափ երկար մզմաւանջի մը մէջ: Յաճախ, կուրծքիս սեղմուած՝ Սթէլլան կուլար: Միտակ էր, մայր չունէր: Երկաթէ բազուկներովս զայն կը զըկէի եւ խորխորստումով կ'իյնայի բեղմնաւոր աստուծոյ

մը ճանկերուն մէջ: Կ'իյնայի զատապարտուածի մը ամենէի ոտուամերով: Գիտակի, որ պարտուած էի: Այլեւս պիտի չկարենայի կանգնիլ:

«Արքա՛ն Երջանիկ կը զգայի ինքզինքս, երբ Սթէլլայի կաթի պէս մարմինը կ'առնէի թեւերուս մէջ: Ձէի հաւատար այս բաներուն: Ճերմակութեանը, որ հետու կը թուէր ինձի, ահաւասիկ կը ծծէի, կը ծծէի, երկա՛ր ժամեր, սենեակի մը դորշ զինովութեան մէջ:

Անազատը տակաւ կը կարծրանայ: Գանդուր մազերը հովին՝ Արշի կը քայլէ: Գիշերը, որ վրայ հասած է՝ գող է: Հեռաւոր լոյսը, լուստիւրի մը պէս, կ'ուղղէ իր յոգնած քայլերը:

— Ուրեմն պիտի հասնի՞մ տեղ մը: Պիտի հասնի՞մ եւ անպատու պիտի վերջանա՞յ, ա՛յն անպատու, որուն մէջ կամայ նետուեցայ, ինչպէս զինուոր մը կը նետուի կապարին զէմ, ինչպէս կին մը կը նետուի անձանօթ սիրահարի մը բազուկներուն մէջ, ինչպէս ցաւազար մը ինքզինք կը նետէ այն խարոյկին վրայ, որ պատրաստուած չէր իրեն համար: Պիտի հաւատա՞նք հողիներու յարութեան եւ ճգմութեան մեր ենթացութիւններուն ծանրութեան տակ:

Աւազները զամբու ուժգնութեամբ կը մտնեն մատներուն ներքեւ: Հիմա ցաւ չի զգար, ոչլ սրբազան եւ վեհ սարսուռ մը, որ կը պտըտի մարմնին մէջ եւ կ'ըլլայ արեան պէս տաք խենթութիւն մը, կ'ըլլայ իր էութենէն մանիկ մը, տրոփուն մը, ապրող դոյուլիւն մը:

— Ձաւկիս ծնունդէն ետքն էր, որ Սթէլլա սկսաւ իրապէս տառապիլ: Ձաւակս կը նմանէր ճիշդ ինձի: Գիշերներն իսկ կ'աշխատէի երկուքին համար: Ատորուան զէմ քրտնած, բեկուն, առն կը վազէի, կ'իյնայի բազմոցին վրայ, կը քնանայի հագիւ երկու-երեք ժամ, ապա կը վերադառնայի ցերեկուան ժամերուս, աշխատանքի կազանքներու: Կը մոռնայի, որ օրը քսանըշորս ժամ էր միայն: Մարտիրոսութիւնը սկսաւ ազուս զպրօցիլն մէջ: Հայ փոքրիկը բոունցքովը կը պաշտպանէր զայն, կուրծք կը զնէր չար աշուկերաներու վճճակին: Այլ օրերուն էր,

որ ուզեցի ճանչնալ հայերը: Վազեցի Լա-
տինական թաղը, դատայ «L'Arménie et
les Arméniens» գիրքը, հեղուկ կարդացի,
կարդացի անոնց արիւնը, վիշտերը, կո-
ծերն ու անոնց յաղթութիւնները եւ յան-
կարծ զգացի, որ մինակ չէի, թէ՛ տրձա-
զանզը կար, թէ՛ երգերը հեռու չէին,
թէ՛ կրնայինք ընկերներ ունենալ տարրեր
ազգերէ, նոյն ծարաւներով բռնուած, թէ՛
կրնայի որեւէակին աչքերուն մէջ որոնել
երազ մը, որուն վտեմ պատերուն վրայ
կարենայի քսել իմ ցեղիս դատն քրտինքը,
սարսափներն ու որոնումները: ... Յա-
ջորդ օր, Վաճէին սուսերը բռնեցի թեւե-
րուս մէջ, գրկեցի, քայեցի փողոցներուն
մէջ, գլուխս վեր, ինչպէս տղայ մը, որ
կը սպասէ վիթխարի յայտերու ծնուն-
դին: Յաւազարի մը պէս կը խնդայի:
Սակայն այսպէսով պիտի չվերջանար կե-
ղեքուած պատմութիւնը, որովհետեւ մենք՝
խնճոյքներէ եւ ուրախութիւններէ բրտա-
բէն վաճառուածներս, պիտի տեսնէինք թուր-
մերու եւ դիպուհներու պարբեր՝ արցունք-
ներու ովասիսներուն մէջ միայն:



Գիշեր է հիմա: Անապատը կը շարժի
Արշիպոյի ոտքերուն տակ, ինչպէս տեւե-
զերը Աստուծոյ ափին մէջ: Հեռաւոր լոյս-
ար կը մօտենայ, այո՛, կը տեսնէ շատ
բարձր գազաթները տուներու, կը նշմա-
րէ երկար քաղաքի մը ստուերը՝ իաւարի
մը մէջէն գատուած: Կը ժպտի: Սիրտը կը
խոյտայ անհուն մանկութեամբ:

— Լո՛յսը, — կ'ըսէ, — քաղաքը հե-
ռու է, սակայն գիտեմ, այո՛, գիտեմ, որ
այս քաղաքին մէջ, օր մը պիտի հանգչե-
ցընեմ զանկիս տանջանքները, պիտի խը-
մեմ յաւերժութեան մը ջուրերը, պիտի
զգամ կարճիւր չրթունքներու սպիտակ
համբոյրները, պիտի շամչնամ քայլու-
արեւուն տակ եւ պիտի թօթուեմ սեւ ա-
րիւնը մորթի վրայէն, ա՛յն անտանելի
արիւնը, որ չ'երեւիր որքան ալ մաքրես:
Պիտի քայքայեմ խնդացող չրթունքներու
հեղեանքը եւ անոնց պարիսպներուն մէջէն
պիտի շինեմ իմ գէճքիս նմանող աստուած
մը: Աստուած մը, որ բարի բլլայ, գթոտ
եւ վեհ:

Աջ ոտքը կը խրի աւաղին մէջ եւ կը
զգայ, թէ պահ մը պէտք է կանգ առնէ:
Կը սպասէ մինչեւ որ ուժը գտնէ, զայն
հանելու համար աւաղներու զաղլու թե-
նէն: Ծնչուած փարատած է: Կայ միայն
հով մը, որ կը թրջէ թոքերը եւ կը մտրա-
կէ շորքած արիւնը: Աստղերը արցունք-
ներու պէս կը փայլին հիմա:

— Սթէյլա դժբախտ էր, գիտէի, զա-
ւակս կը ստառայէր՝ հակառակ Վաճէին
ընկերութեան: Մարդիկ սեւ շղթիկներու
պէս կը շրջապատէին մեր գոյութիւնները
եւ, մեր կեանքի դաւիթին մէջ՝ ստորհա-
յին դատան ձեռքը կը բանար իր անգութ
ափը եւ վտանգը կը սկսէր իր կոտորա-
ծին: Խարազանները ուժով էին, եւ հե-
ղեղները՝ վատ: Գիշերները զիտէի, Սթէյ-
լա կը ձգէր սունը, կ'երթար: Տղաս կը
մտար մինակ եւ ես կ'աշխատէի: Մորթը-
ւած բերաններ կ'անիծէին ցեղ մը. զո-
յութիւններու ջահեր կ'այրէին ջուրերու
մօտ, կնոջս սպիտակ մարմնին վրայ յա-
ճախ կը նշմարէի սեւ բիծերու ճեմակ եւ
«քաղաքակրթուած» տղոց ձգած «չոյանք-
ներուն» սեւ բիծերը: Օր մը մօտեցայ աբշ-
հայ կնոջ, Վաճէին մօրը. տխուր էր, աչ-
քերը կը փայլէին տենդով: — Երջանիկ ե-
ղած ես երբեք, — հարցուցի՝ բռնելով
անոր տաք ձեռքէն: Այսպէսցաւ պահ մը
եւ սուր նայումը սեւեռելով բիբերուս՝
ըստ դանդաղօրէն. «Միայն մեր անապա-
տին մէջն է, որ պիտի մօտենաք տարկու-
մեր այս նողկանքը, կը լսե՞ս, Արշի, մե՛ր
անապատին մէջն», ըստ. եւ հեռացաւ: Հե-
ռացաւ արագ, փոթորիկի մը պէս, ար-
ցունքը բիբերուն: Մտիսներ ետք լսեցի, որ
ինքն ու զաւակը ձգած են քաղաքը, լսեկ-
նած՝ զաւակն զրկած էին պայուսակ մը լե-
ցուն խաղալիքներ, զիրքեր եւ զպրօցա-
կան ուրիշ ստարկաներ: Դանակը տակաւ
կը մխրճուէր մարմնիս մէջ, գիտէի, որ
այս ժամերը բարեկի մը վայրագութիւնն
ու ուժը ունէին: Երիտասարդ կնոջմէն
քանի մը տողեր կային գրուած՝ կարգա-
ցի՛:

«Կո՛ւրծ է դիր, Արշի, արիամարի՛ խա-
ւարը, տես սա արիւր որքա՛ն գեղեցիկ է,
լոյսին եկուր: Կտրէ անապատը եւ հասիր
քաղաքին, նո՛ր քաղաքին, եւ ցեղիդ մը-

խացող արմատներէն համէ մոր ծիւերու պլացիկ էութիւնները: Ես այժմբունք մէջ նշմարեցի միմակութիւնը եւ գաւիլիզ այժմբունք մէջ տեսայ անխնայք օրերու անդունդներ: Չեմ կրնար բան մը ըսել, որովհետեւ ես իսկ չեմ գիտեր ուր կ'երթամ, միմակ, միակ գաւիլիս հետ, որովհետեւ ես ալ չունիմ մէկը, կը լսե՞ս:

Սիրով՝ ԱԿՆԷՍ»

«Տղաս լացաւ երկար օրեր: Մի՞ճէլլա կրկին կը բացակայէր: Բեզիտուած աղիքներով սկսայ լիզել խաւարին երկինքները եւ փնտռել գեհնէն: Պիտի լտեսնէի այլեւս կնոջ մը սախնքներուն թարմութիւնը: Անապատը, որուն համար ստեղծուած էի, պիտի փաթիլուէր գոյութեանս, ուսմբի մը պէս պիտի պայթէր անընդունին մէջ եւ դահիճի մը նման պիտի հրամայէր կեանքիս եւ օրերուս: Պիտի մտնայի բարբարոս սաղմը, որ կ'իջնայ հողին վրայ, այն հողին, որուն կուրծքէն թարախ կը հոսէր:

Լոյսը հիմա կը դառնայ արեւու մը նըման գորաւոր եւ Արշի, ճակատը վեր՝ կը շնչէ միջոցին անհամբերութիւնը եւ կը խնդայ: Բառնցքը սեղմած է կզակին, իսկ սրտին մէջ կը պարէ հեռաւոր յոյսի մը վերածնունդը: Կը խնդայ, ազատ է, ազատ: Պիտի խեղդուի գերեզմանը եւ պիտի կորուսի ցաւը: Լոյսին վրայ շինուած է արեւոս քաղաք մը, ուր բաժնէ մարդ մէկ

գոյն ունի, ուր մարդոց աչքերէն արեւն չի հոսիր, ալլ ուրախութեան արցունքներ: Այս քաղաքը, որ կը տեսնուի հիմա, լոյսերով ողողուած նոր քաղաքն է: Հոն սուպետներ կը հերկեն հողը, կիկներ, կուրծքերնին բաց, հերարձակ, անարատ պարտերով, ժրջան, կաթ եւ մեղր կը բուրեն հոն, ուր երեխաները լալ չեն գլտեր եւ ուր անտառներու ծառերը կոյս են՝ մոռցուած աղջկայ մը մարմնին պէս: Եւ որ քաղաքին մէջ տղաներ կը քալեն հերոսներու քայլուածքով, անոնց լայն ճակատներէն կը ժայթքին արձակ աղաղակներ: Հոն արտերը կապոյտ են, երկինքները՝ վարդագոյն, ծառերը՝ մանիշակագոյն: Հոն մարդիկ զիրար չեն ատեր: Հոն կ'արթնան ժպիտով, կ'ըզան, կ'երազեն ատուակներու սղին: Եւ քաղաքը վէրք չունի, իսկ շուշի ու գերեզմաններ չունի: Հոն մարդիկ չեն մեռնիր, չեն ճանչնար մահը:

Արշիպոլ կը ժպտի՝ ահուաները ցցած, այն մանուկին պէս, որ կ'երթայ կորսուած եւ շատ սիրելի էր խաղալիքը զանելու: Գիշերը կը լուսաւորէ արդէն լուսաւոր ճակատն ու չրթունքները եւ, առիւծի մը պէս վայրագ՝ ան կը պոռայ:

— Այո՛, նոր քաղաքը կը սկսի, երբ կը վերջանայ անապատը, կը վերջանայ անապատը՝ ի՞մ անապատը...

ԱՐԱՔԱՍԻ Ն. ՉԱՐՆՈՒՏԵԱՆ

Արարական երկրներու մէջ այսօր պատմուածքը կը մշակուի բուրբ մին ինքնատիպ գրողներու կողմէ, որոնց մէջ առիւթացի պատմա-ծագիրները կը հանդիսանան ամենէն ուշադրաւ ներկայացուցիչները:

Սերունդին շքօշկերը եղաւ Ջաքարիա Թա-մէր, որուն գործը շուտով թարգմանուեցաւ գա-նազան լեզուներու: Ան էր, որ բացաւ այս սեռին նոր հունը, որուն գլխաւոր յատկանիւնները կը նկատուին պատկերաւոր խորհրդապաշտութիւնը, կուս կատայը եւ բանաստեղծականութիւնը:

Եստին Բիֆֆիէ մէկն է առիւթացի երիտա-սարդ այդ պատմա-ծագիրներէն, որ թափեցան աշխարհը ճոխացուց նոր ու բանաստեղծաշունչ վիզապաշտութեամբ մը:

«Բագին»ի յաջորդ համարներէն մէկուն մէջ պիտի տեսնուին յատմա-ծագիր այս նոր մե-տին ու պիտի ներկայացնենք շարք մը նմոյշներ շարժումին կարեւոր զէմքերէն:

«Բագին»ի ապրիլեան բացատրէն Բիֆֆիէի մասին որոշ զաղափոր մը կազմած ընթերցողին կը ներկայացնենք «Եւ կիներ սու ածախի է պատ-մուածքը, զոր Հեղինակը անձամբ որամարդեց մեր ամառներն»:



ՅԱՍԻՆ ԲԻՏԱՆԻ

ԵՒ ԿԻՆԸ ՍԵՒ ԱԾՈՒԽ Է

Երկիմքը կ'անձրեւէր:
Կիներ ըսաւ -
— Երկիմքը կ'անձրեւէ:
«Տգամարդը խնդաց, ափը
հրկայեցաւ, որպէսզի մատնե-
րը խրէ մետաքսէ մագնքում մէջ:
Գեղեցիկ կիմ մըն էր: Սու դէմ-
քը երբանկուսիս էր, որ չու-
նէր սահման»:
Կիներ ըսաւ -
— Կը լսե՞ս անձրեւի ձայ-
նը, որ գնտիմը կը դռփէ:
Տգամարդը մտնեցաւ անտր,
մտաւ ջիմջ աչքերում մէջ իւ ըս-
պիտակ աղանձի մը եզաւ: Փռ-
քըր սննեակիմ ստաբութիւնը
միանաբար կ'ազդէր գիրենմ:
Ափովը շշտփեց կնկամ փռփիմ

Վրայ բացուած պզտիկ մերկու-
թիւնը: Յետոյ խնդաց բարձրա-
ձայն:
Կիներ ըսաւ -
— Քեզի գաւակ մը պիտի
շնորհեմ:
«Տգամարդը գայն քաշեց
դէպի իր կուրծքը»:
Կիներ ըսաւ -
— Մա՞նչ թէ ազդիկ կ'ու-
զես:
«Իր գայց ափերում միջեւ
առաւ կնոջ այտերը եւ վառ
համբոյրներով սկսաւ ողողել
գտնումք»:
Կիներ ըսաւ -
— Դուն կը տիրե՞ս զիս:
«Տգամարդը երկիւզածօրէն

նստաւ գետին: Ձեռքերուն մէջ
առաւ անոր ռոտքերը եւ սկսաւ
ծամբուրել՝ անոնց ներդաշնակ
մատները: Յետոյ, քիչ մը նա-
հանցնց: Նստաւ կնոջ առջեւ եւ
սկսաւ գայն դիտել սեւեռաքիթ
վերացումովս:

Կինը նստած էր աթոռին եւ
ծունկերը քիչ մը բացուած էին:
Ջանոնք նորէն միացուց իրա-
րու: Անօթիւթօրէն խոնարհե-
ցուց կռպիւրը: Անոր նայուածք-
ները աղօթքներ էին: Տղամար-
դը տարուեցաւ եւ սպիտակ
մատներուն ծայրերով սկսաւ
շօշափել անոր փորը: Կինը
բարձրացուց գլուխը: Նայուածք-
ները իրարու մէջ մխրճուեցան
եւ կնոջ արիւնը բոց առաւ: Սա-
կայն տղամարդն էր, որ հրդեհ-
ւեցաւ:

Կինը ըսաւ.

— Ջուակը աշխարհ պիտի
գայ եւ պիտի ուրախանայ, որ
քեզի պէս հայր մը ունի:

Տղամարդը մօտեցաւ եւ գը-
լուխը նետեց կնոջ ծունկերուն:
Իր ածիտագոյն, սեւ մազերը
կանչեցին միւսին մատները:
Միախառնուեցան: Սպիտակ մի-
սը մխրճուեցաւ մազերուն սեւ
թելերուն ալիքերը, որոնց մէջ
կարգ մը ներմակ թելեր սայլը-
ղած էին:

Կինը ըսաւ.

— Ես՛հ, ծերացար այ:

Տղամարդը խնդաց եւ գլու-
խը հանգչեցաւ կնոջ գիրկին
մէջ: Ան ցանկաց, որ այս ակըն-
բարթը մնայ այսպէս մինչեւ
յախտեան:

Կինը հակեցաւ եւ իր հա-
սուն շրթներով շոյեց ամուսնոյն
հրկէզ ճակատը:

Կինը ըսաւ.

— Ես երջանիկ եմ:

Եւ այդ վայրկեանին բո-
լոր պզտիկ մտաեզոյսները

մեկնեցան երկուքին մտէն:

Կինը ըսաւ.

— Մէ՞կ գաւակ միայն կ'աւ-
գես:

Տղամարդը վերստին բարձ-
րացուց գլուխը եւ սեւեռաքիթ
վերացումով գննեց գայն: Կինը
զգաց, թէ այդ նայուածքները
կ'ըսեն, որ իրեն համար միայն
կ'ուզէ գաւակը:

Կինը ըսաւ.

— Քեզի համար ամուսաւ մը
գաւակներ պիտի ծնանիմ:

Դուրսը անձրեւը կը շարու-
նակէր տեղալ անաւել սաստիւ-
թեամբ: Տղամարդը կրկին մօ-
տեցաւ ու կուրծքին սեղմելով՝
զրկեց սրունքները:

Կինը ըսաւ.

— Կ'ուզեմ լաւագոյնս կի-
րարիել սերնդագործուիլ: Պի-
տի կերտեմ հայրենիք մը, որ
քեզի նմանի:

«Եւ տղամարդը շարունա-
կեց աղօթել անոր այճերուն
մէջ»:

Կինը ըսաւ.

— Եթէ ամէն տեղ, բոլոր
տուները մեր տան նման բլլա-
յին, աղաղակը պիտի վերած-
ւէր փսփսուէի: Պիտի մեղմամար
անձրեւին ձայնը: Եւ աստղերը
պիտի լուսաւորէին տուները՝
կանթեղներու վռխարէն:

Այդ վայրկեանին կինը վե-
րածուեցաւ անուշաւտի բաց
սրունկի մը եւ երբ տղամարդը
սկսաւ հոտուրտալ գայն, զգաց,
թէ ասիկա եզակի բոյր մըն է,
զոր երբեւիցէ չէր հաստատած:
Եւ անոր նմանօր գեղեցկութեան
մը չէր հանդիպած երբեք: Եւ
ինքզինք նետեց անոր մէջ:

Կինը կծկուեցաւ ինքն իր վը-
րայ՝ հրդեհը մարելու համար:
Սակայն հրդեհը միաժամանակ ե-
րեցաւ երկուքին եւ իրենց թը-
ւեցաւ, թէ երկու մուկ էին, որ

իրարու կը մօտենային :

Անոց աչքերը այս անգամ գրեթէ ընդարմացած էին, մինչ մարմինները սկսած էին միանալ :

Անձրեւին տեղատարափը անի տասուկացած էր : Անոր իւրաքանչիւր կաթիլը կը բախէր քարի սը եւ ծնունդ կու տար տարբեր մեղեդիի մը : Իսկ ռոտուտը կը լուսաւորէր գիշերն ու տունը եւ աստղերը սիրահար գոյգին անակնկալ մկարները կ'որսային :

Յանկարծ ամալը լսեց դրբան զանգակին վայրագ զանգահարումը :

Կինը ըսաւ .

— Ո՞վ է :

Տղամարդուն ղեմփին գծագրուեցաւ շփոթանք մը :

Կինը ըսաւ .

— Ուշ գիշեր է :

Մակայն խոր մտածեցաւ քին մը ստիպեց, որ սղամարդը սքափի : Կինը անապարեց ղեւի դուռը եւ պռռաց . «Ո՞վ է» :

Բիրտ շեշտով ձայն մը պատառեց . «Բա՛ց» :

Կինը բացաւ դուռը եւ ներս խուժեցին երեք մարդեր, որոնք իրենց ծոծրակները ծածկած էին բաճկոններում ղեւի վեր բարձրացած օճիֆներով : Եւ կինը անոնց աչքերուն մէջ կարծեց մշմարիլ լեռ մը, որ փուլ կու գայ :

Երեք մարդերը աչքերով սկսան խուզարկել տան անկիւնները եւ տեսան շփոթահար տրզամարդը : Անոնցմէ մէկը ըսաւ . «Ի՞նչն այսինչն էս . . .» : Եւ տրզամարդը պատասխանեց գլխու հաստատական շարժումով մը :

Երկրորդ մարդը ըսաւ . «Հազուատներդ հազուէ ու հըրանմէ մեզի հետ» :

Կինը հարց տուաւ սարսափահար .

— Ի՞նչ ըրած է, ի՞նչ կ'ուզէք իրմէ :

Երեք մարդերէն մէկը ըսաւ . «Մի վախճար . . . Կարգ մը հարցումներ պիտի ուղղենք իրեն եւ յետոյ տուն պիտի վերադառնայ» :

Ամուսինը արագօրէն արդէն հագած էր հագուստը : Մտեցաւ երեք մարդերուն, որոնց երկուքը անմիջապէս կ'աչեցան անոր եւ մէկը արհարուն մէջ տուաւ ուսը :

Կինը ըսաւ .

— Ո՞ւր պիտի տանիք զինք :

Մարդերէն մէկը պատասխանեց . «Ըսի ճեզի մի վախճար : Կարգ մը հարցումներ, եւ յետոյ կը վերադառնայ» :

Եւ ակնբարթի մը մէջ կրնոց եւ ամուսնոյն նայուածքները հանդիպեցան իրարու : Ռոտուտը դադրած էր, նմանապէս՝ անձրեւը :

Երեք մարդերը իրենց առջեւէն հրեցին կնոց ամուսինը, յետոյ ուժգնօրէն փակեցին դուռը իրենց ետեւէն :

Կինը դադարով վերադարձաւ իր աթոռին եւ իր հայեացքները դրան վրայ կախուած մընացին, մինչեւ որ յոգնեցաւ եւ նիրհեց նստած տեղը :

Յետոյ՝ երկար սպասեց :

Մնունդ տուաւ .

Շարունակեց սպասել

Տղան հղաւ մտատանջ գոյգ մը աչքեր

Շարունակեց սպասել

Տղան ծռռ մը եղաւ

Շարունակեց սպասել

Յետոյ՝ կինը վերածուեցաւ սեւ ածախին, որ բոլոր դուռները խուզարկող գոյգ մը աչքեր ունի :



Իմացական Հարժուճ

**

Մեր առջի թիւով՝ Սերգէյ Փարաւանովին պաշտպանութեան նուիրած գրութիւն մը առած էինք Անթոնէն Լեւսէն, անցնու թիւով նրկու էջնոց ծանօթութիւններ հաղորդեցինք իր սնմին ● և կարգ մը գաղտնիքներուն մասին, իսկ ներկայ համարին մէջ կը ներկայացնենք զՎա Գեօրգիւմ Լիքսիլիքի խմբագրութեան ժիլ Լափուտի հետ ունեցած իր պրոյէքտը, որ առաւելարար ծանրացած է գրականութեան և քաղաքականութեան փոխարարութիւններուն վրայ:

Իր բնութիւնով անխիտանական զործն մը համարելով հանդերձ զբազէտը, քաղաքականորէն բռնադատուած ժողովուրդներու կեանքին մէջ՝ Լեւս մտեր կը սակմանէ որոշիչ դեր մը: Միլտ իր պնդումով, նման կոչումի մը ծառայած են նաև շին պրոպանդը, դարեր շարունակ պետականութենէ զուրկ իրենց ժողովուրդը պատմութեան քառուղիներուն կանգուն պահելու պայքարին զուարթելով ժամանակի և տալանդի մեծ շրամաշլուխ:

Գրականութեան ու քաղաքականութեան, զբազէտին ու քաղաքական մարդուն միջև իրամատաներ բանալու, անանկու արամազրութիւնները շատ լուրջ հիմք չեն ստեղծած դարերէն և ոչ մէկուն մէջ, իսկ ՉՕրդ դարուն բուրովին հերքուցան նման սակմանագծումները: Ջեալուած պարտադիր կարգով քաղաքականութեան ծառայելու խորհրդային պրոպանդը, ասպարէզին մէջ բուրովին ինքնակամ կերպով նետուեցան շատեր, մեծանուններէն մեզի ծանօթ Իւզիք Քամիւ, Փոլ Քլուսէլ, Անտրէ Մալրո, Էմմիլիոսէ, Ներսես, Ասթիւրիաս և ուրիշներ: Դեռ մինչև այսօր ևս առիթ չիսխցնելու պայմանով քաղաքական իրենց մտածումները կը պուան Սարթը, Իւննաք, Պարթ, Փիթըր Ուայս, Քլուս Բուս: Աւելի առաջ նր-

թանք ու ըսենք՝ քաղաքական հիմքէ զուրկ չեն Նէյքսիլիքի թատերգութիւնները: Սերգիւմիէս Թուրքերուն դէմ կուսեցաւ, Պոլլըն՝ Յունաստանի համար:

Ձեռք օտարները ու պակ մը նայինք մեր գրականութեան: Առանձնացնելով մասի վրայ համրուող քանի մը դործ՝ հայ գրականութիւնը իր լաւնախիչ սովորով ցուցումը կը հանգիտանայ մեր ժողովուրդին քաղաքական ճակատագրին: Այդ նպատակով արարչագործուած է մեծ չե իսկ մեր դէրը, գերազանց ազդուրը մշակութիւն, լեզուն, որուն ակնարկելով, մեր ներկայ թիւին մէջ Հրայ Ջարդարեան պիտի բացազանչէր նրախտագին:

«Տ՛ւ՛՛ տրարազարն, որ, ժողովուրդիչ բիւր անգամ կուրած ողմտուրը վերակազմեցիր: Մե՛ն մի կարուածէ յետոյ՝ քրոնգեցիր պապասն իր: Եւ քայլ տուիք, ոք կտրովով ան զիմակտիլ տուերներն զարերուն երկարածից: Մասացար, բի՛րդ անծիրքական, անհանգիլիչ:

Ժ Ի Լ Լ Ա Փ Ո Ի Ժ

«ՄՏԱԻՈՐԱԿԱՆԸ ԿԸ ՊԱՅԹԵՑՑՆԵ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ»

Այն օրը, երբ ռուսական ջոկատները ներխուժեցին Զեխուսովաֆիա, 1968 Օգոստոսին, հնարար դարձաւ ընել, որ Մոսկուա իր հրատայիչը կ'արձակէր բառերու դէմ, միլիոնաւոր այն բառերուն դէմ, որոնք սկսած էին եռեւեփիլ Փրակայի գեղեցիկ գարունին մէջ: Բառաձուլը, ճիշդ է, չափազանցուած է, բայց ճիշդ է նաեւ, որ Փրակայի մէջ բազմաթիւ տարիներէ ի վեր խօսքը մտած էր ապստամբութեան մէջ եւ դուրս գալով ստորերկրեայ իր աշխարհէն, իր գնտաններէն՝ վարակած ու լափած էր ստալինեան ընկերութիւնը:

Ինչպէս մակընթացութիւն մը՝ բառերը խուժած էին ու ամէն ինչ տարած իրենց հետ եւ հին կ'ախտէին բեկորներուն մէջ եկած էին ուրիշ բառեր ու փոխարինած ստալինեան կարծիք ու ստուգեալ դրութիւնը մարդկային դիմագիծը յարգող ընկերվարութեամբ մը:

Բառերու այս արկածախնդրութեան, անոնց ըմբոստութեան ու խընճոյքին մասին այսօր կը վկայեն բազմաթիւ գիրքեր: Անոնցմէ ամէնէն յուզիչը՝ Ժիրի Փիլիֆանի «Մտորեթիւրեայ Համագումարը» կը ներկայացնէ ամկոտփ ատենագրութիւնը այն համագումարին, գոր չեյո համայնավար կուսակցութիւնը կայացուց նախկին գործարաններէն մէկուն մէջ, 22 Օգոստոսին եւ ռուսերուն իսկ մօրուֆին տակ: Գեղեցիկ է այս գիրքը: Անոր մէջ հառերու ժառկայութիւնը տեսարար ընդհատուած է այն փոքորիկին արձագանգներէն, որ կը յաճէր երկրին վրայ:

Նրկորդը, «Այեբանդը Տիւպչէթի անդիմադրելի անկումը», գրուած՝ 1948էն ի վեր աֆսարեալ Փավել Թիկրիտի կողմէ, կը գծէ տարօրինակ դիմագիծը Տիւպչէթի, իսկ տարի շարունակ ստալինականութեան մէջ կարգուած այս տեսակ մը սուրբին, անմեղ, մաքրամաքուր ու տկար մարդ, որ Փրակայի կիրքը կ'առավայելէ աւելի՝ կը հնազանդի անոր:

Նրորդը, Անթոնէն Լեհմի «Երեք սերունդ»ը լսելի կը դարձնէ այդ ըմբոստութիւնը շղթայագիծող հառին առաջին բառերը:

«Լիթերանի նովինի»ի խմբագիրներէն Անթոնէն Լեհմ, «Փրակայի Գարուն»էն շատ առաջ մաս կը կազմէն մտաւարականներու այն ջոկատին, որ կը մերժէր ստալինականութեան երէշային դիմագիծը: 1966էն մինչեւ 1968, Լեհմ յարգողաբար կը հարցախնէ իր բարեկամները: Անոնցմէ շատերը իրեն տարեկից են, բառասունի շարք, ինչպէս Քիւնտերա, Վաճուլիֆ, Փութիֆ: Ուրիշներ աւելի տարեց են, ինչպէս Նովոմեսկի, որ ծնած է 1904-ին, իսկ երրորդ խումբը աւելի երիտասարդ է, ինչպէս Փավել, որ երեսուցը հագիւ անց է: Այսպէսով, Լեհմի հարցումներուն միջոցաւ երեք սերունդներ կ'արտայայտեն իրենց կարծիքները:

Այս տասներեք տեսակցութիւնները կը կազմեն ստուար հատոր մը: Հարց-պատասխանները ծաւալուն են, լուրջ, մանրակրկիտ եւ հարուստօրէն

զեկավարուած: Իւրաքանչիւր ժայն կշռադատուած է եւ կը ցոյացնէ ինքնատիպ շեշտ մը. բայց տարօրինակը այն է, որ այլազան այս շեշտերուն ընդմէջէն կարծես միայն մէկ խօսք կը յայտնուի, ա՛յն՝ որ քանի մը ամիս ետք պիտի պտօքկար Փրակայի խանդարորդ գարունին մէջ: Սարքը չէր սխալած՝ այդ հաստօրին երկար յառաջարան մը գրելով, — «Յուրաքէն եկած ընկերվարութիւնը» խորագրով, կատաղի գրութիւն մը, ջգուտ, դաժան հոսով, ուր կը հանդիպինք սարքբեան հրապարակագրութեան յաւագոյն էջերուն թռնին, ինչպէս էր պարագան Յամոնի եւ Նիգոնի հասարկներուն գրած նախարաններուն: Մինչ այդ՝ Սարքը երբեք այդքան սաստկութեամբ չէր ձողկած ա՛յն՝ որ դարձած էր համայնավարութեան յոյսը:

Ձգնեմ Սարքը եւ հարցախննեմ նոյնիմեմ Լեւմը: Այսինքն՝ պայտարի իր տասներեք ընկերները, ամէնէն առաջ հարց տալով, թէ ինչպէ՞ս մըշակայթմ ու քաղաքակառուցիւնը հանդիպած եւ միաձուլուած են իրարու՝ Չեխովսկիով մէջ:

Անթոնին Լեւմ — Մշակութիւն ու քաղաքականութեան միջեւ նոյնութիւն չկայ: Մտաւորականները ճակատագրուած չեն քաղաքականութեան մէջ զեկավար դեր մը կատարելու, բայց երկրին պատմութեան եւ պայմաններուն նշումով անոնք միշտ ստիպուած են խառնուելու քաղաքականութեան: Չեխովսկիով մէջ, երկու այդ պատճառներուն բերումով, արդ պարտագործութիւնը դարձած է հրամայական անհրաժեշտութիւն մը:

Բացատրեմ ինքզինքս: Հակառակ մարդաց պնդումներուն՝ ստալինեան ընկերութիւնը բացարձակապէս սպաքաղաքական ընկերութիւն մըն է: Մեր մօտ, ինչպէս ամէն տեղ, ստալինականութիւնը կը կիրարկուէր կառոյցէ գուրկ եւ լիկաժ ընկերութեան մը մէջ: Կ'ապրէինք տեսակ մը խաւարի մէջ, ինչպէ՞ս բացատրեմ, տեսակ մը անտառի մէջ, գիշերուան մութին: Կէչ կը զանազանենք ծառերը, կը լսենք անորոշ ու սպառնալից ձայներ, բնաչ չենք զնտրել, թէ ո՞վ է յանցաւորը, ուրկէ՞ կու գայ վտանգը եւ ինչ կրնայ ըլլալ անոր ծանրութիւնը:

Այդ մթութեան մէջ ի՞նչ կրնայ ըլլալ մտաւորականին դերը: Ան վարելի դեր մը չունի, բայց իր պատրաստութեամբ ներկայ է՝ տեսնելու համար ա՛յն՝ որ ուրիշներ դեռ չեն կրնար կրահել: Ձեխ մտաւորականները վառած են կանթեղներ, որոնք թոյլատրած են տեսնել, որ անարկու այդ հրէջը ուրիշ բան չէր, եթէ ոչ ծառի մը կոնդը եւ մտահոգիչ ձայնը՝ մուկ մը խոտերուն մէջ: Այսպէսով, կարելի եղաւ ցոյց տալ, որ կոյն անցք մը, տարտամ ելք մը զէպի լոյսը: Եւ, արդարեւ, երբ պարնան օր մը եկաւ արշալոյսը, ամէն ոք յստակօրէն տեսաւ մտաւորականներուն նախատեսածները:

Ժիլ ԼԱՓՈՒԺ — Ըսինք, որ ստալինեան ընկերութիւնը ապաքաղաքական է: Բայց նիշդ այդ պատճառով չէ՞ր արգեօք, որ գրագետները շատ անիլի քաղաքակառուցած էին, քան Արեւմուտքի գրագետները:

Անթոնին Լեւմ — Ես կը կարծեմ, որ քաղաքական մարդն ու գրագետը կը կատարեն երկու տարբեր դերեր, հակասական, նոյնիսկ եթէ անոնք իրարու լրացուցիչ են: Իր քննութիւն արուեստագէտը անիլիական է: Ան թշնամին է բոլոր իշխանութիւններուն, հաստատուած բոլոր բաներուն: Ան կը հետազօտէ անծանօթը: Իր բարոյականը օտար է հաւաքականութեան բարոյականին: Ան կրնայ ըլլալ հիփփի մը, կամ ապրիլ դուքսի մը պէտ: Կրնայ օրինակելի ամուսին մը ըլլալ կամ ունենալ ջսան կին: Ան կը զրաւէ մենակեացի եզական գիրք մը:

Միայն թէ՛ ընկերութիւններու կեանքին մէջ կան վայրկեաններ, երբ մտաւորականը ստիպուած է մխրճուիլ քաղաքականութեան մէջ, խաւարի եւ ուսանողիներու տիրապետութեան շրջանին: Առաւել՝ երբ կը զգացուի ամբողջական պակասը քաղաքական կառոյցներու: Այն ատեն է, որ մշակոյթը կը ստանձնէ քաղաքականութեան դերը: Մտաւորականը կը հաստատուի քաղաքականութեան պարսպ ձգած դիրքերուն: Գրողէտին խօսքը կ'առնէ քաղաքական իշխանութեան ուժը, որովհետեւ բարոյականը եւ քաղաքականութիւնը կը նոյնանան իրենց բացակայութեան մէջ: Մտաւորականը կ'ըսէ. ինչ որ ճերմակ է՝ սեւ չէ: Ան կ'ըսէ՝ պէտք չէ դողնալ, եւ ոչ ալ սպաննել ծերերը: Եւ որովհետեւ այս բոլորը ինքնաբերաբար տեղի չեն ունենար, ան քաղաքականօրէն ամէն ինչ պայթեցնել կու տայ: Այս էր, որ պատահեցաւ Փրակայի մէջ եւ ոչ միայն 1968 Յունուարէն սկսեալ, այլեւ ատկէ շատ առաջ, ինչպէս ցոյց կու տան հին տեսակցութիւններէն շատերը: Պատմութեան մէջ, գիտէք, կան նման օրինակներ. Փրանսական 18րդ դարուն, միապետական իշխանութեան անկման շրջանին, մտաւորականներն էին, որոնք ստանձնեցին քաղաքականութիւնը, պայթեցուցին սոսակները եւ յարարեցին ճամբան: Չափով մը նոյնը պատահեցաւ գերմանական ոտմանթիլմին ատեն: Ճարական Ռուսաստանի վտիճանին, Թոյստոյի խօսքը, մինչեւ իսկ Տոթոյեւսկիի խօսքերը դարձան քաղաքական խօսքեր, ինչպէս է այսօր Սոյսեիցիի խօսքը՝ ստալինականութեան անապատին մէջ:

ԺԻԼ ԼԱՓՈՒԺ. — Ես կը խորհիմ նայնիսկ, ար Փրակայի մէջ որք մարդիկ գրողները առին էազաբական փառսախրութիւններ ունեցած ըլլալու կասկածին տակ: Բաւական ժամանակ առաջ, այսպէս կայտաւած նախարարական ցանկը հազորդուեցաւ Փրակայի ժայնստփիւտէն, իբրեւ վարչապետ յիշելով Կոյստրիւէրը եւ իբրեւ նախարարներ այն մարդերը, որոնց հետ հարցազրոյց ունեցած էի դուք:

ԱՆԹՈՆԷՆ ԼԵՂՄ. — Ատիկա լուրջ հիմք մը չունի: Բոլոր այդ անձերը ուրիշ մտահոգութիւն չունէին, եթէ ոչ ձգել հանրային գիրքերը եւ վերադառնալ դրականութեան: 1968ի դարձան եւ հանդիպեցայ շափէն աւելի յանձնառու շարժանկարի բեմադրիչի մը եւ հարց տուի իրեն. «Լաւ, ի՞նչ պիտի ընես հիմա, որ ամէն ինչ արտօնուած է», պատասխանեց. «Մենք կատարեցինք մեր պարտականութիւնը: Վերջապէս ուժը պիտի ունենամ ամփոփուելու եւ թերեւս սիրային ֆիլմ մը դարձնեմ»:

Այսուհանդերձ, պէտք է աւելցնել, որ չեխական պատմութիւնը ինքն է, որ պատրաստած է գրողները՝ բաժնելու քաղաքական պայքարը: Իմ գիրքին մէջ, ես այդ մասին ընդհանուր առմամբ արտայայտուած եմ, բայց ըսեմ, որ Չեխոսլովաքիան այն միակ երկիրն է, որ 17րդ դարու սկիզբէն ի վեր չէ ունեցած ազգային գերիշխանութիւն: Հոն մշակոյթն է, որ բռնած է այդ տեղը՝ 18րդ դարու վախճանէն սկսեալ: Մեր գրողները, ուրեմն, ունին հարցի մը սպասարկելու երկարատեւ վտրժութիւն մը, հրացանը ուսերնուն: Ատիկա ունեցաւ լուրջ հետեւանքներ, օրինակ, չեխական մեծ վէպին բացակայութիւնը 18րդ դարուն է: Բայց իրողութիւնը այն է, որ սպասարկելու սովորոյթը այնքան արմատացած է, որ երբ 1945-1960 տարիներուն կանչուեցանք ընկերավարութեան կողմէ, 80 աւ հարիւր տոկոսով «այո» պատասխանեցինք: Հակադրաբար ժողովրդային միւս հանրապետութիւններուն մէջ տեղի ունեցած անցուղարձեւումն, Չեխոսլովաքիոյ մէջ մտաւորականներու գաղթ տեղի չունեցաւ, կամ ունեցաւ շատ քիչ: Այսօր նոյնն էի ի-

բաղանդութիւնը: Արտասահմանի մէջ կան ի հարկէ չեկոյցներ, բայց անոնք Փրակա վերադառնալու եւ իրենց պարտականութիւնը օտանձնելու մըտածումէն աւելի հրատապ մտածում չունին: Անոնք հայրենիքին պատասխանատու կը զգան իրենք զիրենք: Ոչ ոք աքսորական կը համարէ ինքզինք: Այո, այդ հարցին կապակցութեամբ չեխերու խորշանքը ապշեցուցիչ է եւ պիտի արժէր ընկերարանական երկար ուսումնասիրութիւն մը կատարել այս մասին:

ԺԻԼ ԼԱՓՈՒԺ.— Ձեր գիրքին մէջ գիծ մը կայ, որ ուշադրութիւնս գրաւեց, — բայր գրողներուն մօտ գգալի խորունկ ազգայնականութիւնը:

ԱՆԹՈՆԷՆ ԼԵՂՄ.— Պէտք չէ խօսիլ ազգայնականութեան մասին. անիկա ուրիշ խնդիր է: Թէ մենք կառչած կը մնանք մէր արմատներուն, մեր աւանդութիւններուն՝ ասիկա ճիշդ է, մա՛նաւանդ անոր համար, որ մեր անկախութիւնը նոր է, անիկա սկիզբ առաւ միայն 1918ին եւ դեռ ասկէ առջին մեր ձեռքէն իջած են զայն յաճախ: Այնքան տոտեն, որ հարցը չի վերաբերի ինքնուրուիկան ատումով ազգայնականութեան մը, անիկա ոչ մէկ նշանակութիւն պիտի ունենայ փոքր երկիրներուն համար: Բայց՝ ոչ: Խնդիրը ըստ էութեան մարտահրաշխի մը կը վերաբերի. «Հակառակ ամեն բանի՝ մենք պիտի արգիլենք, որ այդ պատիկ երկիրը ընկղմի»: Ասիկա ազգայնականութեան աւելի՛ վերապրելու կամքի մը արտայայտութիւնն է:

Այդ նոյն հակազդեցութիւնն էր, որ գործի անցաւ ստայնականութիւնը հարուստելու ատեն: Լաւ ոչ զրէք: Գրողներէն եւ ոչ մէկը կասկածի ենթարկեց ընկերվարութիւնը: Այս եւս մարտահրաշխի մը չէ՞: Այն ընկերվարութիւնը, որուն մենք հաւատացինք կիրքով եւ որ դարձաւ պղծալի բան մը, դէհ լաւ, պէտք է բան ընել ի վերջոյ, փրկել զայն: Մեր իտէալը դաւաճանուեցաւ ու մենք մեզ կը զգանք միաժամանակ պատասխանատու եւ զոհ: Մենք պիտի հաստատենք իտէալի այդ խաթարումը, բայց իրական ընկերվարութեան հանդէպ մեր հաւատքը կը մնայ անխաթար:

ԺԻԼ ԼԱՓՈՒԺ.— Ձեր գիրքը հմայիչ է, որովհետեւ չեխական հարցին ընդմէջէն յարուցած անոր խնդիրները մեզ ամէնուս կը վերաբերին, կը յիշեցնեն կարեւորութիւնը ընկերվարութեան ուրիշ օրինակի մը, տարբերութիւնը սերունդներու, կը ճշդէ բնկերութեան մէջ մտաւորականին վերապահւած դիրքը, եւայլն: Դուք, որ մտաւորապէս երկու տարիներէ ի վեր Ֆրանսա կը գտնուիք, պատահած է ձեզի գգալ տեսակ մը խզում ձեր եւ արեւմտեան մտաւորականութեան միջեւ:

ԱՆԹՈՆԷՆ ԼԵՂՄ.— Ձերասան կը ճանչնամ երկար ատենէ ի վեր: Եթէ պատուարներու իմ առջին փորձառութիւնս ապրած եմ 1945ին, Փրակայի մէջ, երկրորդը ճանչցայ Փարիզ, 1968ի Մայիսին: Բայց խնդիրը հող չէ: Ձերասացի մտաւորականները թիչ մը տարբեր են: Անոնք անգաղար կը տրանջան ազգայնականութեան դէմ, բայց, մտաւորական կալուածին մէջ, բացարձակօրէն կ'անդիտանան ամէն ինչ, որ Ֆրանսական չէ: Ասիկա եզակի պարագայ մըն է, թէեւ արեւմտեան միւս երկիրներու մտաւորականները եւս աշխարհի մասին ունին մասնակի պատկերացում մը: Անոնք կը պակտի ճանաչումը եւրոպական երկրորդ տուեալին, որ արեւելեան աշխարհն է: Անոնք կ'ապրին միակողմանի աշխարհի մը մէջ, մինչ անդին, Արեւելքի մէջ, քսան տարիներէ ի վեր կը շարունակուի ողբերգական ու ճակատագրական փոր-

ձառութիւն մը, ստալինականութեան փորձառութիւնը, այսինքն՝ վեհաժողովուրդի հարկերը չեղած կամք մը: Արեւելքի մատարականը, բնական է, ինչ եւս զրկուած է երկրորդ տուեալէն, արեւմտեան փորձառութիւնէն, բայց, ամէն պարագայի, այս վերջինը աւելի ծանօթ է ձեր մօտ կատարուածին, քան դուք՝ մեր մօտ տեղի ունեցածներուն: Մանրակշիւ է այս անդիտութիւնը: Այդ է, որ այնքան դժուարութիւններու կը մատնէ ձեզ՝ Արեւելքէն ձեզի հասնող հազուադէպ արտայայտութիւնները մեկնաբանելու ատեն: Գուցէ կը կարգաբ Սոլժենիցինը, կը կարգաբ Քիւնտերան եւ կը կարծէք հասկնալ մեր փորձառութիւնները: Պիտի երթաք ու տեսնէք հարկաւ Բուլղար, ուր ուրիշ քան պիտի չնշմարէք, եթէ ոչ ուուս կրօնականութեան վերածնունդը: Թերեւս ճիշդ չօտ է, որ կ'երեւի իրական դերը նման դիրքի մը: Անկախ ձեզի՝ տրեւումը իրերու, կ'ընծայէ Արեւելքի այդ թանձրացեալ փորձառութիւնը, ինչպէս նաեւ կը սահմանէ այդ երկրորդ տուեալը, որուն անտեսումը պատճառ պիտի ըլլայ, որ մարդիկ հնարաւորութիւն չունենան ասարակելու ժամանակակից աշխարհը: Եւ կարելի պիտի ըլլայ ըմբռնել իւրիւրմասնաձեւ աշխարհ մը, իրական աշխարհ մը, միմիայն այն օրը, երբ երկու այդ փորձառութիւնները միաձուլուին:

Բայց կայ ուրիշ խնդիր մը: Նկատի առնէք մեր նոր պատմութիւնը: Անցնող քառասուն տարիներու ընթացքին՝ մենք ամէն ինչի ենթարկուեցանք, ժողովրդավարական կարգերէն մինչեւ Փաշականութիւն, բունակալութիւնէն մինչեւ ազատութիւն, ընկերայական յոյսէն մինչեւ անոր ստալինեան արտաոցութիւնը, «Փրակայի Գարուն»էն մինչեւ անոր զիշերը: Հետեանքը եզու ա՛յն՝ որ ինծի տարեկից Ֆրանսոսցի մտաւորականի մը դիմաց, ես զարհուրելիօրէն ծերացած ըլլալու տպաւորութիւն ունիմ: Նկատի ունեցէք, որ եթէ Ֆրանսոսցի զրոյ մը մեզ մեղադրէ ըստ բնականին արմատական եղած չըլլալու ամբաստանութեամբ, այո, լաւ կը հասկնամ դիճք, այնպէս՝ ինչպէս պիտի հասկնայի, եթէ իմ քսանըհինգ տարեկան աղաւսնան մեղադրանքներ տեղացնէր գլխուս:

ԺԻՎ ԼԱՓՈՒԺ. — Այս իմաստութիւնը հրաժարում մը չէ, այլ պատմաբանն ու քաղաքականաբանն փոթորիկներուն մասին լրջախոս տեսիլք մը: Անգամ մը եւս դաւաճանուած, գրկուած իրենց յոյսէն՝ չնիս մտաւորականները չեն հրաժարած անկէ, եթէ նոյնիսկ այդ յոյսը դարձած է արեւի ծանր եւ աւելի կարծր: Հօն գիշերը իջած է եւ գիշերը երբեքիցէ այդքան քանձր չէ եզած քերեւս, բայց մարդերը այլեւս նոյնը չեն: Անոնք կը գտնուին իրենց անտառին ու խաւարին մէջ եւ եթէ ելքը փակ է՝ կ'անդրադառնան ատոր եւ այլեւս երամակի մը պէս չեն քաղիք եւ արիշներ չեն կրնար իրենց ուզածը բնի անոնց: «Արշալոյսը չէր, — կ'ըսէր Սարգս, — արտոյտը չէր. այն վայրկեանէն սկսեալ ընկերայութիւնը ընկղմեցաւ իր միջնադարեան երկար գիշերին մէջ: Կը մնան այդ ձայները, սլովաք եւ չեխ խուրձերը՝ հընձըւած թէւս, այլ զարձեալ առք, կենդանի, հերքում, անհերքելի»: Կը մնան այդ ձայները, ձայներուն արձագանգները այս գիրքին մէջ, եւ այն յիշողութիւնը, սրուն շնորհիւ ստալինեան պէս այլեւս ոչինչ տեղի պիտի ունենայ:

ԺԻՎ ԼԱՓՈՒԺ

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՔԻ ՎԻՃԱԿԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

— Ա . —

Հայաստանեան փիլիսոփայական մտքի օժտմանակալից միճակը պատկերացնելն ու ներկայացնելն անկարելի է, առանց այն իւրայատուկ պայմանների հաշուառման, որոնց շրջանակում այսպէս թէ այնպէս դրսեւորում է այդ միտքը: Ինչպէս տնտեսական, քաղաքական, մշակութային եւ այլ բնագաւառներում, փիլիսոփայութեան որրորում եւս հայաստանեան իրականութիւնը զրատապարտուած է պայմանաւորուելու համախորհրդային կադրապարեալ ու առերեւոյթ միասնական իրականութեամբ:

Արդ՝ աշխարհի թերեւս ոչ մի երկրում «փիլիսոփայութիւն» բառը հրապարակայնօրէն այնքան յաճախ չի դործածուում, որքան որ Խորհրդային Միութեան մաս կազմող երկրներում: Եւ, համապատասխանաբար, թերեւս ոչ մի երկրում բուն փիլիսոփայութիւնը ըստ էութեան այնքան չի բացակայում, որքան որ յիշեալ երկրներում: Հակասութիւնն, ի հարկէ, ակնյայտ է եւ տարօրինակ: Բայց դա միակ հակասութիւնը չէ Խորհրդային կոչուող աշխարհում: Ոչ էլ ինքնին անբացատրելի է, քանի որ արդէն իսկ յայտնի է տիրող իշխանութեան կառուցուածքն ու բնոյթը:

Խորհրդային երկրների ճակատադիրը անօրինող իշխանութիւնը ի սկզբանէ եւ խորապէս, անտարակոյս, բռնատիրական է: Այդ իրողութիւնն այնքան ակնյայտ է, որ նոյնիսկ չի կարող երբեք միճարկուել: Աւելի՛ն, հաստատուած բռնատիրութիւնը

սովորական ու մասնակի չէ, այլ աննախնիքաց ու ամբողջատիրական, երբ հասարակութեան նիւթական ու մտուոր անխտիր բոլոր միջոցները ծառայեցւում են բացառապէս առկայ բռնատիրութիւնը պահպանելու, ամբապնդելու եւ ծառայելու նպատակին:

Խորհրդային աշխարհում տիրող միակուսակցական ու միահեծան իշխանութեան քաղաքականութիւնը, մասնաւոր հոգեմտաւոր ու բարոյական ասպարէզներում, ըստ էութեան կայանում է հպատակ մարդկանց խելքից ու խղճից զրկելու: Հետեւողական փորձերի մէջ: Ըստ այնմ էլ մշակուած են խելազրկման ու խղճազրկման բոլոր եղանակները, մանկապարտէզներից սկսած մինչեւ համալսարաններն ու ակադեմիաները: Եւ այդպիսով, ի վերջոյ, տիրական է դառնում կենցաղային ու մշակութային այն մակարդակը, որը կարելի է բնութագրել ուղղակի՛ լծաբեկ ամբիւթիւնք արտայայտութեամբ, իր բոլոր յարակից ստորագիծերով:

Երբ դիտենք, որ այդ աշխարհում զոյութիւն ունի դպրոցական լայն ցանց, մերձին հաշուով այլեւայլ բնոյթ կրող զրքեր ու պարբերականներ են տպւում, դիտա-հետազոտական նաեւ արդիւնաւէտ աշխատանքներ են կատարւում, եւայլն, ոմանց կարող է զարմանալի եւ պարզապէս շատ թուալ «ամբիւթիւնք» բնութագրումը: Մինչդեռ դա, պէտք է շեշտել, իրականում շատ չէ, այլ զիչ: Տուեալ

դէպքում եւ կանգ եմ առնում *ամէնից* շափուոր արտայայտութեան վրայ եւ միանգամայն հետու եմ ընթերցողին արհեստական ու կծու արտայայտութիւններով ցնցելու մտադրութիւնից :

Այսպէս, սովորաբար ամբարշտում են եւ ընտանի կենդանիներին շատերը : Այդ դէպքում նրանք, ի հարկէ, կեանքից չեն զրկուած, արտաքուստ մնում են գրեթէ նոյնը, բայց ընդամենը կորցնում իրենց բընութեանը յատուկ որոշ էական ասարեւր, զառնալով բացառապէս դրաստութեան կամ մասցու : Ընդ այդպէս էլ խորհրդային պայմաններում «մտքի ամբարշտում» անպայման չի նշանակում մտուոր զործունէութեան բոլոր արտաքին նշանների կատարել կորուստ : Դա նշանակում է պարզապէս այն բնատուր եւ անկողողպտելի ներքին յատկութիւնների դրսևորման անկարելիութիւն, որոնցով օժտուած է մտածող մարդը, իր բնական, ինքնուրոյն անկաշկանդ վիճակում : Երբ բուն մտածողութեան փոխարէն հասարակութեան մէջ օրինականացում են թութակաբանութիւնները, ինքնահրաշխուհիներն ու ընդօրինակումները, հնազանդութեան ու հասարակութեան պարտադիր երդումները, եւայլն : Դրանցով է արտայայտուած մտքի ամբարշտումը :

Ես տուեալ դէպքում նկատի ունեմ ի վերուստ հպատակ մարդկանց խելքից ու խղճից զրկելու հետեւողական փորձերը, այդ նպատակի համար սահմանուած կուսակցապետական պէնթերը, առանց երբեք երաշխաւորելու նման փորձերի համատարած յաջողութիւնը : Որքան էլ շատ լինեն այդպիսի փորձերի յաջողութեան արտաքին նշանները, ինձ համար միանգամայն անվիճելի է, որ բնականոն մարդիկ նսեւ խորհրդային պայմաններում ներքուստ կրում են խելքի ու խղճի թերադրած արժէքները : Իշխանաւորների նիւթած ճնշումն ու հալածանքը, բնականաբար, շատ զոհեր են խլում հասարակութիւնից, բայց դրանք անկարող են արմատախիւ անել ա՛յն՝ ինչ որ ենթակայ չէ իրենց իշխանութեան :

Մտքի ամբարշտան երեւոյթը առաւել յայտունութեամբ արտայայտուած է խոր-

հրդային այսպէս կոչուած փիլիսոփայութեան մէջ, շատ աւելի, քան մշակութային միւս ասպարէզներում : Ազատորէն մտածելու եւ արտայայտուելու հանդէպ սահմանուած պետական արգելքը լիովին փակել է վաւերական փիլիսոփայութեան ճանապարհը : Փիլիսոփայութիւնը դարձել է ոչ թէ փիլիսոփայելու քննադատական մարդկանց ինքնարուխ զրազմունք ու զօրծունէութիւն, այլ մարչապատմական մենաշնորհեալ հաստատութիւնների իրաւական սեփականութիւն, որը եւ տնօրինում է ուղղակի տիրող իշխանաւորների կամքով : Այդ հաստատութիւններում փիլիսոփաները բացառապէս վարձու ծառայողներ են ստակ, այլ ոչ թէ ինքնուրոյն ու անկախ մտածողներ : Եւ արդէն բանաւոր ու գրաւոր լեզու մ փիլիսոփայ» բառը համեմատաբար շատ քիչ է գործածուած : Դրա փոխարէն կան՝ «փիլիսոփայական ճակատի աշխատողներ», «փիլիսոփայական բնագաւառի աշխատողներ», փիլիսոփայութիւն բառի հետ հետուից կամ մօտիկից առնչուող այս կամ այն «սեկտորի» կամ «ինստիտուտի աշխատակիցներ», եւայլն : (Նսեւ՝ փիլիսոփայական դիտութիւնների թեկնածուներ կամ դոկտորներ) :

Պորհրդային աշխարհում գաղափարախօսական մենաշնորհը, ինչպէս յայտնի է, ներկայացուած է այսպէս կոչուած «մարքսիզմ - լենինիզմ» ի անունով : Այդ նոյն ձեւով էլ փիլիսոփայական մենաշնորհը պատկանում է պաշտօնապէս ճանաչուած տեսակի «պատմական մատերիալիզմին» ու «գիտելակեցական մատերիալիզմին» : Տեղին է նշել, որ շարիքն անպայման մատերիալիզմի (նիւթապաշտութեան) կամ դիալեկտիկայի (տրամախոհութեան) մէջ չէ, այլ նրանց մենաշնորհի : Մտքի ազատութեան պայմաններում «մատերիալիստներն» ու «դիալեկտիկները» եւս որոշ դէպքերում կարող են իրենց բաժին նպատար բերել փիլիսոփայութեան ասպարէզում : Մինչդեռ մենաշնորհը լիովին փակում է բոլոր վաւերական ճանապարհները, թողնելով միայն մէկը, որը դրանով իսկ ինքնին իմաստազրկում է, քանի որ մտականօրէն ուրացուած է մը-

ասածողութեան բնական բազմերանդութեան իրողութիւնը եւ մտածելու եղանակներէն մէկը ասօրինարար ու կամայարար հռչակում է «միակ ու անառարկելի ճշմարտութիւն»։ Մտքի առջեւ փուռած անձուն ու անսահման տրեզբէքը զմահանորէն ամփոփում է սմանց անցողիկ շահերի ու նոյնպէս սպառնալից պատգամներէ լքմանակում։

Պորճրզային իշխանաւորները պաշտօնապէս յենուում են Մարքոսի այն հանրայայտ դրոյթի վրայ, թէ մինչյաժմեան փրկութեանը սուկ տարբեր ձեւերով բացատրել են աշխարհը, մինչդեռ հարկաւոր է փոխել այն։ Ան թէ ինչու են պահանջում, որ մերօրեայ փրկութեանը հրատարակեն մտածելուց ու կեանքը բացատրելուց եւ լիովին լծուեն աշխարհը փոխելու՝ խարոսիկ գործին, այն է՝ ըստ նոյն իշխանաւորների թելադրանքի։ Որ կեանքում փրկութեան իրենց եւս իր հերթին կարող է որոշակի մղել ուժ հանդիսանալ՝ անվիճելի է։ Բայց ոչ մի դէպքում նա չի կարող այդ դերը կատարել, երբ ըստ հաւթեան վերանում եւ փոխաբնուում է տիրոջների թելադրած շինծու համակարգերով ու պատգամներով։

Պորճրզային իշխանաւորները պաշտօնապէս յենուում են նաեւ Լենինի այն նոյնպէս հանրայայտ պնդման վրայ, թէ «փրկութեանը իրենց կուսակցական է» (նաեւ դասակարգային)։ Եւ քանի որ իրենց ենթակայ աշխարհում «օրէնքով» միայն մէկ կուսակցութիւն կայ՝ թոյլատրելի փրկութեան, մէկ գոյն կարող է ունենալ։ Որ փրկութեանը իրենց կուսակցութեան մէկը եւս համախոհներն ու զարգացողները աւելի կամ պակաս չափով որոշ ուղղութեամբ են դասաւորում իրենց մտքերը՝ ինքնին հասկանալի է։ Բայց կարծել, թէ քաղաքական մէկ կուսակցութեան մենաշնորհ հռչակելը արդէն իսկ բաւական է, որ վերանան փրկութեանը իրենց կուսակցութեանը՝ առնուազն կարճատեւութիւն է։ Պորճրզային փրկութեանը պատմութիւնը պերճաբար վկայութիւններ է թողել նաեւ այդ կուսակցութեամբ։

Ռուսաստանը իր ժամանակ խորճրզայ

նացուելուց յետոյ, լենինեան իշխանութեան անյետաձգելի դործերէն մէկը Խուսիսի զոյնութիւն ունեցող եւ հնից մնացած փրկութեանը կամուր իմբակներէ ու րնկերութիւններէ ցրումը եւ աչքի բնկնող փրկութեանը ուղղակի թէ անուշազակի արտաքսումը երկրից։ Ասպարեզը, այդպիսով, իբրեւ անտէր դաշտ՝ փրկութեանը իմաստով, մնաց նորահաս ու թերուս ուղղափառ լենինեաններին։ Լենինեան արամադրութեանը անցող վկայութիւն է նրա «Մարտնչող մատնիս իրաւիկի ըշանակութեան մասին» յօդուածը, որը մինչեւ հիմա էլ համարում է «Լենինի փրկութեանը կտակը»։

Յօդուածը ստուել է «Պոզ Զնամենմ Մարկսիզմ» («Մարքոսի դրոյթի ներքո») ամսագրի 1922 թ. մարտեան համարում։ Ամսագիրը նոր էր հիմնուել եւ յունուար-փետրուարեան միացեալ (1-2) համարի առիթով Լենինը շարադրում էր իր դիտողութիւններն ու պատգամները։ Ըստ նրա, տուեալ ամսագիրը պէտք է լինի «մարտնչող մատնիս իրաւիկի» եւ «մարտնչող աքիլի» «մարտական օրգան», զայնքէ կնքի «ժամանակակից բնագիտութեան մերկայացուցիչների հետ», եւսյն։ Գիտաւոր շեշտը դրում է աքիլի (անաստուածութեան) եւ հակաանորդներին բոյոր միջոցներով հասարակայնորէն շէղող քայնելու եւ ճայնադրելու վրայ։ Լենինն իր յօդուածն աւարտում էր այն շարադրակ ու մտայն յայտարարութեամբ, թէ «բանուար դասակարգը Ռուսաստանում կարողացաւ նուանել իշխանութիւնը, բայց նրանից օգտուել դեռ չի սովորել»։ «Օրգանը» նա հասկանում էր նաեւ անձեռնառ փրկութեանը իր շարադրական կուսակցութեանը կնքարկելու իմաստով, եւ վստահութիւն էր յայտնում, թէ այդ «բանուար դասակարգը» իր անելիքը ղեր սոյորի, միայն թէ սոյորելու ցանկութիւն լինի»։ Լենինը, բացի այդ, գտնում էր, որ նորահաստատ ամսագիրը պէտք է լինի իր տեսակի «եղելեան դիպիկտիկայի մատնիս իրաւիկի» բարեկամների ընկերութիւն»։

Լենինեան այդ «փրկութեանը պատգամները» ոգով ընթացան հետագայ կո-

մունիստական իմաստով վերցրած Հասարակագիտական աշխատանքները խորհրդային երկրում: «Արքիմիտրի Գրոշի մեր-խոյ» ամսագիրը այն հիմնական բեմն էր, որտեղ իրենց խօսքն էին ասում եւ կոմունիստ փիլիսոփաները, Ամսագիրը տեւեց մինչեւ 1944 թուականը եւ փակուեց Ստալինի ցուցումով: Այդ ընթացքում ամսագրի խմբագրութիւնը ենթարկուեց պարբերական աւելի կամ պակաս նշանակալի «վերականգնումների», իսկ 1931 թ. Յունուարի 25ին կուսակցութեան կենտրոնի յատուկ որոշման նիւթ դարձաւ: Դրանից բացի, կային նաեւ այլ սակաւաթիւ պարբերականներ, որոնց էջերում նմանապէս փիլիսոփայական հարցեր էին արծարծուում:

1920ական թուականներին եւ 30-ական թուականների սկզբներին խորհրդային փիլիսոփաների ուշադրութիւնը դրաւում էին առաւելագէտ այն հարցերը, որոնք անմիջապէս աւերելու էին մարքսիզմին կամ լուստրանում նրա դադարաբանական հին ու նոր կապերը: Կազմակերպւում էին մասնագիտական բանավէճեր (օրինակ, Սպիրոզայի, Հեզէյի վերաբերեալ), նըշուում նոյնպիսի յարեւաններ, պատրաստուում մեքենագրութիւններ: «Պայքար էր մղւում» ներքին շեղումների՝ «մեխանիցիզմի», «մենշեւիկացող իղէալիզմի» եւ այլնի դէմ:

«Փիլիսոփայական բնագաւառի աշխատողները» կազմակերպօրէն Համախմբուած էին գլխաւորապէս «Կոմունիստական ակադեմիայի», «Արքա-հնդէլի ինստիտուտի» շուրջ, գրադուելով Հետազոտական ու հրատարակչական գործունէութեամբ: 1936 թուականից Համակարգող կենտրոն գործուեց Համախորհրդային գիտութիւնների ակադեմիան՝ Համապատասխան Հաստատութիւններով: Բացի այդ, 1924 թ. Յունիսին ստեղծուել էր «Արտոնչող մատերիալիստների ընկերութիւնը», մի քիչ ուշ՝ «Հեզէյիան դիալեկտիկայի մատերիալիստական բարեկամները ընկերութիւնը», որոնք 1928 թ. միանալով կազմեցին «Արտոնչող մատերիալիստ-դիալեկտիկների ընկերութիւն»: Այդ ընկերութիւնները եւս ասպարէզ էին ծա-

ռայում կազմակերպական Համախմբումների Համար:

Գիտութիւնների ակադեմիայի նախաձեռնութեամբ, առաջին անգամ փորձուեց պատրաստել «Փիլիսոփայութեան պատմութիւն», որի առաջին երեք հատորները լո տեսան 1940-43 թուականներին, իսկ ընդհանրապէս «պատմութիւնը» անաւարտ մնաց: Երրորդ հատորը, իր հերթին, ճակատագրական եղաւ, 1944 թ.ին խիստ քննադատուեց, յարուցեց իշխանութիւնների եւ նրանց Համապատասխան կամակատարների զայրոյթը, որովհետեւ ըստ նրանց՝ հեղինակները բաւականաչափ «չէին բնագաւառի գերմանական իդէալիզմի յետադիմական ընկերային-ֆալսաւական կողմերը, 19րդ դարի եւ 19րդ դարի սկզբի գերմանացի փիլիսոփաների ազգայնական գաղափարները»: Փիլիսոփայական ամսագիրը այդ առիթով փակուեց եւ երեք տարի (1944-1947) այդպիսի ամսագիր առհասարակ գոյութիւն չուներ:

Խորհրդային փիլիսոփայութիւնը լայն խօսակցութեան նիւթ դարձաւ 1947 թ.ին՝ Գէորգի Ալեքսանդրովի «Արեւմտա-եւրոպական փիլիսոփայութեան պատմութիւն» գրքի շուրջ վերին կարգադրութեամբ բացուած բանավէճի կապակցութեամբ: Թէեւ բանավէճը սոսկ մի գրքի էր վերաբերում, իրականում մեծադիպրոք իրագործութիւնների կլակէա դարձուեց: Այնուհետեւ յաջորդեցին այլ բանավէճեր, կոմունիստական իմաստով, կենսաբանութեան, լեզուաբանութեան, բարձր նեարդային գործունէութեան, բնախօսութեան կոսմոգոնիայի (տիեզերածնութեան) վերաբերեալ: Փիլիսոփայական բանավէճը ամփոփուեց Յունիսին՝ տիրահուշակ ժողովուրդի կողմից, իսկ Յունիսին սկսեց լոյս տեսնել նոր՝ «Վոպրասի Ֆիլոսոփի» («Փիլիսոփայութեան հարցեր») անունով փիլիսոփայական հանդէսը, որը մինչեւ հիմա էլ Համարում է իր բնագաւառում կենտրոնական ուղեցոյց պարբերական:

Ալեքսանդրովի Ժգանովականների կողմից մեղադրուած էր Հիմնականում «փիլիսոփայութեան կուսակցականութեան ըսկրպուճքը խախտելու», «պրոֆեսորական իր-աւարկայականութեանը տուրօ տա-

լու», *ինչպէս եւ «մարմնաւոր փիլիսոփայութեան պատմութեան շարագրամբը եւ «ուսական փիլիսոփայութեան զարգացման պատմութիւնը» գրքում տնտեսելու համար: Գրքում «ԲՅՅՍՍ արուած սխալները», ըստ քննադատների, ոչ թէ «մասնաւոր երեւոյթ են, այլ արտացոլում են լուրջ անբարեխառնութիւնը գաղափարական մակտոի փիլիսոփայական տեղանկանում»: Ահա թէ ինչու իշխանութեան կողմից փիլիսոփաներին հանդիսաւորապէս յանձնարուեց վերակառուցել իրենց աշխատանքը եւ յատուկ ուշադրութիւն դարձնել փիլիսոփայութեան, մասնաւոր մարջաններին փիլիսոփայութեան պատմութեան մշակման, ուստի խորհրդային այլ ժողովուրդներին փիլիսոփայութեան պատմութեան ուսումնասիրութեան, Ասիայի ժողովուրդներին փիլիսոփայութեան պատմութիւնը լուսարարելու եւ, ի հարկէ, տնտեսական գնտադիմական իմպերիալիստական փիլիսոփայութեան դէմ յարմալողական պայքար ծաւալելու» անհրաժեշտութեան վրայ:*

1947 թուականից ի վեր քանակական առումով, տնտեսական, անձեցին փիլիսոփայական հրատարակութիւնները խորհրդային աշխարհում: «Փիլիսոփայութեան հարցեր» քառամսեայ հանդէսը 1951ից դարձաւ երկամսեայ, իսկ 1958ից էլ ամէնամսեայ, որի այժմեան տպագրանակն անցնում է 40 հազարից: 1958 թ. սկզբից բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների գծով լրջա է տեսնում համամիութենական «Փիլիսոփայիկ Նաուկի» («Փիլիսոփայական գիտութիւններ») հանդէսը: Որոշ խոշոր համայնաբաններ նմանապէս ունեն իրենց սեփական փիլիսոփայական պարբերականը: Ձգալի թիւ են կազմում եւ փիլիսոփայական բընոյթ կրող մենագրութիւններն ու ժողովածուները:

Եւ մանաւանդ՝ 1960-1970 թուականներին հրատարակուեց հինգ հատորանոց «Փիլիսոփայական համարացիտարան»ը, 1957-1965 թուականներին՝ «Փիլիսոփայութեան պատմութիւն»ը (6 հատոր, վերջինը երկու գրքով), գրեթէ աւարտուեց «Փիլիսոփայութեան պատմութիւնը հՍՀ

Մում» (5 հատոր): 1940, 1941 եւ 1951 թուականներին տպուած «Համաժողովիլիսոփայական բառարան»ին 1963ին յաջորդեց ձեւական առումով համեմատաբար աւելի մշակուած «Փիլիսոփայական բառարան»ը, եւ այլն:

Բայց որակական առումով, պէտք է ասել, յոռաջգիծութիւնն անշուշտ է: Կարելի է բացել խորհրդային ուղած տարւայ ուղած փիլիսոփայական հրատարակութիւն եւ հանդիպել նոյն միապաղաղ իրականութեան: Ամէնուրեք, առանց այլ լեւալլութեան ու չափի զգացման, դոտորանուած է մարջան-լեւինիդի ամենագորութիւնը, «փիլիսոփայութեան կուսակցականութեան» լեւինիան դրոյթը, ինչպէս եւ դատապարտուած փիլիսոփայական հարցերի անայտ ու առարկայական «բուրժուական» ջննութիւնը, «մերկացում» բուրժուական փիլիսոփայութեան» անկումն ու «սնանկութիւնը», եւ այլն:

Արդեօք փիլիսոփաները իսկապէս իշխանաւորների նման են մտածում: Արդեօք նրանք անձամբ հաւատում են իրենց գրածին: Որքան էլ դժուար լինի վերծանել այդ առեղծուածը իրաքանչիւր առանձին դէպքում, ընդհանուր առմամբ կարելի է անսխալ կոտնել, որ փիլիսոփաների զգալի մասի գրածի ու մտածածի միջեւ իրականում հսկայական տարբերութիւն կայ եւ չի կարող չլինել: Այդ է վկայում նոյնիսկ փիլիսոփայական պաշտօնական բանավէճերի բուն եւ իսկական ընթացքն ու պատմութիւնը:

Արդէն ասուեց, որ 1947 թուին Ալեքսանդրովը հիմնականում մեղադրուած էր արեւմտաեւրոպական փիլիսոփաների մասին դրական իմաստով արտայայտուելու համար: Բայց նա, այս պարագան անկարելի է անտեսել, շարքային կամ ընդդէմադիր փիլիսոփայ չէր, այլ եօթը տարի (1947-1954) անձամբ գլխաւորել է Գիտութիւնների ակադեմիայի փիլիսոփայութեան ինստիտուտը ու ընդամին գրել բազմաթիւ աշխատութիւններ: Ուրեմն, ուղղակի վստահելիներից առաջնագոյնն էր: Բայց ահա խորհրդային փիլիսոփայական պարբերականում («Վստրասի Փիլասո-

Փիի», 1955 թ., թիւ 3) աւուում է, որ քննադատուելուց յետոյ նա բուրբովին շրջուեց ու հակառակ կողմն անցաւ :

«Ա. Ա. Փոքանովը իրաւացիօրէն յանդիմանում էր հեղինակին, — վկայում է պարբերականում, — որ մտաւարժան ժամանակաշրջանի արեւմտաւրոպական գրեթէ իւրաքանչիւր փիլիսոփայի մասին նա ձգտում է բարի խօսք ասել : Իսկ այժմ հեղինակը մարք գտնում է նրանց իւրաքանչիւրի մասին անպայման արեւել վաստ րան ասել : Նա սկսել է նրանց հայհուշի մոյճեքան յայտուան կերպով, որքան որ յայտուան կերպով փառաբանում էր առաջնորդում» : Եւ սա նաեւ բոլոր խորհրդային փիլիսոփաների ու հեղինակների ամենարնորոշ գիծն է՝ աշքի-յունքի նախել ո՛չ փառաբանելիս, ոչ էլ հայհուշելիս : Իսկ ինքնուրոյն մտածող սեւէ մարդ արդեօք կարո՞ղ է աջակցել հեղուութեամբ ինքն իր վրայ թշել ու դիրքերի ծայրից ծայր թռչել : Այն էլ՝ փիլիսոփան, եթէ իսկապէ՛ս փիլիսոփայ է, այլ ոչ թէ ծողրածու :

Խորհրդային իշխանաւորների կամքը արտայայտող հրատարակութիւններում փիլիսոփայութեամբ պրագմատիկները այնպէս են ներկայացուում, որանց աշակերտ կտրուկ առաջադրանքներ են յանձնարարում, որ կարծես թէ նրանք ոչ մէկ կապ չունեն մտածելու, խորհրդածելու, զատելու հետ, այլ միայն եւ միայն «մարտական վիճակում» զանուող զննաքննողներ, հրետանաւորներ, սմբակոծիչներ, եւայլն են : Պահանջները յարգուում են պահանջներին, «վճարում ենք՝ ծառայիր» սկզբունքով, առանց մի պահ անդադարանալու, որ փիլիսոփայութիւնը ներքին թիւում է, խղճի դործ, այլ ոչ թէ «աշխատանքային պարահակ» կամ «գիտութեական ծառայութիւն» :

Այսպէս լինելով հանդերձ, վերջին տւելի քան 15 տարում խորհրդային փիլիսոփաներին իշխանութիւնների կողմից ուղղակի յանձնարարուեց դուրս գալ իրենց զատանանմայ կամայ ակամայ մեկուսացումից եւ թափանցել արտախորհրդային փիլիսոփայական ընկերութիւններ, շփուել նրանց հետ ու ըստ հնարա-

ւորին հրապուրել, աղղկել, եւայլն : «Փորձակցութեան» այդպիսի շահաւէտ ասպարէզ համարուեց 1900 թուականին հիմնուած «Փիլիսոփայական Ընկերութիւնների Միջազգային Դաշնակցութիւնը» : Այդ զաշնակցութեան առաջին համաժողովը կայացել է Փարիզում հիմնադրման տարում : Համաժողովները տեղի են ունենում սլեմպական պարբերականութեամբ, պատերազմական տարիները չհայտուած : Եւ ա՛նա 1958 թ. վեներիկում խորհրդային փիլիսոփաները առաջին անգամ մասնակցեցին 12րդ համաժողովին : Ապա նաեւ՝ 13րդին (1963 թ., Մէխիկո), 14րդին (1968 թ., Վիեննա), 15րդին (1973 թ., Վատնա) :

15րդ համաժողովը, առաջին անգամ, միջազգայինի փոխարէն կոչուեց «Համաշխարհային համաժողով», ա՛յն պատճառաւորութեամբ, թէ եւրոպական ու հիւսիս-ամերիկեան փիլիսոփաների կողքին տեղ ունեն եւ Ասիայից, Աֆրիկայից ու Լատինական Ամերիկայից ներկայացած փիլիսոփաներ : Ըստ երեւոյթին, փիլիսոփայական համաժողովներում, ՄԱԿի կազմակերպութիւնների նման, «ձայներին» է կարեւորութիւն տրուելու այնուհետեւ, ի հաշիւ բուն փիլիսոփայական շփումների, դուրս բանալով այլեւայլ մըրցակցութիւնների համար :

Արդէն իսկ Վատնայի համաժողովից յետոյ խորհրդային հրատարակութիւններում ծաւալուեց սովորական պարծենկոտութիւնը : Եւտուեց սուսաց լեզուն համաժողովում պաշտօնապէս ճանաչուելու «քաղաքական մեծ նշանակութիւնը» : Հարկ համարուեց քանիերո՞րդ անգամ յիշեցնել, թէ «Համաժողովը յստակօրէն ցուցադրեց մարքիստական փիլիսոփայութեան աճող գորութիւնը եւ նրա հսկայական աշխարհայեացքին ու մեթոդաբանական արդիւնաւտութիւնը տեսութեան եւ գործնականի խնդիրները լուծելու մէջ» : Իսկ, ի՛նչ խօսք, «արդի բուրժուական փիլիսոփայութեան ճգնաժամի խորացումը»... ինքնին եւ առանց մտածելու էլ պարզ է : Ահա թէ ինչպիսի սնում է՞լ վճիռներ են արձակուում փիլիսոփայութեան հետ նոյնիսկ հեռաւոր սարնչութիւն

չունեցող սինդաճակատ զարգացման գիտությունը, երբ նրանց թոյլ է արևում «համայնաբանական» լուսաբանչով մարդամէջ մըտնել եւ երկիր ներկայացնել...

Արտասահմանեան փիլիսոփայական շրջաններում ու համաժողովներում զաթու գրաւելու» նպատակին է ծառայում եւ 1971 թ. Գեղատեմբերի 23ին Մոսկուայում հիմնուած «ԽՍՀՄ փիլիսոփայական ընկերութիւնը»: Այդ ընկերութիւնն ունի իր կանոնադրութիւնը, գործում է ԽՍՀՄ Գիտութիւնների ակադեմիայի նախագահու ղեկավարութեամբ, ըստ անհրաժեշտութեան ստեղծում է հանրապետական, մարզային եւ այլ բաժանմունքներ, կազմուած է անհատական ու խմբական անդամներից: Թէեւ ընկերութիւնը փիլիսոփայական է կոչուում, նրա ղեկերը յատուկ միտումով լայնօրէն բաց են պահում որոշ պայմաններ լրացնող ցանկացողների համար, դարձեալ ըստ հետադիմ շարժի թիւ ներկայացնելու նպատակով, մասնաւոր արտասահմանեան հուշարձիներում: Իսկ որ առաջին հերթին արտասահմանեան համապատասխան ընկերութիւնների հետ շփումները օրինակականացնելու եւ պաշտօնական մակարդակի վրայ դնելու գիտարտութեամբ է հիմնուել խորհրդային փիլիսոփայական ընկերութիւնը՝ ինքնին ակնյայտ է: Այն ո՞ր երկիրն է, որն ի վիճակի է ներկայացնել «12 հազարից աւելի փիլիսոփաներ» — միանգամից ու ճշեկ ձայնով:

Յորհրդային պայմաններում մարդկային ու առաջին հերթին փիլիսոփայական միտքը ազատ չէ եւ երբեք ազատ չի եղել՝ 1917 թ. Հոկտեմբերեան Յեղափոխութիւնից ի վեր: Բայց եւ այնպէս հրատարակում են պարբերականներ, մենագրութիւններ ու ժողովածուներ: Ինչո՞վ են լցուած այդ հրատարակութիւնները, վերջի վերջոյ գործնականում անկարելի է յենւել սոսկ համատարած ստի վրայ ու միայն կեղծիքներ հրատարակել: Պատասխանը պարզ է: Յորհրդային հրատարակութիւնները, թէեւ ինքնուրոյն ու անկախ մտածողութեան արդիւնք չեն, այնուամենայնիւ, մեծ ստերի կողքին պարունակում են եւ փոքր ճշմարտութիւններ: Այդ ճշմար-

տութիւնները բխում են ոչ թէ մարքսիզմ-լենինիզմից, այլ փիլիսոփայութեան պատմութիւնից, չնայած «քննադատական մըշակմանը», քննդիտական ու յարակից նիւթերից, որոնք այսպէս թէ այնպէս գիտական ճշմարտութեանն աւելի մօտ են:

Այս կէտը ջայտուն դարձնելու համար արժէ դիմել մոսկովեան «Փիլիսոփայական հարցեր» կենտրոնական ամսագրի օրինակին: Ամսագրի խմբագրութիւնը պարբերաբար Վերակառուցում է» այս կամ այն պատճառարանով թեամբ: Այդպիսի փոփոխութիւն եղաւ եւ 1974 թ. ամբար: Զուգահեռաբար, համապատասխան հաստատութեան շրջանակում, տեղի ունեցաւ եւ ամսագրի գործունէութեան որոշ իմաստով հրապարակային քննարկում: Տուեալ դէպքում կարեւորն այն է, որ ամսագիրը մեղադրուեց, թէ խուսափում է պատմական ու գիտելիական մատերիալիզմի հարցերի դժով փիլիսոփայական աշխատութիւններ հրապարակել:

Յորհրդային Գիտութիւնների ակադեմիայի փիլիսոփայութեան ինտիտուտի գիտակուն խորհրդի 1974 թ. փետրուարեան նիստում Տ. Ի. Օլդերմանը ասում էր. «Ամսագիրը արտայայտում է էկզոգրիկան, մոլորաբանական խնդիրներ, բնագիտութեան, միջագոյնի հարցերի բազմաթիւ խնդիրների գծով: Այդ ամէնը, ի հարկէ, լաւ է: Բայց մենք փիլիսոփայութեան բնագաւառի մասնագէտներ ենք եւ յատկապէս փիլիսոփայական խնդիրների գծով պետք է առաջիմ հերթին յօդուածներ տպենք մեր ամսագրում»:

Նայն միտքն է արտայայտում եւ ամսագրի աշխատանքը քննութեան առած յանձնաժողովի նախագահ մ. Տ. Արխիպցեւի հաղորդման մէջ. «Ամսագրում գրեթէ չեն անցկացուում բանավէճեր բաւ փիլիսոփայական գիտութեան հրատաղ ու հիմնական խնդիրների, մատերիալիստական գիտելիական խնդիրների շուրջ: Բնագէտ-գիտնականների մերգրուումը, իրրիւ հեղինակների, ինչպէս Ռչեցիմէ, գրական գործօն է, բայց յաճախ նրանց հրապարակումները յանգում են գիտական

խնդիրների ընդհանուր-տեսական, այլ ոչ թե փիլիսոփայական-մեթոտարանական վերլուծութեան»:

Ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամները չփորձեցին հերքել այդ մեղադրանքները, այլ փնտցին եղածը բացատրել առարկայական պատճառներով: Նրանք յիշեցրին, որ Փիլիսոփայութեան ինստիտուտի աշխատակիցներից շատ քիչ յօդուածներ են ստանում, այն էլ՝ ոչ բարձրորակ: Գլխաւոր խմբագիր Ի. Տ. Տրուլովը իր հերթին նշեց. «Փիլիսոփայութեան ինստիտուտում, թերեւս անլի քան որեւէ սեղ, հաւաքուել են ականաւոր փիլիսոփայական կադրեր, կարծեմ 60ից անլի փիլիսոփայական գիտութիւնների դոկտորներ: Մենք գործնական մարդիկ ենք ու հաշիւ ենք անում.— փիլիսոփայական գիտութիւնների 60 դոկտորներ. եթէ մրանցից իւրաքանչիւրը, — իսկ բաւորն էլ, ի հարկէ, ուժգնօրէն աշխատում են մոր, հրատապ խնդիրների վրայ, — տարեկան մի յօդուած տայ, ապա դա արդէն մեր ամսագրի կէտն է: Հետեւապէս, առնուազն վեց համար կը լցուեն առաջնակարգ փիլիսոփայական յօդուածներով: ... Դժբախտաբար, մեր փիլիսոփաները, նս սա կրկնում են շատ անգամ, բաւականաչափ չեն գրադում արդիակեանքեան ընկերային-փիլիսոփայական երա-

տապ խնդիրներով, ուստի՝ մեզ վիճակում է յանախ դիմելու ուրիշ գիտութիւնների գործնական աշխատողների ծառայութիւններին, որի համար մենք մրանց անահանան երախտապարտ ենք, թէեւ մրանց յօդուածներում միշտ չէ որ յստակօրէն յատուկ փիլիսոփայական մօտեցում է արտայայտում խնդիրների հանդէպ»:

Այդ պատկերն անլի լրացրեց խմբագրական կոլեգիայի անդամ Վ. Ա. Լեկտորսկին իր էլոյթում, ասելով. «Անկարելի է շիտատվանել, որ բաժնի աշխատանքում մշուած թերութիւնը հանդիսանում է փիլիսոփայական գիտութեան գործի ընդհանուր կացութեան արոշ արտացոլումը: Ձի կարելի ասել, թէ դիալեկտիկական մատերիալիզմի տեսութեան ընդհանուր խնդիրների գծով քիչ են գրում մեր փիլիսոփաները: Բայց թէեւ այդ հարցերով գրադում են շատերը, դժբախտաբար, ամսագրում մեր ստացած յօդուածները այդ ճիւղերի շուրջ յանախ այնպիսին են, որ մենք չենք կարող երապարակել դրանք, քանզի ամսագրում մշակուել է պահանջների բաւական բարձր մակարդակ երապարակումների նկատմամբ»:

Սա մի փոքրիկ պատուհան է, որտեղից, ուշադիր լինելու դէպքում, շատ բան կարելի է տեսնել:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՁԵԱՆ

(Շար. 1)

Վ. Ն Ի Ի Ր Բ Է Թ Լ Ե Ա Ն



Այսօր ինձի կը թուի, թէ թատրոն մը, որ
նկատի շատնիր իրերու քաղաքական դրուժինքը՝
ժամանակած թատրոն մըն է. նոյնպէս, մատ-
նատուած թատրոն մը պիտի ըլլա՞ր այն թատրո-
նը, որ նկատի պիտի շտանէր իրերու քնազանցա-
կան երեսին դրուժինքը: Ամբողջական եւ արդի
թատրոն մը նկատի պէտք է առնէ կենսոյի բոլոր
էական առեւտրները՝ տնտեսական, քաղաքական,
ընկերային, Հոգեբանական եւ նոյնիսկ Հոգեբա-
նաբանական:

ԱՐՔԻՐ ԱԴԱՄՈՎ

ԱԴԱՄՈՎ ԿԱՄ ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ ՄՂՁԱԻԱՆՋԸ

«Խազմափորձ»ին պէս՝ «Փրոֆեսոր Թարան» եւս արտացոլացումն էր
երազի մը, ա՛յն տարբերութեամբ սակայն, որ վերջինը, շնորհիւ արամաթի-
քական լեզուի մը տիրապետումին՝ կ'արձանագրէր բարելւրչում մը: «Փրոֆե-
սոր Թարան» ինձի համար կարեւոր եղիլուքիւն մը եղաւ, որովհետեւ առա-
ջին անգամ ըլլալով պարզապէս կ'արտագրէի երազ մը՝ առանց ամոր ընդհա-
նար իմաստ մը տալ փորձելու, առանց ոչինչ փաստել ուզելու, առանց երա-
զին քովանդակած քաւութեան վրայ մտաւորական քաւութիւն մը աւելցնել
փորձելու», կ'ըսէ Ադամով:

Ազամովի այս նոր թատերադրութիւնը, որ ունէր դարձեալ ջլախտային
բնոյթ մը, երազի մը Հարազատ եւ Հուսատարիմ արտագրումն էր, ազատ՝ ա-
մէն Հիմնաւորումէ, ամէն փաստարկումէ, բա՛ն մը, որ իրեն կու տայ միա-
ժամանակ երազային ազդու ուժը եւ մղմանը ջլախտային խտութիւնը:

Ուտիկանական մտայլ եւ մտխրագոյն գրասենեակի մը մէջ Հանդի-
սատեսը ականատես կ'ըլլայ Փրոֆեսէօր Թարանի Հարցաքննութեան, որ ձեռ-

բակալուած է սեռացուցամոլութեան (exhibitionnisme) ամբաստանութեամբ, — մանուկներ ծովափը տեսած են Փրոֆեսէօրը ազամածերկ. աւելին. ոստիկանութիւնը իր վրայ ունի տղայագործութեան (hederastie) կասկածներ: Փրոֆեսէօրը, հարկաւ, ո՛չ միայն կը հերքէ այս ամբաստանութիւնները, այլև կը յայտնէ, որ ինք համալսարանի կարկառուն դասախօս մըն է՝ միջազգային համբաւով: Բայց եւ այնպէս՝ թարան, ոստիկաններու անտարբեր եւ ժխտական կեցուածքին առջեւ՝ կը թուի աստիճանաբար կորսնցնել իր հօգը ինքնախոսութիւնը: Ան դուր կը փնտռէ վկաններ, որոնք պիտի հաստատէին իր ըսածները, սակայն չուն ներկայ գտնուող շփացած լրտվարուհին զայն մտիկ չ'ընելը եւ Աշխարհիկ Կիւնը թարանը կը շփոթէ ուրիշ դասախօսի մը հետ:

Հոս, յանկարծ, տեքորը կը փոխուի:

Այժմ կը գտնուինք պանդոկի մը հիւրարարահին մէջ: Թարան առանձին է, սակայն շուտով չ'ուն մուտք կը գործեն երկու ոստիկաններ, որոնք պինք կ'ամբաստանեն այս անգամ հանրային լողարանի մը Բալիւնին մէջ թուղթի կտորներ ձգած ըլլալու յանցանքով: Փրոֆեսէօրը այս ամբաստանութիւնը եւս կը հերքէ, հաստատելով, որ ինք որեւէ քապին մուտք չ'է գործած: Բայց ոստիկանները շին յուսահատիք եւ ցոյց կու տան իրեն տեսրակ մը, զոր Փրոֆեսէօրը կ'ընդունի, թէ իրն է: Այս տեսրակը, զոր Փրոֆեսէօրը թարան կը կարծէր նոթերով լեցուցած ըլլալ, կողմուած է միայն ճերմակ էջերէ:

Այս անցուղարձերուն դիմաց՝ թարան կը սկսի արդէն իսկ կասկածի իր անձին, իր արարքներուն ու ներկայութեան վրայ: Ծիւղ այդ պահուն, իրեն կը բերեն սրտուած քարտէս մը, որ կը ներկայացնէ ճամբորդատար պերճաշունք նաու ու ճաշասենակին յատակագիծը: Յաշանիւ մը ցոյց կու տայ այն սպասուող սեղանը, որուն ինք պիտի նախագահէ: Փրոֆեսէօրը թարան կը հանդարտի եւ կը թուի վերադառած ըլլալ իր ինքնախոսութիւնը:

Բայց ոլորտուած քարտէսին կը յաջորդէ պելճիքական աւիճը խորհրդանշող դրոշմաթուղթով նամակ մը, որ իրեն ուղղուած է իր պաշտօնավորած համալսարանէն: Գէշ լուր մը կը բերէ անիկա, ա՛յն՝ որ համալսարանի նախագահը իրեն կը յայտնէ, թէ իր պայմանադրութիւնը պիտի չկրնան վերանորոգել, որովհետեւ իր գրութիւններուն մէջ գտած են Փրոֆեսէօրը Մեհարէն բանագրուած հատուածներ:

Փրոֆեսէօրը թարան, խիստ բարոյալքուած՝ կ'առնէ ոլորտուած քարտէսը եւ կը բանայ զայն՝ պատին դամելէ ետք: Անոր վրայ կը տեսնուի սպիտակ տարածութիւն մը միայն, Փրոֆեսէօրը կը սկսի կամաց-կամաց մերկանալ...

«Փրոֆեսէօրը թարան» թատերգութիւնը կը պատկերացնէ մարդկային յարաբերութեանց հրէշլային ողբերգութիւնը, ինչպէս նաեւ նմոյշ մը հոգեկախտաբանական այն ոճերէն, որուն մասին կը խօսէր Մթրենպէրկ: Աւստի՝ թարանի մէջ մղձաւանջը կը ծնի «միտին» ներկայութենէն եւ նաեւ արտաքին աշխարհի թշնամական վերաբերումէն, որ թարանի կողմէ կ'ըմբռնուի իրբեւ մնայուն սպառնալիքի «խոստում» մը:

«Դոնիսէր», — կ'ըսէ Սարթր, — միւսմերն են: Թարանի պարագային սարթրեան այս առածը աւելի քան ճիշդ է: Իր շուրջը կան մտահոգիչ եւ անբաղձալի ներկայութիւններ միայն, այնպէս՝ որ թարան սաստիկօրէն հայածուելի եւ ուրացուելէ ետք՝ կը սկսի կասկածիլ ինքն իր վրայ: «Ընճնագիտակցութիւնը, — կ'ըսէր Լուի Լափէլ, — իրաճանչիւրիս համար ուրիշներու հետ յարաբերութեան գիտակցութիւնն է»: Հետեւաբար թարանի ողբերգութիւնը ողբերգութիւն է անանձնաւորման (dépersonnalisation) անձնաւորութեան քայքայումին, ստարացումին, ինքնութեան կորուստին, պայթումին, որ կու գայ ո՛չ միայն «միտին» մարտկազմի, այլև՝ արքայականներու (նոթե-

բով լինցուած տևարակը, ուրբուած քորտէսը, թղթիկները, նամակը, եւ այլն) գաւաճանութենէն: Ահա թէ ինչու չկարենալով գտնել ինքնաճանաչման եւ ինքնահաստատման սահմանները՝ Թարան կը կրէ այն պատկերը, որ ուրիշներ ունին իրմէ եւ կը դառնայ այն ձախող սեռացուցամուրը, որ կ'աշարեկէր զինք:

Ինչպէս իր նախորդ գործերուն մէջ, հոս եւս Աղամովի ջլախային սարտափը չէզոքացնելու փորձը զգալի է: Թարան կը դառնայ ելքի ճամբայ մը, քառութեան նոխաղը, որ կը զոհուէր Աղամովի համար: Սակայն, եւ առջին անգամ ըլլալով՝ «Փրոֆեսոր Թարան» թատերգութիւնը յստակօրէն ցոյց կու տար Հեղինակին իր բզկտող ջլախոնները ու մտահալածանքները յաղթահարելու կայսրութիւնը, փոխադրելով զանոնք երազի աշխարհէն բեմի աշխարհը: Ուրիշ մակարդակի մը վրայ, այսինքն՝ արտամթերքական սակղծագործութեան հոյսովութիւն, «Փրոֆեսոր Թարան» կը նշէր յաղթանակը իրապաւտութեան՝ խորհրդապաշտութեան վրայ:

«Վերջապէս, — կը բացատրուի Աղամով, — այս քատերգութիւնը ինծի մտնուցանեց այնպիսի՝ ծառայութիւն մը, որուն կարեւորութիւնը ըզգացի միայն հետագային: Հաստատօրէն արտագրելով երազ մը եւ ստիպւելով զանց չընել որեւէ մանրամասնութիւն, առային անգամ ըլլալով զուրս կու գայի կեղծ-բանաստեղծական ոճ man's landէն եւ կը համարձակուի առարկաները կռչել իրենց անունով»:

«Փրոֆեսոր Թարան»էն սկսեալ Աղամովի առջեւ կը բացուէր նոր ուղի մը, բայց ան չհամարձակեցաւ անմիջապէս հետեւիլ այդ ուղիին: Ինքզինք վերջնականապէս գտնելու համար պէտքը զգաց կատարելու երկու խառնածին փորձեր՝ — «Երթին իմաստը» (Le Sens de la Marche) եւ «Վերահանդիպումներ» (Les Retrouvailles):

**

«Երթին իմաստը» արտագրում մըն է, բայց նաեւ կասկումը «ԼՄԾ ու պոտիկ ռազմափորձ»ին: Անիկա կը շարունակէ տիեզերքին այն նոյն ահարկ-կիչ տեսիլը եւ փաստարկութիւնը, ըստ որում «ի՛նչ ալ ընենք՝ անօգուտ է»:

Աղամովի այս նոր թատերգութիւնը կառուցուած է իտիփեան տիպար բարդութի մը վրայ: Որդին, Հանրի, հերոսը, կ'ուզէ միանգամ ընդմիշտ քանդել իր Հօր եւ Հայրերու իշխանութիւնն ու բռնակալութիւնը:

Հանդիսատեսը ներկայ կ'ըլլայ յաջողական շորս արտեմերու, որոնք կը ներկայացնեն Հանրիի ողբերգութիւնը՝ հետեւանք Հայրերու բրտութեան, որ զինք ի վերջոյ պիտի վերածէ ձախող ոճրագործի մը: Հանրի, գործնակա-նը, բայց նաեւ ուժական իտիփը, կը խեղդուի հօրենական տան հեղձուցիչ միջոցառումին մէջ: Ան կ'ուզէ յեղափոխութիւն ընել իրեն պէս ըմբոստ քանի մը ընկերներու հետ, որոնք կ'երազեն փոխել ընկերային ու քաղաքական քա-րացած կարգերը եւ քանզի այն ուսանողութիւնը, որ կը հիմնաւորէ Հայրերու իշխանութիւնը:

Աղջիկը, Մաթիլա, կրաւորականը, ինք եւս կը խեղդուի նոյն տան մէջ, սակայն ա'յն տարբերութեամբ, որ ան կը հաստատայ ճակատագրին, անխուսափելիութեան եւ գործ չի տեսներ: Արդարեւ, անոր գուլպաները միշտ վար կը սահին:

Ինք՝ Հայրը, միշտ հիւանդ է: Իր կողքին կը գտնուի իր նմանակը, Պերն անունով մարձողը, որ կը զուարճանայ՝ հարուածներ տալով անոր: Հայրն ու մարձողը կը փորձեն արգելել, որ Հանրի յեղափոխութիւն ընէ: Հաս-կընալի է, թէ ինչու:

Տեղորդ կը փոխուի յանկարծ : Այժմ հանդիսատեսը կը դանուի զօրանոցի մը զիմաց : Զօրանոցը կը փոխարինէ տունը, իսկ ճարպակալած հազարավերջը՝ Հայրը : Հանրի, ինչպէս նախորդ վիճակին մէջ, հոս եւս շնչահեղձ կ'ըլլայ : Ան կ'ուզէ դասալիք ըլլալ բանակէն եւ դանկել իր նշանածը՝ Լիւսին եւ դարձեալ յեզափոխութեան ձգտել, իր բարեկամներուն հետ նորէն : Ճիշդ այդ պահուն, խնդրոյ առարկայ բարեկամները կը ընտրուին զօրանոց, մէջը շան սատակ, իսկ միւսը՝ իրաւոր ու խղճալի վիճակի մը մէջ : Իրենց յեզափոխութիւնը ձախողած է :

Աւելին, զինուորները սաստիճ հաճոյքով մը կը շարժարեն Հանրի վերաւոր բարեկամը՝ սուլիչի եւ դասագանի հարուածներով : Զգիմանալով այս տեսարանին՝ Հանրի յարձակում կը դործէ բրտութեան գործակալներուն վերայ եւ, կարճատեւ կռիւէ մը ետք, դուրս կու գայ պարտուած եւ նուաստացած :

Երրորդ արարը կը ներկայացնէ կրօնական աղանդի մը ժողովատեղին, որուն քարոզիչը Հանրիի նշանած Լիւսինն հայրն է : Հանրի կ'աշխատի նոյն հաստատութեան մէջ, սակայն յեզափոխութեան մտահարածանքը միշտ կը յաճախէ իր ուզեցը ու դանտութեամբ կ'ըսէ. «Մի՞նչ ես ֆոնտիերօի պաշտօն կը կատարեմ ես, ուրիշներ կը շարունակեն պայտարը, կը վտանգեն իրենց կեանքը, որպէսզի մարդիկ հետագային օգտուին, առնուազմ շնչանեղձ չըլլան» :

Զորորդ արարին մէջ, Հանրի ձգած է քոնսերթի պաշտօնը եւ իբրեւ ուսուցիչ կ'աշխատի զպրոցի մը մէջ : Ան վերջապէս պիտի կարենայ ինքզինք արժեքնել, հաստատել, փոխանցելով իր գիտելիքներն ու իմաստութիւնը : Սակայն իր գաղտնիքները հաշտ չեն տնօրէնին գաղտնիքներուն հետ, որով՝ ան կ'արձակուի իր նոր պաշտօնէն : Հետեւաբար, Հօրը յանդիմանութիւնները, հագաբապետին հրահանգները, կրօնապետին քարոզներն ու տնօրէնին կեղծ գաղտնաբացումները կը սպաննեն Հանրիի մէջ մարդկային ամէն ազնիւ ըզգացում եւ զան կը վերածեն պարզապէս իւլեակի մը :

Չայրացած ու ջղապար՝ Հանրի կը վերադառնայ իր հօրենական տունը, անդարձօրէն վճռելով վրէժը լուծել իր վրայ առաջին անգամ բռնութիւնն ու սարսափ բանեցուցած Հօրմէն : Բայց Հայրը ոչ եւս է : Աւելին, մեռնելէ առաջ, իր իշխանութիւնը փոխանցած է մարձող Պերնին, որ այժմ կ'իշխէ տան վրայ, ստրուկի պէս աշխատեցնելով Մաթիլտը եւ պատկերով անոր հետ :

Ի տես այս բոլորին՝ Հանրի վայրագօրէն կը յարձակի Պերնի վրայ ու խեղդամահ կ'ընէ զայն, միաժամանակ վճարել տալով բոլոր ոճիրներուն գինը բոլոր Հայրերուն :

«Երթիմ իմաստը» կամօրին զուեշտային ոճով մը կ'արտայայտէր ճախորդութիւնը մարդկային բոլոր ճիգերուն, ճնշումի եւ զսպումի ենթակայ աշխարհի մը մէջ : Այս թատերգութիւնը, որ ծնունդն էր Խաիփեան բարդոյթի մը, կ'ուզէր հիմնաւորել անցքը զէպի շափահասութիւնն եւ ազատութիւն, Հօրը, այսինքն՝ սկզբնական իշխանութեան զոհարերման ծիսակատարութեան վրայ : Սակայն, ինչպէս միւս բոլոր թատերգութիւնները, նաեւ այս մէկը կը հասնէր ջլախտային յուսաբեկութեան : «Ոչի՞նչ չէ փոխուած», — կ'ըսէ Հանրի, — այս բոլորը գիտ կը գոռեցնեն» :

Առաջինը՝ յեզափոխութեան ճախողութիւնն էր, ինչպէս էր պարզան «Ինքնապարձ»ին մէջ, սակայն այժմ տարբերութեամբ, որ հոս յեզափոխականները չէին, որ ճախողութեան կը մասնէին յեզափոխութիւնը, այլ պահպանողական եւ բռնակալ Հայրերը :

Երկրորդը՝ Հանրիի գործած ոճիրին ճախողութիւնն էր, որովհետեւ կարելի չէ փճացնել Հայրերը, իշխանապետութիւնը, անոր համար մանուսանդ, որ իւրաքանչիւր մարդ, Հանրին ալ անոնց հետ՝ հաւանական Հայր մըն է :

Ազատով կ'ըսէ .

«Այս կեանքին մէջ, առ բոլոր տուեալները առնելի եմ եւ առ վիճակները կը կրկնուին ճակատագրականօրէն, ինչ որ կրնամք ընել՝ ստապալել է (եւ շատ ուշ) ա՛յն՝ որ թիւրիմացաբար իրական քշեամբն կը կարծենք եւ որ իրականութեան մէջ չարիքներու շարքին վերջին եկողն է (ինչպէս Պերնի սպանութիւնը Հանրիի կողմէ)» :

Արդարեւ, Պերնի սպանութիւնը ոչինչ չէր լուծեր Հանրիի թէ Ազատովի համար : Ահա թէ ինչու Ազատով պիտի զրէր թատերգութիւն մը եւս, «Վերահանդիպումները», ճակատելէ առաջ քաղաքական բռնակալութեան ու չարիքին դէմ, պայտրակելով ու դիմակազերծելով այդ իշխանապետութիւնը եւ առաջադրելով որդեգրուելիք ճշմարիտ լուծումները :



«Վերահանդիպումները» կը վերարժարծէ ընտանեկան Հին բախումը : Այս թատերգութիւնը, որ կը ձգտէր երազային ըլլալ, ինչպէս «Փրոսփեսէօր Թարաւնը», իրականութեան մէջ ողբերգութիւնն է մարդու մը, որ կ'էջնայ իր մահկանութեան մէջ ու ճիշդ ա՛յն ատեն, երբ պիտի ամուսնանար :

Հերոսը, Էտկար, իրաւարանութեան ուսանող Մոնիլըլիէի մէջ, կը պատրաստուի վերադառնալ իր ծննդավայր դիւզը, Քեւի, պիւճիքական սահմանը, ուր իրեն կը սպասեն ժայրն ու նշանածը, Լինա : Ճամբու ընթացքին, Էտկար կը հանդիպի երկու կիներու, Լուիզ եւ Կիներու Ամէնէն Երջանիկին, որ զինք կը հրապուրեն եւ կը ստիպեն իրեն հետերին ապրիլ : Հանրի դարձեալ կը նշանուի, այս անգամ Լուիզին հետ, բայց նաեւ կ'ապրի Կիներու Ամէնէն Երջանիկին հրապուրին մէջ, հակառակ անոր, որ այս վերջինը որոշապէս իրմէ աւելի տարեց է : Ուստի, աստիճանաբար, Հանրի կը լքէ իր երկրորդ նշանածը՝ Լուիզ, որ քիչ անց կը մեռնի՝ երկաթուղային արկածի մը հետեւանքով :

Այդ դէպքէն ցնցուած՝ Էտկար ճամբայ կ'ելլէ, կը հասնի Քեւի, ուր դրկարաց կ'ընկուեն զինք մայրը, բայց ուռալին նշանածը՝ Լինա, բացակայ է : Ան մեռած է ճիշդ Լուիզին պէս, երկաթուղային արկածով մը եւ միեւնոյն օրը :

Տակնուլթայ եղած՝ Էտկար կը զգայ, թէ իր ուժերը կը լքեն զինք : Մայրը զայն կը զնէ մանուկի կտուքի մը մէջ եւ կը հրէ բեմէն դուրս :

«Վերահանդիպումները»-ն նիւթը, որ կը գտնուի Էտկար Ալէն Փոյի արտատուց պատմութիւններուն յատուկ միջնամայրի մը եւ հոգեախտաբանական ողբերգութեան կիսանանապարհին, շատ լաւ կ'արտայայտէ հեղինակին հողեկան անարեկրմաները եւ սարսափները, յետադարձ իր ձգտումներուն դէմ յանդիման զանուող իր կարեւոր վիճակին մէջ : Հետեւաբար, անոնք կ'արձանագրուին ա՛յն փարատիչ ծիսակատարութիւններուն մէջ, որոնք կը ձգտին պաշտպանել ենթագիտակցութիւնը ջրախտային յարձակումներէն ու սազնապաներէն՝ առաւել եւս՝ «Վերահանդիպումները» արտագրումն է իտիփեան մզմաւանդի մը, որուն մէջ անձնատրութիւնը այս պարագային ամբողջովին կը տիրապետուի ետակերտն մօր սարսափազդու ներկայութեամբ, ներկայութիւն մը, որ արդեւ կը հանդիսանայ դէպի լափահատութիւն անցքին, ինչպէս Հօր բռնակալ իշխանութիւնն էր «Երթիմ իմաստը» թատերգութեան մէջ : Յամենայն դէպս, «Վերահանդիպումները», որ խառնածին փորձ մըն էր ըստ Ազատովի, մեծ դեր խաղաց հեղինակին արտաթիբական բարելոջումին վրայ :

«Վերահանդիպումները» ինծի համար օւնեցաւ մեծ կարեւորութիւն մը, — զրեց Ազատով, աւարտելէ ետք իր այս նոր թատերգութիւնը, — որովհետեւ զայն վերացնելէ, վերոնքեանելէ ու լաւ մը բնեւէ ետք, հասկցայ, որ ատենն

էր վերջ տալու կէտ-երազին եւ ընտանեկան հոգեբանական հին բախումներուն : Ընդհանուր առմամբ , կը կարծեմ , շնորհիւ «Վերահանդիպումներ»ուն էր , որ ես յազթահարեցի այն բոլորը , որոնք զիս մղել է ետք դէպի Քատրոն , ի վերջոյ արգելք կը հանդիսանային նոյնիմէն Քատրոնին» :

Արդարեւ , այս թատերգութենէն ետքն էր , որ Աղամով կը ձեռնարկէր քակելու ընկերային մեծ մեքենային մեքենական կառուցները , ցոյց տալու համար քաղաքական շարիքը եւ մղելու հանդիսատեսը յեզատօրեական ինքնադիտակցութեան :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՂՁԱԽԱՆՁԸ

Անգամ մը , որ Աղամով վերջացուց «Վերահանդիպումները» , ան իր Քատրոնին տուաւ ստեղծագործական նոր տարողութիւն մը եւ գրեց .

«Շատ լաւ գիտնալով հանգերս , որ իր պատմական ընդհանուր ժողովն անջատ չկայ ընկերային որեւէ հարց , խօսելու համար իմ մտքիս՝ ես միշտ ձգտած եմ , որ այդ հարցը Քատրոնին մէջ սահի դէպի բարոյական մակարդակը : Հիմա՛ է միայն , որ կը նկատեմ իմ սխալս» :

Աղամով անկեղծօրէն կը յայտնէ իր փափաքը վերջ տալու ձախողութեան բարդոյթը շահագործելու իր ձգտումին , ինչպէս նաեւ դուրս գալու կեղծ բանաստեղծութեան անձեռնմխելի սահմաններէն , որ հաճոյքով դեռ կը շարունակէին լողալ անհեթեթապաշտները :

«Ես կը դիտէի աշխարհը բռնունջի մը քռիչքին արագութեամբ , — կ'ըսէր Աղամով , — ինչ որ ինձի առիթ կու տար ստեղծել զիրար փոխարինող անձնատրոսթիւններ (...) Մ'էկ խօսեմով՝ խամսիկներ» :

Այս աշխարհահասցեով գրուած «Փիւկ-փոնկ» անուն իր նոր թատերգութիւնը սկսելէ առաջ , ան գիտէր , թէ անիկա պիտի վերջանար երկու խրթած ծերունիներու փինկ-փոնկի խաղով :

«Անգամ մը , որ վստահութիւն ունէի ցոյց տալու , ինչպէս միշտ , նախապիտանքում նոյնութիւնը , ինքզինքն խաղաղ եւ ազատ կը զգայի անձնատրոսթիւնները արգած ձեռնպահ գործի մղելու եւ ստեղծելու մօր վիճակներ» :

Սկսելու համար՝ Աղամով թատերգութեան կեդրոնը գետեղեց Փլիփրը մեքենայ մը , ապա պատմութիւնը հիւսեց յատակօրէն ճշդորոշուած ժամանակի մը մէջ , մէր ժամանակին մէջ եւ քաղաքի մը , որ կը նմանէ Փարիզին : Սակայն հեղինակը ուշագիւր եղաւ ցոյց տալու անձնատրոսթիւններէն իւրաքանչիւրին միայն մէկ վարուելակերպը , ա՛յն՝ որ կը ծնէր Փլիփրըի ազդեցութենէն եւ անկէ առաջացած մտահալածոնքներէն , բա՛ն մը , որ զանոնք կը հասցնէ տեսակ մը խենթութեան , զառանցող գիտակցութեան եւ երազային սիգնիֆիկանթի կիսաճանապարհին : Փլիփրը կը մնար առարկայ մը , արտադրուած որոշ ընկերութեան մը կողմէ , որ մեր ընկերութիւնն է , եւ յոտակ նըպատակի մը համար , որ դրամ եւ հմայք շահին է , հակառակ անոր ճղճիմութեան եւ յիմար կարիքներուն , որ այդ մեքենան կը ստեղծէր զինք գործածողներուն մօտ :

Գալով «Փիւկ-փոնկ»ի անձնատրոսթիւններուն , անոնք կոյր ճակատագրի մը զոհերը չեն , այլ օժտուած են որոշ ազատութիւններով եւ իրենց սեփական ձեռքով կը բանան ա՛յն փապուղիները , որոնց մէջ պիտի իյնան ու կորսուին իրենք : Ուստի՝ մինչ Աղամովի առաջին թատերգութիւններուն մէջ ճակատագիրը արտաքին ուժ մըն է , այս նոր թատերգութեան էջերուն անիկա կ'անձնաւորուի օղղակի էջերուն մէջ , որոնք անձամբ կ'արտա-

զրեն գիրենք թունաւորող թոյնը: Հետեւաբար, հոկտտակ անձնական վիճակներու յարաբերական ազատութեան, նոյն պատճառը, այսինքն՝ մեքենան, որ խարեքայութիւններէն մէկն է սպառողական ընկերութեան, կը պատճառէ ճակատադիրներու նոյնութիւն մը, բոլոր անձնաւորութիւնները հասցնելով ողբերգական կացութիւններու, վերածելով անոնց կեանքը այն անզուտ ծառայութեան, որուն մասին կը խօսէր Մոնթէրլան...

Փլուզելի Գուլար եւ Փէքիւշի ոճով «Փիմիկ-փոմիկ»ը կը ներկայացնէ երկու սովորական մարդոց կեանքը, Վիքթորն, որ բժշկական ուսանող է, եւ Արթուր, որ գեղադիրութեան կը հետեւի: Անոնք սովորութիւն ունին ամէն գիշեր հանդիպելու Մատամ Տիւրանթի սրճարանը, ուր մեծ կիրքով Ֆլիփը կը խաղան: Անոնք կամաց-կամաց կը հմայուին այս մեքենայով, որ կը դառնայ իրենց հետքերութիւններուն հիմնական կեդրոնը: Անոր շուրջն է, որ պիտի թաւալի իրենց զգացական, սեռային ու անտեսական երազներն ու ճշգրտամտները: Այդ մեքենային մէջ ամէն ինչ կը հմայէ գիրենք, դրամը, որ կը բերէ անիկա, մաթեմատիքական անոր ճշգրտութիւնը եւ ելեկտրական բանաստեղծութիւնը:

Ժամանակի ընթացքին, անոնք աստիճանաբար իրենք գիրենք կը տրամադրեն այդ մեքենային, որ կը դառնայ իրենց նպատակակէտը: Կայցելին զայն արտադրող ընկերութիւնը, տեսակցութիւն կ'ունենան ընկերութեան արձնորէն Ծերունիին հետ եւ կ'առաջարկեն անիկի կատարելագործել Մեքենան: Բայց ի զուր:

Սրբը կ'անցնին եւ յաջորդ աջելութեան ընթացքին, կատարելագործման իրենց առաջարկին մէջ կը յաջողին համոզել Ծերունիին, ու կը մեկնին կոկիկի դոմարով մը: Այդ օրէն սկսեալ իրենց կեանքը ամբողջովին կը նոյնանայ Մեքենային հետ, այն Մեքենային, որ գիրենք պիտի ճզմէ եւ պարզէ մարդկային ամէն զգացումէ:

Վերջին մասին մէջ հանդիսատեսը ներկայ կ'ըլլայ փինկ-փոնկի խաղի մը՝ երկու տիեզծ ծերունիներու՝ բժիշկ Վիքթորի եւ բանաստեղծ Արթուրի միջեւ: Վիքթոր յանկարծ շանթահար կ'ընայ: Արթուր միեակը կը շարունակէ խաղը, աներեւոյթ գնդակով...

«Փիմիկ-փոմիկ»ը՝ իր գերբնական տեսարաններով՝ հեզնական դիւցազնեղութիւնն է մարդկային կեանքին: Սպառողական ընկերութեան մէջ՝ մարդուն մեքենայացումին եւ առարկայի վերածման դիւցազնեղութիւնը: Հետեւաբար, այս թատերգութիւնը կը վերածուի պատրանքի առակին, որովհետեւ ժամանակակից ընկերութեան բոլոր խոչնդները — դրամ, սեռ, ազատութիւն — սպառողական նիւթեր են միայն, անհեթեթ եւ սպաննիչ:

Այս անկիւնէն դիտուած՝ անիկա կը պատկանի անհեթեթի թատրոնին, որովհետեւ քնազանցական չարիքը, նոյնինքն մահը, եւ հոգեկան մղձաւանջը կը գոյատևեն եւ ուժգնօրէն զգալ կու տան մարդկային ամէն էակի կեանքին ունայնութիւնը, որ գետեղուած է ձախողութեան, ծերութեան եւ մահուան աղեցութեան տակ:

Բայց «Փիմիկ-փոմիկ»ը մանաւորապէս օտարացումը պատկերացնող այլաբանութիւն մըն է, քանի որ ընկերային մղձաւանջը կը պայթի հոն՝ իր բոլոր անուշիւրութեամբ, հրէշային խաբէութիւններով ու առասպելներով՝ ի խընդիր խեղճ ու ճղճիմ նպատակներու: Այսպէսով, անիկա կը գործէ ուղղակի յարձակում մը գրքամատիւրական ընկերութեան դէմ, որ կը ստեղծէ կեղծ պետքեր, կը պարտադրէ իր գողափարաբանութիւնը, հիմնուած՝ կեղծ գաղափարապաշտութեան վրայ, կ'օծէ իր կրօնականները եւ, ինչպէս Մեքսիքայի արիւնարբու Հին աստուածները՝ կը պահանջէ մարդկային զոհերու մեայուն երամակը...

Այդպէս ընելով՝ Ազատով հարցականի տակ կ'առնէ սովէն հաւատք: Եւ որովհետեւ «Փինկ-փոնկ»ի հերոսները կը հաւատան մեքենային եւ զայն ստեղծող ընկերութեան, անոնք, նոյն այդ հերոսները, կը դաւաճանուին թէ՛ մեքենային եւ թէ՛ ընկերութեան կողմէ: Իւրացնելով այդ նիւթապաշտ ընկերութեան խոչանքը՝ Վիքթոր եւ Արթիւր ինքնաբերաբար իրենք զիրենք կը յանձնեն բոլոր ինքնախարութիւններուն: Նոյն ճակատագրին կ'ենթակորուին նաեւ վաճառականամիտ միւս բոլոր միամիտները, եւ Մեքենային տէրերը, եւ ծառաները: Այսպէս է, որ Անկթ, սինեմայի մէջ հանդիսատեսներու տեղափոխման պատճառով, որ կ'երազէր աշխատանք մը գտնել ելեկտրական պիլիպոսներու ընկերութեան մէջ, կը մեռնի ա'յն պահուն, երբ կը հանի իր նպատակին: Նոյնպէս Սուրբ, գանձիչը, որուն ջիղերը կը ճաթոտին, կամ Բոֆ՝ ձախուէր փոխ տնօրէնը, որ չի կրնար դիմանալ սեռային աճուելի հոգեվարքի մը զու՛ժ Ծերունի տնօրէնին մահուան:

Ողբերգական բանաստեղծականութեամբ մը օժտուած այս թատերգութիւնը կը միանալէ երազային ~մայրը իրականութեան դառնութեան, Վիքթոր իրապաշտին եւ Արթիւր գաղափարապաշտին անձերուն մէջէն, որոնք կը ներկայացնեն մարկային ընտելեան երկու երեսները՝ անկարելի երջանկութեան մը փնտրութիւն մէջ:

Մարդկային թշուառութեան ու յիմարութեան այս դիւցազներգութիւնը միւս կողմէ կ'արտայայտուի անձնաւորութեանց մաշած արտայայտութիւններուն, անգոյն երկխօսութիւններուն եւ մտքի զարացած կողպարհներուն ընդմէջէն:

Իոյան Պարթ կ'ըսէր.

«Փինկ-փոնկ»ի իւրաքանչիւր անձնաւորութիւն դատապարտուած է իր լեզուական արահետին, քայքայ իւրաքանչիւր արահետ տարբեր ձեւով մը փորձած է եւ այս անշունչներուն տարբերութիւնը կը ստեղծեն այն՝ զոր կը կոչենք վիճակներու քատրան մը, այսինքն՝ անհամար կարելիութիւններու եւ ընտրութիւններու քատրան մը»:

Հետեւաբար, քաղցեմի ընկերութիւնը ձաղկող այս թատերգութիւնը պէտք է նաեւ ծաղրանկարէր անոր լեզուն, ընթացիկ եւ հազարաւոր անգամներ կրկնուած անոր ձեւերը եւ հանգիստուր ու լուրջ յիմարութիւնը:

«Իմ դարուս յիմարութեան դէմ կը գգամ անտրութեան ալիքներ, որոնք զիս կը խեղդեն, — կ'ըսէր Թլոսէր, — անկէ կ'ուզեմ կազմել խմոր մը, որով պիտի անրկեմ անբողջ Գրոք դարը»: «Փինկ-փոնկ»ը գրելով՝ Ազատով հաւանաբար կը գտնուէր հոգեկան նոյն վիճակին մէջ, երբ կ'ապրէր մեքենայով խորհրդանշուած ժամանակակից ընկերութեան սարսափը, ա'յն Մեքենայով, որուն շուրջ իրեն կ'որոտած մուրթակ կը դառնայ ամբողջ մարդկութիւն մը, աշխարհած՝ դրամին մտահալածանքերով:

Ինչո՞ւ Ազատով ուղղակիօրէն չէ յարձակած այդ ընկերութեան դէմ եւ գոհացած է խորհրդանշով մը: Հարցումին պատասխանը կը գտնուի իր հետեւեալ խօսքերուն մէջ.

«Պրնայի, անկասկած, այնպէս մը ընել, որ «Փինկ-փոնկ»ը, իլեկտրաքանութեան պիլիարտի ընկերութեան ընդմէջէն՝ իրապէս դիմակագործէր գրամատիրական ընկերութիւնը... կամ անլի միշտը՝ չէի կրնար այդ մէկը ընել, որովհետեւ «Փինկ-փոնկ»ը գրելէ յետոյ էր միայն, որ տեսայ կարելիութիւնը քատրանի մը, որ պիտի դիմակագործէր ամբարտաւանութիւնը, ամբարտաւանութիւն մը, որ այս պարագային կ'ուզէր իրեն անհրաժեշտութիւն անրկայացնել առարկայ մը, որ կը ստեղծէ կեղծ պէտքեր»:

Այսուհանդերձ, քաղցեմի թէ՛ դրամատիրական ընկերութեան խորհրդանշանը դիմակագործումը արգելք չի հանդիսանար, որ «Փինկ-փոնկ»ի մէջ

յայտնուի բնադոնչական շարիքը, այսինքն՝ հողեկան մղձաւանջը: Ազամով կ'ըսէր. «Այս բոլորը չի նշանակեր, որ «Փինկ-փոնկ»ը լուս մնայ ֆակատագրական անբուժելի շարիքի գիմաց... Ուստի՝ այն թատրոնը, որ ես կը մազթեմ՝ «Երգող վաղորդայններ»ու թատրոն մը չէ, այլ թատրոն մը, որ հիմնըւած ըլլայ շատ պարզ ու շատ օրինական կամքին վրայ, որ չծանոթացնէր մարդկային կացութիւնը, ինքնին արդէն բաւական ծանր ու քստմենլի»:

Թատերական արուեստին տեսակէտով՝ այս Թատերգութիւնը ունէր զանազան տկարութիւններ:

Նախ՝ մեքենաներու ընկերութեան խորհրդապալատի ներքինը, քանի որ Ազամով հարկ եղած չափով ցոյց չէր տար անոր գործառնութեան ազոտու ծալքերը, անսր անպարարութիւնները, ապօրինի նեցուկները, զորս կը սասանայ, մրցակցութիւնները, որոնցմէ կը չիւծի, նիւթական ուժն ու շահերու բաժանումը:

Երկրորդ՝ անմաստորութիւններու խորհրդապալատի ներքին՝ մասնաւորաբար Ծերունի տնօրէնին, որ զուրկ է հողեքանական խտութենէ, հակառակ իր ծրարակցի ծամածուութիւններուն եւ լրբալի մահուան:

Հակառակ այս մասնակի թերութիւններուն՝ «Փինկ-փոնկ»ը կը մնայ Ազամովի գլուխ-գործոցներէն մէկը՝ ճիշդ այդ վեհալուք միասուլումովը ապրելու հողեկան ջլախտին՝ մարդուն այդ անմարդկային ընկերութեան դրութեան մէջ, եւ որ իրեն կու տայ միայն երջանկութեան խաբկանքը:

Անզամ մը, որ «Փինկ-փոնկ»ը վերջացուց՝ Ազամով սկսաւ դրել նոր Թատերգութիւն մը՝ «Փառլո-Փառլի», որուն մէջ ինքն իրեն կը խոստանար տուելի մանրակրկիտ ձեւով ուսումնասիրել եւ քակել ընկերային մարդակեր մեծ Մեքենային կառոյցները:

«Երբէ տարի առաջ, երբ գլեցի «Փինկ-փոնկ»ը, — կը զրէ Ազամով, — ես արդէն տեսած էի ամբարտաւանութիւնը յառաջապահ կողումին, որ իրականութիւնը կը բողբոսակէր ի շահ տխուր, միտիթարական, հանգստուելու եւ յաւիտեական ոօ man's landին»:

Իոյն Պարթ եւս կը կատարէր նոյն ախտանանջումը եւ, խօսելով հակահամակերպող ու հակաքողքենի յառաջապահին մասին՝ կ'ըսէր.

«Այս ապստամբութիւնները միշտ կը ներշնչուին բարոյական քաղքենիին եւ քաղքեմական քաղքենիին միջիւ գայտաթիւն ունեցող յստակ գանգանութեան: Ինչ որ յառաջապահը կը մերժէ՝ արուեստի քէ բարոյականի մէջ եղող քաղքենին է, ինչպէս էր ռումբիզմի ստեմագեղեցիկ շրջաննաբում, երբ քիթայն կը դառնար ձկարականան ու ֆիլիտսիմը, բայց քաղքեմական մերժում բնաւ տեղի չէր ունենար»:

Ուստի՝ Ազամով կը ձեռնարկէր «Փինկ-փոնկ»էն աւելի իրապաշտ նոր Թատերգութեան մը եւ կը գրէր «Փառլո-Փառլի»ն, որուն խորագիրը կը յիշեցնէ Պրեկսի «Կալիլեօ-Կալիլիէի»ն: Ազամովի նոր Թատերգութեան նըպատակն էր հարցտեանի տակ առնել այն ընկերութիւնը, որուն մէջ կ'ապրէր: Անկէս՝ «Փառլո-փառլի»ն, երեսան կը հանէր սպառողական ընկերութեան ընկերային եւ դասակարգային բոլոր հակասութիւնները:

Ազամովի այս Թատերգութիւնը անկիւնադարձ մը կը հանդիսանար յառաջապահ Թատրոնի պատմութեան մէջ՝ ա'յն իմաստով, որ անիկա կ'արձանագրէր նոյն այդ յառաջապահին քաղաքականացումը: Հետեւաբար, բնադանցական, ձեւական ու թեքեթե մտահողութիւններուն ու փնտռուքներուն վրայ կ'աւելնար քաղաքական բովանդակութիւն ունեցող յառաջապահ դադարաբանութիւն մը:

«Փառլո-Փառլի»ի պատմութիւնը կը սկսի 1900ին եւ կը վերջանայ Համախարակային Առաջին մեծ պատերազմի նախօրեակին եւ ցոյց կու տայ

այլուներումն ու քայքայումը ժամանակակից ազատական ու զգալափարապա աշխարհին: Անոր իւրաքանչիւր տեսարանէն առաջ, կը ցուցադրուին տուեալ ժամանակաշրջանի օրաթիւթերէն ու քաղաքական դէմքերու արտասանած ճառերէն քաղուած յատկանշական եւ ծիծաղելի հատուածներ, որոնք կը ծուռայեն մեկնարանելու տարուան ընթացքին պատահած դէպքերը: Ժողովրդական երգ մը՝ «Եկուր Միճիլ, եկուր, Միճիլ եկուր» կ'ընկերանայ այս արտատոց ցուցադրութիւններուն:

«Փառլո-Փառլի» թատերգութեան զլխաւոր Հերոսը, նոյնինքն Փառլո-Փառլին, թիթեռնիկներու վաճառական մըն է: Ան իր թիթեռնիկները կը ներածէ Կիւլեանի արգելանոցէն, որուն բանտարկեալները կ'աշխատին իր հաշուին, ձրիաբար, որովհետեւ իր հայրը հսկիչ պաշտօնեայ է հոն: Հիւլո Վասէօր, իր յաճախորդը, նոյնպէս վաճառական մըն է, սակայն ջալլամի փետուրներու: Արքահայրը, Սուրիէ, եւ զնիւղեալի մը տիկինը, Սեփիլ տը Սէն Սօվէօր, կը մարմնաւորեն հաւատքի եւ ազգայնականութեան վախատուները: Փառլո-Փառլիի գերմանուհի կինը դժբախտ է: Ան այլեւս հետաքրքրութիւն չի ներկայացներ իր ամուսինին համար, մինչ Հիւլո կը լքէ զայն՝ հետը պառկելէ ետք քանի մը դիշեր: Աւելի'ն. Ծրանսայի մէջ զայն կ'ատեն, որովհետեւ գերմանուհի է, իսկ Գերմանիոյ մէջ կը հալածեն, որովհետեւ Ծրանսացիի մը կինն է: Ի վերջոյ, Մարփօ բանուորը, որ արդելանոց զրկուած է շնչին հարցի մը հետեւանքով, եւ իր կինը՝ Ռոզ, Փառլոյի սպասուհին, կը ներկայացնեն ճշուած աշխատաւորութիւնը:

Մանրակրկիտօրէն ուսումնասիրուած այս եօթը անձնաւորութիւններուն ընդմէջէն՝ Ալամով կը ներկայացնէ հեղինական համապատկեր վաճառականական մտահոգութիւններուն մէջ ընկղմած այդ զարշիլի պլի-էփոնին:

Ան դէրը, որ ելեկտրական պլիւտարտը կը խաղայ «Փինկ-Փոնկ»ի մէջ, հոս կը կրկնուի նոյնքան անհեթեթ եւ ճղճով առարկայարժէքներով, թիթեռնիկներով եւ ջալլամի փետուրներով: Ինչպէս նախորդ թատերգութեան անձնաւորութիւնները, «Փառլո-Փառլի»ի անձնաւորութիւնները եւս ենթակայ են դրամ շահելու մտահալածանքին, այն դրամին, որ պիտի պոռնկացնէ զիրենք ու մղէ ստախոսութեան, զոլորութեան եւ ոճիւրի: Դրամի այս դժոխային շրջանակէն դուրս կը մնան միայն Մարփոն եւ Ռոզը, որոնք կը պայքարին լաւադոյն ընկերութեան մը համար:

Փառլո կը հարստանայ շնորհիւ իր շնաշխարհիկ եւ գոյնզգոյն թիթեռնիկներուն, զորս կը ծախէ թիթեռնիկի ժողովածուներ կազմողներուն, ինչպէս նաեւ առուտուորովը պերճանքի առարկաներու, որոնք զարդարուած են նոյն այդ միջատներով: Ուստի՝ երբ Մարփօ բանուորը կը յաջողի արգելանոցէն խոյ տալ, Փառլո անոր կը ստիպէ թիթեռնիկ որսալ Մարոքի մէջ, որովհետեւ ամբիկեան ցեղին պատկանող թիթեռնիկները հազուադիւրս են ու թանկարժէք եւ անոնց ձեռքբերումը ենթակայ է զանազան վտանգներու:

Մարփօ, որ կը հետադնդուի ուստիականութեան կողմէ, հետքը կորսնցընելու համար կը մեկնի Մարոք, վտանգելով իր կեանքն ու խտէլները՝ միջատներու սիրոյն: Վերադարձին՝ ան կը մտնէ Հիւլոյի աշխատանոցը՝ Աքբահայր Սուրիէի միջամտութեամբ, որ տեղեակ չէ Մարփոյի յեղափոխական անցեալին: Աւելի'ն. Աքբահայրը զայն Հիւլոյին կը ներկայացնէ իրրեւ «զեղին» մը, ծախուած բանուոր մը, որ բնաւ չի մասնակցիր ցոյցերու եւ գործադուլներու, բնահալապահն, պէտք եղած դարադային կը հակադրուի անոնց:

Առ այդ, տնտեսական եւ ընկերային օտարացումի թեման յատկօրէն կը յայտնուի այն մութ խաղերով ու հալիւներով, զորս կը սարքեն Փառլո եւ Հիւլո, շահագործելով մարդն ու բանուորը, որոնք կը վերածուին շուկայի

արժեզրկուած տարկաններու, ի խնդիր հաստատուած դրութեան գոյատեւման:

Սակայն Աբբասօր թէ շիւլոյի հաշիւները կը բախին իրականութեան, որովհետեւ Մարփօ կը յայտնուի իբրեւ աշխատատեղութեան զատին նուիրուած գործընկերէն մէկը, որ ո՛չ միայն կը մտնակցի ցոյցերու եւ դործադուրներու, այլեւ խաղաղապաշտ եւ հակազինուորապետական թուցիկներ կը բաժնէ գործարաններու եւ գորանոցներու մէջ: Իր այդ դործունէութեան համար՝ ան կը մատնուի Աբբասօր եւ շիւլոյի կողմէ: Մինչ այդ, այս վերջինը ձգած է ջաշլամի փետուրներու առեւտուրը եւ սկսած է զրամ դիպիւրէ իր նպատակը հետապնդել՝ զինուորական տարազներու եւ կոնսկներու ճարտարարուեստին մէջ մխրճուելով: Հետեւաբար, Մարփօ կը ձերբակալուի իբրեւ քանդիչ անիշխանական մը, պարտուողական դաղափարներու տարածումով բանակը քայքայելու ամբաստանութեամբ:

Եւ մինչ Փրանսական բանակի դորագունդերը խանդավառութեամբ կը մեկնին ռուբա պատերազմին», Ռոզ Փառլոյին կը յայտնէ Մարփոյի ողբերգութիւնը, լուր մը, որ տակնուվրայ կ'ընէ թիթիոնիկներու վաճառականը: Ան կը հրատարի թիթիոնիկներու աշխարհէն եւ ինքզինք կը նուիրէ ընկերային արդարութեան եւ շքուորներու դատին: Հակառակ իր տխրաբեր թեզին եւ բարոյախօսութեան՝ «Փառլո-Փառլի» կը պարունակէ Ադամովի նախորդ թատերգութիւններուն ջլախտային բանաստեղծութիւնն ու կարոտախտը, որ կու գայ Մարփոյի ձախողութենէն. ան կը ձերբակալուի եւ պատերազմը, որուն դէմ կը պայքարէր, կը պայթի:

Սակայն «Փառլո-Փառլի»-ի բուն արժէքը կը յայտնուի մասնաւորապէս իր կէտեւ եւ քանդիչ հեղինակով: Պէլ Կիմի բուռն ձաղկումը կատարող այս թատերգութիւնը իրեն թիրախ կ'ընէ ու սրտէն կը զարնէ դրամատիքական դրութիւնը, ուր, ինչպէս անունը ցոյց կու տայ՝ կը տիրէ գրամը, դրամազուտիւրը, որ կեդրոնանալով սահմանափակ թիւով մարդոց ձեռքը, ամբիւթեան եւ օտարացումի կ'ենթարկէ զանգուածները:

«Փառլո-Փառլի»-ն, որ կը նկարագրէ հիւանդ ընկերութիւն մը, պտուակուած իրականութիւն մը իր քայքայման րոպէին, ցոյց կու տայ անհամարպտասխանութիւնը (déséquilibre), որ կը գտնուի ամբոխավարներու կեղծ ճառերուն եւ մարդոց իրական դժբախտութեան միջեւ: Հետեւաբար, աստուպիկներ պայթեցնող այս թատերը պէտք էր ցոյց տար եւ կու տայ ոչ թէ «բարի» աշխատատեղին կեղեքումը «չոր» գործատիրոջ կողմէ, այլ պէտք էր ցոյցարեւէր եւ կը ցուցարեւէր ա՛յն՝ որ գործատիրոջ հայրական գուրգուրանքը գործատիրին հանդէպ կը ծառայէ միայն քողարկելու անոր հրէշային շահագործումը:

Այս թատերգութեան մէջ, ուր ժամանակն ու վայրը իրապաշտօրէն ճշգրտած են, հարցը չի վերաբերիր այլեւս անանուն եւ ժամանակէ դուրս ընկերութեան մը, այլ ազատական, «գաղափարապաշտ», մարդկային արժէքներու հաւատացող ընկերութեան, որ յստակօրէն սահմանափակուած, օգակուած եւ ամբաստանուած է:

Ազամով կ'ըսէր.

«Այնտեղ կը փոխանակուէին քիթեռնիկներ ու փետուրներ՝ կիներու եւ բաճուարներու դէմ, Մարտը կը փոխանակէին Եգիպտոսով, Պոսնի-Հերզեգովինա՝ Մարտով»:

Առեւտուրի այս տշխարհին մէջ մարդկային իւրաքանչիւր էակ իրապէս կը սահմանուի իր տնտեսական վիճակով եւ կ'արժէ ա՛յնքան, որքան դրամատան մէջ ունեցած իր հաշիւը: Ինչպէս Մարթը կ'ըսէր, «Փառլո-Փառլի»-ի նիթը «այն անհատները չեն, զորս մեզմէ ունիմք մեր դիմաց, այլ ա-

աւտուրի տնտեսական մեքենականութիւնը: Մարդիկ կը սկսին արժէքներու եւ քիթքոնիկներու աւտուրով աւ կը հասնին մարդոց առեւտուրին աւ կը վաճառեն զանոնք պատերազմի մէջ»:

Ըստ Տորթի, իրենց անտեսական կայութեան ենթակայ անձնուորութիւնները կը բաժնուին երեք դասակարգի. նախ՝ կայ մաքսանենգներու խումբը, որ կը դառնայ Փառլո-Սոյնիէ առանցքին շուրջ: Այս անձնուորութիւնները փոխ առ փոխ կը դառնան դրակոն եւ ժխտական, դործնական եւ կրակորահան եւ ընկերային իրենց արեւելեան կը զուգարդիտի այդ ժամանակաշրջանին եւ միջավայրին, որոնք կը գտնուին առեւտուրի ճնշումին տակ: Այդա դրամատէր Հելլոյի հետ կու գայ դրական դասակարգը, որ սակայն կ'ընթանայ պատմութեան գէժ: Վերջապէս, երբորդը, դարձեալ դրական դասակարգ մը՝ Մարփոյի հետ, որուն պայքարը կ'ընթանայ պատմութեան զուգահեռ, այն պատմութեան, որ աստիճանաբար կը փճացնէ դրամատորութիւնը:

Ազամով կը բացատրէ Մարփոյի դերը.

«Ռեզգի, որ Մարփո ըլլայ այսպէս կոչուած քատերգութեան աչ քէ հերոսը, այլ կեդրոնական անձնաւորութիւնը, այն չափով, որ ան քատերգութեան գործադիրը վարող ենթական չէ, այլ քառին ըսմ իմաստով առարկան, որովհետեւ Մարփոն վաճառելի գլխաւոր ապրանքն է: Եթէ չկարենային վաճառել Մարփոն, քատերգութիւն տեղի չէր ունենար»:

«Փառլո-Փառլի», այսինքն՝ դարասկիզբի ողբերգութիւնը մանր քաղքենիութեան, կը դառնայ պատմութեան կողմէ չլղբացուած փակ աշխարհի մը մէջ, որ կը տապալի իր անհամար հակասութիւններուն մէջ: Յոյց տարով այդ աշխարհին հակասութիւնները՝ Ազամով կ'ուզէր մաս առ մաս քակել անոր պատմութիւնը. «Փառլո-Փառլի»ին նպատակն է երևան հանել անպարտութիւնները, զգայնութիւններն աւ անկարտարութիւնները քանդարող դարաւ սկիզբներուն Ֆրանսայի մէջ գոյութիւն ունեցող լուսանցքային որոշ քաղքենիութեան մը»:

Պարէնութիւններն աւ առասպելները դիմակադերձող այս թատրոնը նոյն ատեն խեղկատակ նկարագիր մը ունի, որովհետեւ այդ վրիժառու զւարթախոտութեամբ, որ երեւան կու գայ զանազանները դարչելի եւ ծիծաղելիորէն շահուողորդ ափ մը մարդոց կողմէ, որոնք իրենց ազատի շահերը կը գտնադարձեն զեղեցիկ զպատմներով, ինչպէս նաեւ այն բացարձակ մեղսակցութեամբ, որ կայ ոստիկանութեան եւ եկեղեցիին մէջէն:

«Անկեղծօրէն կը կարծեմ, — կ'ըսէր Ազամով, — որ արեւմտեան մեր աշխարհին մէջ գրուած քատերգութիւն մը, որ երգիծական չէ, պիտի ըլլար ձախող: Ակնրայի հակասութիւնները կ'առաջացնեն խեղճութիւն եւ ճոյնիսկ հեծկլտանքի խնդուքը»:

Պարազան նոյնն է Պրեխթի մօտ, որուն արծարծած հարցերը չեն վերաբերիր հանդիսատեսը դրական մասնակցութեան մը մղելու, այլ կը վերաբերին զայն հեռացնելու բացասական, արտառոց եւ ծիծաղելի աշխարհի մը ներկայացումէն, որ կը քայքայուի ի'ր իսկ առաջացուցած հակասութիւններուն պոռթկումով:

Իր ընդանցական թեմաներէն անդին զացող քաղաքական այս յոռաջողակ կը շարունակէ սակայն գոյատեւել իր ձեւերով եւ թեքիքներով, մասնաւորաբար մերթ արագ, մերթ դանդաղ ընթացող տրամաթիքական ժամանակով, առաւել՝ գործածութեամբը այն հեղանջին, որ կը յայտնուի շատ լուրջ նիւթին անհամապատասխան ոճով ու նաեւ այն կապով, որ կայ դրամատիրական դրութեան եւ թիթեռնիկներու եւ ջայլամի փետուրներու վաճառականութեան մէջէն: Վերջապէս պէտք է նկատել պրեխթեան հեռա-

ցումի թեքնիքը, որ աւելի այժմէական կը դարձնէ թատերգութիւնը, անոր տալով աւորեայ իրականութենէն որոշ հեռաորութիւն մը: Մահայն պէտք չէ իրարու հետ շփոթել հեռացումն ու իրապաշտութենէ հրաժարումը, որովհետեւ, ինչպէս Ադամով բազմիցս յայտարարած է, պատմական իրականութեան մէջ կայ այնպիսի ահարկելի բանաստեղծութիւն մը, որուն մօտ երեւակայական ամէն հնարք աժդոյն ու տկար կը մնայ:

Ադամովի այս որոտուոց, կծու եւ խայթող թատերգութիւնը զայրացուց Քաղցեհի մտաւորականութիւնը եւ անոր բոլոր վաճառականամիտ, բայց նաեւ «արժէքներու» հաւատացող ներկայացուցիչները: Ընդհանրապէս քաղաքամար, ազնիւ եւ չափաւոր քաղցեհի ֆինաղատներու մօտ յայտնուած այս զայրոյթը ու զգացական հակազդեցութիւնը ցոյց տուին, որ Ադամով իրապէս յաջողած էր դիմակադերձել նոյնիքն այդ քաղցեհիութեան կեզծ վաղափարտապաշտութիւնը: «Փառլո-Փառլի»ին ակնարկելով՝ Ռոպերթ Քամփ կը խօսէր «քունատր եւ յարձակողական ընկերվարութեան» մը մասին: Թատերական ուրիշ ֆինաղատ մը, Ժան-ժազ Կոթիէ, կը ֆինաղատէր անոր «Արեւելեան Պերլիմի ընկերվարական մեծ պատահաները յիշեցնող ցուցակաւարիւնը», իսկ քրիստոնեայ գոյապաշտ փլիխովայ Կապրիէլ Մարսէլ կը խարանէր թատերագրական «հայրենագործի քննադատը, որ անկարող է հասկնալ ազգային արժէքներուն եւ աւանդութիւններուն նշանակութիւնը»:

Այսօրուայ մեր աշխարհին մէջ, ուր կը տիրեն միջազգային դրամատիքութիւնը եւ համայնաւար դիւանակալութիւնը, «Փառլո-Փառլի»ի պատմութիւնը աւելի քան երբեք այժմէական կը մնայ: Անոնց առաջնորդներուն, խաբէութիւններուն եւ ոճերներուն դիմաց՝ «Փառլո-Փառլի»ի հեղեական ծագրը եւ անխլիանութիւնը կրնան միայն արագացնել այն ամբողջական քանդումը, որ կրնայ ազատագրել մարդը դրամատիքութեան թէ համայնաւարութեան օտարացնող, ճնշողական ու գապողական դրութիւններէն:

(Շար. 3)

ՎԱՋԷ ՆԻԻՐԵԷԹՎԵԱՆ

Ս. Կ Ի Բ Ա Կ Ո Ս Ե Ա Ն

Պնդանկարչական Վերախաղ

(ԱԿՆԱՐԿ)

I

Լիբանանի պեղարուեստական մըթնոլորտը յաճախ կը սպառնայ երիտասարդ ուժերուն, երբ այս կամ այն նորայայտ արուեստագէտը կ'առաջնորդուի սպառողական արդի ընկերութեան քմահաճոյքներէն, եւ իր եկամուտը բազմապատկելու մղմանով թելադրուած՝ կը սկսի արտադրել շուկայի պահանջներուն համոժայն:

Նման կացութեան մը մէջ կ'անդամալուծուին արուեստագէտին յայտնատեսական կարողութիւնները, կը քարանայ երեւակայութիւնը ու կը մարի նոր արկածային դրոթիւններ կատարելու ներքին ա'յն մղումը, առանց որուն անկարելի կը դառնայ նոր աշխարհներու յայտնագործումը:

Այս կացութեան մէջ, անլիզ արուեստագէտէն կը մնայ անյարող պաստառներ միայն, որոնք ոչ մէկ նշանակութիւն կը ներկայացնեն, որովհետեւ արուեստը ծանօթ դէմքերն ու տեսարանները յարողազոյն դիտելով, գոյներով ու քիմիքով պատկերացնելու աշխատանք չէ՛, այլ՝ անտեսանելի հոգեվիճակներուն անակնկալ ընթերցում:

Արեւմուտքի ճարտարարուեստական քաղաքակրթութեան մէկ կեղծ օրինակն է Պէյրութ քաղաքը: Սպառողական ընկերութիւնները զեկալարող քաղաքակառուցեան կապիուստին մենք կը հանդիպինք թէ՛ մեր առօրեայ կեանքի ընթացքին եւ թէ՛ արուեստի շրջանակներէն ներս, ուր գեղանկարչութեան ցուցաբ-

բահները կը վերածուին արեւելեան պագար հոսող ու արեւմտեան աններդաշնակ տեքնոլոգի պնդուած սիււփըր-մարաքէթներու:

Ու քիչ չէ թիւը անոնց, որոնք իրենք գիրենք կը կոչեն բեմադրիչ, գերասան, գեղանկարիչ, երաժիշտ, բանաստեղծ, արձանագործ, երգիչ, այսինքն՝ կարճ ու կտրուկ «արուեստագէտ», եւ ասոնք կը բաղկացնեն զօրախումբը ինքնակոչ այն «արուեստագէտներուն, որոնք իրենց բացած արուեստի կրպակներուն գոյութիւնն ու առատ հասոյթը պաշտպանող սնուողակի եւ ուղղակի ճառերով կը զօլերդեն մէկգոմէկ, ու դեռ ամենայն համարձակութեամբ պիտի կը շարժեն իրենց կատարած ճեղքանցներուն մասին, միաժամանակ յայտարարելով՝ «չունինք գեղարուեստասէր հասարակութիւն, որ կարենայ մարտի դժարամարս գործեր: Մարդիկ յաշխարհի կը հասնին տուն կամ թատրոն զուարճանալու համար: Հանդիսատեսն ու ընթերցողը բարդ ու հոգեվերլուծական պաստառներով, թատերգութիւններով ու քերթուածներով չարչարելու իրաւունք չունի արուեստագէտը: Մեզմէ կը պահանջուի հաճոյացնող ներկայացումներ, պաստառներ, ոտանաւորներ ու երգեր, որոնք պէտք է դիւրամատչելի եւ դիւրամարս ըլլան, շոյին ականջը, չճմլին միտքն ու երեւակայութիւնը, սեւ գոյներով չխաչեն տեսողութիւնը»:

Չակերտեալ արուեստագէտի այս նմոյշները կը զժգոճին նաեւ հասարակութենէն, ըսելով՝ «գեղարուեստական

մակարդակ չկայ, դնահատիչ չեն դիտեր, պարզապէս սնուպներ են, որոնք նախա-
 լինով պատասխարուած կիլիկիա եւ Լեո-
 նալիքոսնան կը հոտին»։ առանց երբեք
 յիշելու, թէ այս խաթարման գլխաւոր
 պատասխանատուներն են իրենք, տիրող
 տխուր կացութեան ամուլ հայրերն ու
 մայրերը, որոնք բեմ բարձրանալէ առաջ
 հաշուի առած են հանդիսատեսին մա-
 կարդակը եւ վրձին շարժած՝ համաձայն
 այս կամ այն սնուպին եւ անոր սալա-
 Ո՛հն...

Պատեհապաշտ արուեստագէտին վը-
 րայ բռնակալի դեր կը կատարէ ցուցա-
 սրահին այն ապուճէ յանախորդը, որ կը
 գնէ համաձայն իր վաճառականական
 հոտառութեան. Պէյրուսի ցուցասրահ-
 ներուն այս յանախորդը գիտէ լափել
 հանրածանօթ գեղանկարչին միջակ ու
 ոչ-յաջող պատասանները, մինչ տակաւին
 աստղի շիբրածուած արուեստագէտի մը
 անակնկալին կը ժողովնայ պաշարներու-
 թեամբ, ստոած աչքերով։

Հոս է, որ կը սկսի արուեստագէտին
 խաչելութիւնը, երբ ան ժպտազէմ ու
 ծեփծեփուն շարժումներով «լաւ, սի-
 րո՛մ» կը պատասխանէ քաղցեմի յանա-
 խորդին։ Այսպէսով արուեստագէտը
 կ'իջնէ արհեստագործի աստիճանին եւ
 կը սկսի ինքզինք կրկնել ու կրկնել։

Նման մթնոլորտի մը մէջ արուես-
 տագէտ ըլլան ու ինքզինք հանրութեան
 եւ մասնաւորաբար աւանդական յանա-
 խորդներուն պարտադրելը կ'ենթադրէ
 յեղափոխական յանդիմութիւն, բան մը,
 որ ստեղծագործ արուեստագէտի մը զար-
 դացումը ապահովող նախապայմանն է։

Հետագայ տողերուն մէջ մենք նկա-
 տի առած ենք իրանանցի երիտասարդ
 արուեստագէտներէն այն քանի մը հա-
 տը, որոնք ըստ մեզի նոր իմաստ մը տը-
 ւին իրանանեան գեղանկարչութեան։

II

Օրֆէոս Շուրթի, Հասան Ճունի,
 Պարիտ Հաստատ, Մուսա Սէուտի եւ
 Ասատուր Պզտիկեան եղան օղակները այն
 շրջանին, որոնք պայծառացուցին իրա-



ՕՐՖԵՐՍ ՇՈՒՐՏԻ

նանցի երիտասարդ գեղանկարչներու
 սերունդին դեմագիծը։

Եթէ փոքր տարիքէն լիբանանեան
 ու միջազգային գեղարուեստական շրջա-
 նակներուն ինքզինք պարտադրած Ասա-
 տուր Պզտիկեանի յաջողութիւնը սպա-
 սելի էր, այսուհանդերձ իրական անա-
 կընկալները միւս անուններն էին, որոնց
 պատասանները հանդիսատեսը մագնիսող
 կենդանութեամբ մը կը յատկանշուէին։

1975ի դարձան հետ սկսան բողոք-
 ջիլ նաեւ այս ցուցահանդէսները, որոնց
 առաջինը մեզի ներկայացուեցաւ Օրֆէոս
 Շուրթիի կողմէ, որուն յաջողեցին
 գարնանային օրերու շափ կենտրոնակ
 անհատական ցուցահանդէսները Հասան
 Ճունիի, Պարիտ Հաստատի, Մուսա
 Սէուտիի եւ Ասատուր Պզտիկեանի։

Լիբանանցի երիտասարդ գեղանկա-
 րչներուն ներկայացուցած անհատական
 ցուցահանդէսներու շարքին բացումը կա-
 տարեց Օրֆէոս Շուրթի, որ ՆՂ Մարտի
 երեկոյեան զԿալըրի Ուանջ ցուցասրահին
 մէջ ներկայացուց իր անհատական շո-
 բորդ ցուցահանդէսը, որ իրրու թեմա կը
 շօշափէր բեղմնաւորութեան գոյգ խոր-
 հերդանանները՝ հողն ու կիներ։

Եթէ Շուրթիի նախորդ գործերուն
 մէջ պակտող տարր մը չէր կարգ մը
 պատասաններուն կեղանկար հանդիսացող

յրոնտեսութիւնը, կարելի է անվարան ըսել, թէ անոր նոր գեղանկարները արուեստագէտին զարգացումն ու ազատադրական հոլովոյթը գրեւորող վկայադիրներէն, որուն յաջողագոյն մէկ նմոյշն էր «Արմատակամ ազատագրումը» անուն պատուարը:

Իր այս ցուցահանդէսով Օրֆէոս Շուիթի կը ներկայանար բիւրեղացած դիմադրիծով մը: Ան ձերբազատուած էր այլևս նախորդ շրջանի իր ստեղծագործութիւններուն մէջ յաճախ երեցող սեւ փռնէն, սարդոստայնիներէն ու մահաբեր չղջիկներէն: Ընդհակառակն, առատ լոյս ու հովուականութիւն մը կը ծաւալէր իր ջրաներկերէն, ուր այլևս զոյութիւն շունէիին մեռեալ տախտակներ, այլ հողի ընդերքներէն պայթած կանաչ ու փափուկ ծիլեր եւ անհուն երկինք:

Այսպէսով, գերիբարակաւ տիրութեաներու տէր այս արուեստագէտը կը զատորոշուէր դերբերապաշտներու հանդանակին ընդհանուր գիծերէն, որովհետեւ Շուիթիի գերիբարակաւ աշխարհընկալումը ուղիղ յիսունըմէկ տարի առաջ, դրական ու գեղանկարչական բնազուտաներէն ներս երևան եկած գերիբարակաւ զարոյցի վայրագ ու ըմբոստ սծին հակադիր մտեցումն էր, հակառակ այն հասարակ եզրին, որ դասական դերբերապաշտներուն պէս, Շուիթիի հետ կը խուզարկէ միշտ պեղման կարօտ մնացող գերազոյն իրականութիւնը՝ մարդկային ներաշխարհը:

Չէ վրաներկերէ կը բազկանար այս արուեստագէտին վերջին ցուցահանդէսը, որուն իւրաքանչիւր ստեղծագործութիւնը փորձ մըն էր, որ կը ձգտէր լուսապատկերի կեանքի յաւերժութեան դազափարը մարմնաւորող զոյգ խորհրդանշաններուն՝ հողին ու կնոջ, յարաբեղմնաւորման դադունիքներն ու խորհուրդները:

Իր այս ցուցահանդէսով, Օրֆէոս Շուիթիի վերնահանապէս կը ձերբազատուէր գերիբարակաւ զարոյցի կայանքներէն եւ, իր անհատականութեան ու մըշակութային հարօտստ զբամազլուիին

օգտագործումով՝ կը դտնէր իր սեփական ձայնը:

Հնդկական ու քրիստոնէական էութիւնը, գեփիւտի մը զուարթութեամբ, կը սահի Շուիթիի պատասաններու տարածքին, ուր կը յորդի արեւելեան լուսաշող միստիսիզմը:

«Արմատակամ ազատագրումը» անուն պատուարով Շուիթի կը բնութագրէ քանաստեղծական ինքնուրոյն աշխարհ մը: Նոյնն է պարսկան նաեւ միւս ջրաներկերուն, ուր բոլոր շնչաւոր եւ անշունչ ներկայութիւնները՝ կին, հողաշերտ, բոյս, հորիզոն, ամպ, երկինք, ծով, ոստ, կոհակ, խիճ, եւայլն, կ'ազատազրուին մահուան ճակատագրէն, կ'ըլլան տարօրէն եզակի եւ բանաստեղծական այն աշխարհը, ուր ի յայտ կու գան վեհանմն հոգեվիճակներն ու լուսանաճանչ ազատագրումը: Այլ խօսքով՝ բեղմնաւորութիւն, որուն միջոցով ան կը յաղթահարէ կեանքն ու մահը, իսկ մեր աշխարհն դիմաց կը սկսին բարձրանալ անդիմիտեանքի աներեւոյթ ուղիները...

Այս բնուանուր մթնոլորտին մէջ Օրֆէոս Շուիթի կը ձուլէ տեսողական աշխարհը երեւակայական ներաշխարհին մէջ, եւ գլխահակ թուրմի մը ամօթխածութեամբ կ'երգէ հոգն ու կինը, բեղմնաւորութեան այս զոյգ աղբիւրները, որոնք Շուիթիի վրձինին նուրբ գիծերով ու թափանցիկ տարածոյթներով կ'արարեն բազմիմաստ բովանդակութիւն, որ կը ծնի հողէն եւ լոյսէն եւ կը սյանայ անհունն ի վեր, դառնալու համար կեանքին շարժատական ազատագրումը:

III

Հասան ծունկի, որ եօթանասնական սերունդի ամէնէն յանձնառու արուեստագէտներէն է, Ապրիլ ամսուն սկզբնաւորութեան, «Պրնթաթթ» ցուցադրանքին մէջ ներկայացուցած իր անհատական շրջորդ ցուցահանդէսով հաստատեց ծնունդը տարիներու հետեւողականութեան եւ փորձառութեան նպաստով հըմ-

տացած վրձինին, ինչպէս նաև պայծառացած իր տեսողութեան մասին, ա՛յն տեսողութեան, որ այլևս դիտէ Հակա-նը ընդհանուրէն անջատելէ ետք, զայն ներկայացնել դիւցաղնաշունչ արտայայտապաշտութեամբ մը:

Հասան Ճուշի, որ ծնած է Հարաւային Լիբանանի Բուժին դիւզը, բազմիցս կ'ողնկոչէ իր ծննդավայրը, կը դրսևւորէ Լիբանանի Հարաւային Հողամասին ամէնօրեայ ողբերգութիւնն ու մթնոլորտը, դայն թարգմանող եւ այդ մթնոլորտին մէջ ծնած ու տառապող զիմագիծերուն սարսափահար եւ անապահով արտայայտութիւններուն թաքուն խորհրդաւորութեամբ:

Լիբանանի Հարաւը կը յատկանշուի տառապանքով ու բնութեան դեղեցիկ դոյներով: Վարդ եւ կակալ: Տառապեայ էակներ եւ բանաստեղծ ծով: Փութորկոտ ներաշխարհներ եւ նարնջենիի պարտէզներ: Անապահով գիշերներ եւ ձիթենիի պարտէզներէն ծնող-խեղդուող բոյրեր:

Այս բոլորը ներկայ էին «Գոնթաթթ» ցուցասրահին մէջ: Ճուշիի ազօտ դիմանկարները միաժամանակ վկայութիւններ էին մարդու մութ ներաշխարհին եւ իր ծննդավայրի ու մերձակայ դիւզերու բնակիչներուն պղտոր ու անապահով ճակատագրին մասին՝ իրագործուած Հեթանոսաշունչ բանաստեղծականութեամբ մը:

«Վտարումը», «Այցելութիւնը», «Խումբը», «Մայրը», «Հարսին ձիւն», «Մեծարանք Պուրն-Համուտին» եւ միւս իւզաների պատասաններով, երիտասարդ արուստազէտը կու գար դիւցաղներգելու տառապող մարդուն քառնն ու դժոխքը, որոնք կը կոչուին ներաշխարհ եւ կեանք: Այս իսկ պատճառով, անոր պատասանները ջիւղերուն հանդարտութիւն բերող սալոնային դիմադիմ մը շունենալով հանդերձ, կը հեռանային նաեւ ձգտում-նաւոր արուեստին ծանօթ սահմաններէն:

Ճուշիի պատասանները հարցեր արծարծելով մէկտեղ, մասսաները քաղաքականացնելու առաջադրութեամբ դեկավրուտը եւ հրապարակագրի պաշտօն-



ՀԱՍԱՆ ՃՈՒՇԻ

ները զբաւած շարքային արուեստագէտի մը, այսպէս կոչուած «հետադարձուչ պոթիլուսներ»ը շէն, հակառակ այն բացայայտ իրողութեան, որ այս արուեստագէտին երեւակայութիւնը մեզ չ'առաջնորդեր նաեւ վերացական աշխարհի մը: Ընդհակառակն, Հասան Ճուշիի երեւակայութիւնը կը մնայ առօրեայէն քաղած իր մութ տպաւորութեանց չորս պատերուն միջեւ, որովհետեւ ան յանձնառու է իր ներքին կոչումին, որուն ճշնշումին տակ կը գտնուի մարդ-արուեստագէտը, որ միջավայրի մը հարազատ ձայնն է, այսինքն՝ վտարեալ ու թափառական մարդը: Այն մարդ-արուեստագէտներէն է Հասան Ճուշի, որ կը հալածուի առօրեայի մղձաւանջներուն կողմէ, որոնք սոսկական տպաւորութիւններ չեն, այլ կ'ըլլան արուեստագէտին երեւակայութիւնն ու երազը, որուն յառաջացուցած մթնոլորտին ներքեւ կը տըւայայտի իր իսկ երազներէն հալածուող արուեստագէտը:

«Վտարումը» խորագիրը կրող պատուրը լաւագոյնս կը դրսևւորէ այս հոգեվիճակը: Հարաւային Լիբանանի տագնապէն ու արիւնէն ծնած շնչաւոր էան է անիկա: Ամէն օր բռնաբարուող ու հրկիզուող հողին ամբաստանութիւնը մարդուն ննանկացած նկարագրին դէմ, ուր վտարուած զոյգը մեղի կը թելազրէ առաջին վտարեալները՝ Ազամն ու Նւան, իսկ այս պարագային պաղեստինցիները եւ իրենց այրենիքէն Քիզիք-


պէս մտարուած բոլոր երազահարները, որոնք կը շարունակեն թափառիլ իրենց ներքին դժուրներուն մէջ: Այսպէսով, կը ճոխանայ Հասան Զունիի պատասաններուն պարունակը, երբ իր կատուները կը յաջողին բարձրանալ համոմարգկային հողեփիճակներու, եւ մեզի այնպէս կը թուի, թէ մարդուն մէջ ծաւալող դադանին ու դադանութիւններուն դէմ դռացող դո՛հին հայեացքներուն չափ ուժ-դին կը հնչեն հողն ու խզճճտանքի մայ-ները:

Ճկուն է Հասան Զունիի վրձինը, որ յեզափոխական ապուրապաշտներուն

պէս կը ծանրանայ էական դիժներուն վը-րայ, կը ծաւալէ ներքին այնկոծումները բնթեռնելի դարձնող իւրայատուկ ար-տայայտութիւններն ու մասերը մարմին-ներուն, որոնց ճոխացման մէջ կը կոր-սուին մանրամասնութիւնները եւ իր մա-քուր ներկայութիւնները կը դառնան մայա-ւոր ներկայութիւններ: Այս իսկ պատճա-ռով Հասան Զունի կը հասնի ապուրա-պաշտ-արտայայտապաշտութեան խո-տուն մակարդակին, ուր անտեսանելի ներաշխարհը կը վերածուի տեսանելի հողեփիճակի մը՝ ծաւալող մարմնամա-սերուն ու ձեւերուն ուժական արտայայ-



«Հատումը» եւ սարսափաւար վտախալները:
digitised by A.R.A.R.@



«Այցելութիւնը» կամ հաղորդակցութեան գուրկ այցելուները :

տութեան ցցուն շնչտնու շնորհիւ :
Հասան Ճունի «Մանուկները կը խաղան», «Այցելութիւնը», «Մեծարանք Պարն-Համուտիմ» եւ այլ անուն կրող պատաստներու տարածքին կը խօսի գոյներով : Գոյները կը ջնջեն մանրամասնութիւնները, — աչք, թիթ, բերան, թարթիչ, հասիւն, կը վերածուին տարածուող լեզուի մը, ա՛յն լեզուին, որ ողորդական ու յուզումնայրգ գոյներով կը դրսևերէ մարդկային տառապանքը :

«Մանուկները կը խաղան» կամ «Այցելութիւնը» պատաստի շնորհներուն պէս տառապահար էակներ են իր տիպարները : Ընդհանրապէս կեանքին ու նահատակներէն դարձուած «այցելուներ», մեռութեան ճիրաններուն մէջ դալարուող զոհեր, զորս զրաւորելու համար Ճունի կը գիժէ մաքուր, ուժեղ եւ հնչեղ գոյներու : Այս իսկ պատճառով, հարկ չենք զգար մանրամասնութիւններու, որոնց

ըսելիքը բարձրադասակ կերպով կը հաղորդեն արուեստագէտին դոյնիքը՝ մերթ կայծակներու ուժգնութեամբ, մերթ ծաղիկներու փափկութեամբ, մերթ եաթաղանի սառնութեամբ կամ արեան ջրմութեամբ, բոյրով, հունչով : Հաղորդակից ու գորովալի այս լեզուն, որ կը ծիլ իր սրտէն, ուժգնորէն կը թափանցէ հանդիսատեսի հողիին, երբ ան կը յաջողի իր լեզուն շաղախել գոյնի, ստուերի եւ լոյսի օժանդակ հմայքներով :

Եթէ տեղ-տեղ մարմիններն ու անդամները ծաւալման ենթարկող ոճին շափազանցումին պատճառով, անոր կարգ մը պատաստներուն մէջ կ'երևան անհազարդութիւն եւ քարացեալ ներկակոյտներ, այսուհանդերձ, «Վտարումը», «Մեծարանք Պարն-Համուտիմ», «Այցելութիւնը», «Խումբը» եւ «Մայրը» անուն իւզաների պատաստները լատարձաբար պայտուցեն այն լուսաւոր հասունութիւ-

նը, որուն հորիզոններն ի վեր հաստատա-
կամ քայլերով ընթացող ուղեւորն է Հա-
րաւային Լիբանանի ուղեբեզութիւնն ու
գծոթքը գիւցազներգող այս արուեստա-
դէսը:

IV

«Բանաստեղծութեան մարմինը» ընդ-
հանուր անունին տակ, Ապրիլ 10ին,
«Քոնթամփորէն» ցուցասրահին մէջ, Մու-
նա Մէուտի 26 դժապատկերներով կը
փորձէր մարմնաւորել անմարմին տիե-
զերքը՝ բանաստեղծութիւնը:

Պատկերապարզումներ (Illustra-
tions) չեն Մունա Մէուտի ստեղծա-
գործութիւնները, այլ լիբանանցի յառա-
ջապահ բանաստեղծ Մտնիսի «Եզակիին
յոզմակիին եղանակով» պոեմին միջո-
ւորտէն թելադրուած երկրորդ ստեղծա-
գործումը, որ հակադիր վիճակներէ
բազկացած բարդ բանաստեղծութեան
մը սաղմնային զիծերով կատարուած
նուրբ ընթերցումն է նաեւ:

Մունա Մէուտի վկայաբեր արուես-
տագիտուհի մըն է, մէկը այն բազմա-
կողմանի գէմքերէն, որոնք իրենց գե-
ղարուեստական պատկեր յազկցնելու
համար զիրք մը կամ քերթուած մը մի-
այն չեն ըմբռններ, այլ՝ անոր ջերմ
հոսանքէն հմայուած՝ կը թարգմանեն,
կամ զիծերու թռիչքով կը կառուցեն
հողիին մէջ յառաջացած թրթռացում-
ներն ու սլացքները:

Երրորդ անգամն է, որ Մունա Մէու-
տի կը վկայէ ուրիշ գրագէտի մը ստեղ-
ծագործութեան մասին: Պօսելով իր ա-
ռաջին փորձին մասին՝ ան կը գրէ. «Ա-
ռաջին անգամ, երբ ներկեր ու վրձիններ
շալկած գացի պաղեստինցիներու գաղ-
թակայանը, հեզմանքով մտնեցան ինձի,
ըսելով՝ «Աւելի լաւ կ'ընէիր, եթէ ներկ
ու սպուարաթուղթ ընրելու փոխարէն՝
հաց ու միրգ ընրէիր մանուկներուն:
Մեր մանուկները քաղքեմի մանուկներ
չեն, այդ իսկ պատճառով, անոնք ներ-
կերով խաղայ չեն գիտեր, այլ՝ գեճով
ու պահածոյի պարսպ տուփերով»:

Ու քիչ մը անդին կը կատարէ հե-
տեւեալ եզրակացութիւնը.

«Բայց շարունակեցի երթալ, հակա-
ռակ ինձի ուզուած հեզմանքի սուր
խայթացներուն: Սկսան ընտելանալ կա-
մաց-կամաց: Սորվեցուցի ներկերը գոր-
ծածելու եղանակը մանուկներուն, որոնց
հոգիներուն եւ երեւակայութեան մէջ
հայրենայնորդ անեցաւ օրըստօրէ ու գոյն
ստացան Պաղեստինն ու դիմադրական
շարժումը բնութագրող գծաքառաբիւն-
ները»:

Իր հովանաւորութեան տակ կատար-
ուած աշխատանքներուն պսակը հանդի-
սացաւ մանուկներուն դժադրութիւններէն
կազմուած ալպոմ մը, որ լոյս տեսաւ
«Մանուկներուն վկայութիւնը պատնե-
րագրի ժամանակին ընթացքին» խորա-
զրով:


Մունա Մէուտի երկրորդ անգամ
վրձին ու ներկ առաւ, որպէսզի կատարէ
պաղեստինցի նահատակ արձակագիր
Ղաստան Քանաֆանիի դրչէն ժայթքած
զրականութեան զծանկկումը, այն օ-
րերուն, երբ զբազէտը կ'ապրէր իր կէտն-
քին համրուած օրերը: Այսպէսով, Քա-
նաֆանիի նահատակութենէն ետք, Մու-
նա Մէուտի սկսաւ վկայել այն նոր ար-
եան մասին, որ կը բարձրանար ահաբեկ-
ուած արուեստագէտին յիշատակէն եւ ա-
նոր յեղափոխական զրականութեան էութե-
թենէն:

Այս տարի, արուեստագիտուհին
փորձեց նոր ոճ մը, սկսաւ սուզուել Ա-
տնիսի քերթուածին ծովերն ի վար,
կամ՝ զուրս դալով բնազանցական մշուշ-
ներէն, զսոնալ ընկերակից անոր սողո-
րուն եւ, միասնաբար, ճամբորդել ան-
հունն ի վեր, գէպի անձանթթը:

Ատնիս կը գրէր.

Երկիրը մարմին չէր, վերք էր.
Ինչպէ՞ս կարելի է ճամբորդել վեր-
քին եւ մարմնին միջու, ինչպէ՞ս կարե-
լի է հաստատուիլ: Վերքը սկսաւ այլա-
փոխալիլ զոյց ծնողներու եւ հարցումը
ըլլալ հայրենիք, — հայրենիք ի բաց,
դուրս ե՛լ, ով մանուկ —

Ային ելաւ դէպի հայրենիք ընկերակ-
ցութեամբ արեգակին Պաղեստին՝ տեւու-





ՄՈՒՆԱ ԱԿՈՒՑԻ

րակ լույսերու եւ պատմութիւն մը գաղտնի մահուան համար, որ ժամանակ կը շնորհէ անոր, որ կու գայ ժամկետէն առաջ եւ որ չունի ժամանակ...

Ատոնիսեան այս ժամանակը իր բընագանցական ու միաթիք բովանդակութեամբ հիփոթոսացուցած էր Մունա Մէուտին: Մահուան ժամկէտին մէջ ծնող կեանքը կը ծնէր նաեւ իր էութեան մէջ, իսկ սեռային հեշտանքի տուայտանքներուն մահացած սերմը կ'արմատանար իր հողին ծալքերն ի վար: Բանաստեղծին կողմէ ստեղծուող այս բարդ աշխարհին առաջին քաղաքային կ'ըլլար նկարչուհին: Այդ իսկ պատճառով, ան զժուար թէ կարենար լուռ մնալ ի տես իր ներաշխարհին հրկիզումներուն:

Այս այն պահն է, որուն ընթացքին Մունա Մէուտի կը մտնեայ ատոնիսեան աշխարհին, ուր բանաստեղծութիւնն ու նկարչութիւնը կ'ընդհուղուին իրարու: Խօսքի եւ գիծի հաւասարումը ան կը վերադրէ գիծերով, որոնք կը վկայեն բանաստեղծին կողմէ յոգնակի մարդուն կերպարանքով ստեղծուած եզակի Աստուծոյ նոր պատկերին մասին:

Այո՛, ան կը գրէ գիծերով: Կը գծէ բանաստեղծելու նման, որովհետեւ բաները կազմուած են տառերէ, որոնք, իրենց կարգին, կը բաղկանան ձայնէ եւ գիծէ: Մունա Մէուտի գիծ-տառերը մեզի կու տան ա՛յն տպաւորութիւնը, թէ շինական սեւ մեջանք արմատն է շնչաւոր իւրաքանչիւր մասնիկի: Մեկան չէ անի-

կա, այլ հեղուկ-լոյսը՝ արիւնը, որ կը հոսի կոյս թուղթին վրայ, կ'ապրի իր երկունքը, կը կազմէ բոլորակներ, ուղղանկիւններ, կը ծլի, կ'երկփեղկուի, կ'ողջադուրուի այլ դիծի մը հետ ու դարձեալ կը փոթորկին գիծերը՝ առաջատի գիշերով գիտովցած:

Յար ու նման յարածնող բանաստեղծութեան տողերուն, Մունա Մէուտի գիծերը կ'ապրին իրենց բեղմնաւորութիւնը, իրենց զուգորդութիւնը եւ կը կազմեն պատտաններուն մանրամասնութիւնները չըջանակող արգանդին բոլորագիծը, որ մերթ կը նմանի կնոջական մարմիններու կերպարանքին, մերթ տեւի մը, մերթ լուսինի մը, կամ թռչունի մը:

Այսպէսով, իր պատկերամեկնումները կը յաջողին ըլլալ նուրբ գիծերով իրադործուած գծաբանաստեղծումը Ատոնիսի «Եզակի յոգնակիին եղանակով» պոեմին, անոր հարազատ զարդացումը, ենթաթեզաթիւր, ուր բանաստեղծին նման Մունա Մէուտի եւս կը յաջողի հասարակ յայտարարի վերածել մահն ու կեանքը, գիշերն ու ցերեկը, քարն ու թռիչքը, ջուրն ու հուրը:

Լիբանանցի երիտասարդ բանաստեղծու արուեստի քննադատ Սամիր էլ-Սայեդ, իր սերնդակից արուեստագետուհիին ցուցահանդէսին առիթով գրած նշմարին մէջ կը կատարէր սոյն հետաքրքրական վերլուծումը:

«Անոր պատանուներուն հետ մեմֆ կը գտնուինք պատրաստութեան ակնթարթներուն մէջ: Պատրաստութիւն վասն ծրուանդի եւ պատրաստութիւն ծնունդը մտնողու ի խնդիր: Ամէն բան կը ծնի իր երկրորդ ծնունդը, եւ կ'առնէ առաջին քայլը մահուան մէջ, ամէն բան կանգ կ'առնէ այդ ակնթարթներուն, սրանց մէջ կը մրանան հակադիր կողմերը, այլափոխման ակնթարթները, ուր ժամանումի ցանկութիւնը բացակայումի ցանկութիւնն է...: Այս կ'ըսէ մեծ այս բանաստեղծութիւնը:

«Եւ յանկարծ մեմֆ կը ժամաննմ: Եւ եթէ այս բանաստեղծութեան ըստծը այն է, որ կ'ըսեն այս գծապոլիսինն-

A.R.A.R.©

րը, ուրեմն անիլա մեզմէ կու գայ: Եւ միթէ մեմք չե՞մք գտնուիր այն եզանային մէջ, որ միացաւ եզակիին եւ յոգեակիւ միջեւ:

Բանաստեղծական այս աշխարհին երկրորդ ծնունդը կը բաղկանայ 26 դժամեկնութիւններէ, որոնք կը սկսին զբնականութեան անուն գործով: «Ստեղծումը» նախերգանքն է կատարուելիք ստեղծագործութիւններուն, որոնք պիտի ձեւակերպուին յաջորդ պատասաններուն զարգացող կշիռայթին զուգահեռ ածող լինելութեամբ: Ներքին բովանդակութեան հետ հաշտ յղացքով մը Մուսա Սէուտի կը կատարէ առաջին ստեղծագործումը: Արարեքէն լեզուով գրուած անը (եւս, որ անձնական դերանունի երրորդ դէմքին եզակի արականն է) կը գրաւէ կեդրոնը եւ վերջին դիրքը կը շարունակէ իր ճամբորդութիւնը՝ բաղկացնելով դիրար օղակող բոլորակներ: Անմահօք Անը Աստուածն է այս պարագային, պղտոր ու լուսաւոր ա՛յն գոյութիւնը, որ կ'ըլլայ միացեալ պորտը գիրկընդխառնուած զուգին, որ, իր կարգին, նոր ու ամբողջացած ծանրութեան կեդրոնը, որուն վրայ կը գուռարուին դեռ շտապապատ յաջորդ ճանգրուածներուն աւերող ճանգրուածները ու կ'որ պարզ գիծերը, այսինքն՝ ապագային ստուերը:


Ու կը շարունակուի հանգրուաններու ստեղծագործութեանց ճամբորդութիւնը՝ գնամեկնութիւն առ գնամեկնութիւն: Գիծերը կը սկսին ալեկոծիլ, խաչաձեւել ալլ գիծեր, կծկուիլ իրենք իրենց վրայ, ապա՝ դուրս կը մեկնին իրենց պատեանէն՝ շարունակելու համար լինելութեան մարտը:

Ու կը շարունակուի ստեղծագործութեան հանգրուանային ճամբորդութիւնը, գիծերը կը սկսին ալեկոծիլ, խաչաձեւել ալլ գիծեր, «կը լուսան ջուրը» եւ մարմիններու զուգորդութեան կը ծնին խոյանքը մարմնաւորող թռչուններ, որոնց առիթով եւս, ճիշդ բանաստեղծին պէս, «հարիզոններն իր առջեւ կը փշրելին, ինչպէս փարչը ցիւնիին», եւ դեռ տեղի կ'ունենան այլափոխման սեղատը:

Լուծիւններն ու մտկոյթագութիւնները, «նրպէսզի արտը խոտին յաւը պահէ՝ կը ծածկուի յարդերով», իսկ «մեզ կ'ողջունեն քոծծները ցանկութեան»:

Այն հողեփիմակն ու ժամանակն է առիկա, որուն ընթացքին «ախուսն ու դէմքին միջեւ կը բարձրանայ բարտին եւ լեզուն ետ կը դառնայ իր առջին բընակալանը», հեթանոս սերնդագործութեան, որ համազօր է աստուծային արարչագործութեան, որուն պատճառով «Սիրահարին մահիկը» պատասաբ կ'ապրի իր լինելութիւնը «Քարտէս երկրի սաղմին համայն» անուն ստեղծագործութեան մէջ: Այլա, կը կատարուի «Ստեղծագործութիւն թիւ 2»-ն, որ շունի առաջինի պարզութիւնն ու սաղմնային դիմադիժը, այլ բարդ էութիւն մըն է, ուր «հույն ու ջուրը կ'ընդլուգուին իրար», «կը ջնջենք մեր դէմքը — կը յայտնագործենք մեր դէմքը» եւ մեր իսկ մոխիրներէն կը խոյանաւք անհուն ի վեր:

Ատոնիսօրէն կը ծնի մարմնը, ատոնիսօրէն կը մեռնի... Ծնելու համար վերստին եւ վերջնականապէս ազատագրելով մարդը՝ «մարմինը կը գուռարուի զանազան իմաստներով, կ'այլափոխուի հացի, արեւու, նժայգի» եւ կը սուրայ անվահան յեղափոխութիւնը, Այս իսկ պատճառով, «հարցումներուն նամարդութիւնը» անուն պատաստին խորհուրդը կը ճամբորդէ «կախարհի ստեղծումը», «հովին համար անցրպետը կը քափանի», կը հասնի «Առաջին երազը» դժամեկնութեան կախարդական հմայրքին, յանգելու համար «չնային մայրութիւնը» գործին, ուր հողն ու կինը, հողն ու սերնդագործութիւնը կ'իմաստաւորեն մէկգմէկ, կը դառնան աւելի լուսաւոր ու ամբողջական եւ կը հասնին «Այլափոխման սկիզբին յաջորդող «Ծննդոցի յիշողութիւն» ստեղծագործութեան, որ աւարտ մը չէ երբեք, այլ յիշողութեան ծննդոցին հետ զարգացող բանաստեղծութեան անվերջապէս խոյանքը փառաբանող արարտ-սկիզբը:



«Հողին մայրութիւնը» և արգանդին թև անող թռիչքը:

digitised by A.R.A.R.@



ՓԱՐԻՏ ԼՍՍՍՍ

V

Նոյն օրերուն, երբ «Կարբի Գոն-
թամփորն» մէջ կը ցուցադրուէին ղծա-
մեկնումներ բանաստեղծ-քանդակագոր-
ծուհի Մունա Սէուտիի, անդին՝ «Տեւ-
թա» ցուցարահին մէջ, եօթանաս-
նական թուականներուն հրապարակ իջած
երիտասարդներուն ամէնէն չղայինը՝
Փարիտ Լատտատ, հրապարակ կ'իջէր
նորագոյն յանդիմութիւններով:

Լիբանանեան, ինչպէս նաեւ արա-
բական գեղանկարչութեան խաղաղասէր
լուծումները մերժող այս անիխանակա-
նը, որ գոյներուն, յղացներուն, զիծե-
րուն եւ ի մասնաօրի մարմիններու
ճարտարապետական կառույցներուն հետ
կը խաղայ անվախօրէն, իր վերջին ցու-
ցահանդէսով կու գար հաստատելու իր
գիմագիծը, այս անգամ աւելի շնչուած
ոճով մը, իրրեւ մերժումի նակատը հո-
վանաւորող պարազլուխ:

10 Ապրիլին, Փարիտ Լատտատ ան-
հատական իր հինգերորդ ցուցահանդէ-
սով ղեկանկարչասէր հասարակութեան
կը ներկայանար մեծածաւալ ու փոքրա-

ծաւալ մօտ քառասուն պատառներով,
որոնց մեծամասնութիւնը իւղաներկ կը-
տաներէ կը բաղկանային, իսկ մնաց-
եալները՝ գունաւոր կամ սեւ ու ճերմա-
կով իրազօրծուած շրաներկերէ:

Իր անիխանական աշխարհաշար-
եացքով ինքզինք պարտադրած այս ար-
ւեստագէտէն սպասելի էր որոշ հանդար-
տութիւն եւ իր փնտրուածներուն ու դե-
ղանկարչական անցած հանգրուաններուն
իբր արդիւնք ձեռք ձգուած «դասական»
կայունացում: Մակայն, զեզարուեստա-
սէր հասարակութիւնը մատնուեցաւ ա-
նակնկալ ցնցումի, երբ փոխան իր ա-
կրկնալիտ, սկանաւտեա եղաւ նախորդ
հանգրուաններուն շարունակութիւնը
հանդիսացող առաւել ուժական արկածա-
խնդրութեան մը:

Իր նորագոյն պատառներու տա-
րածքին, Փարիտ Լատտատ մոլուցքով
արչուած էր բանականութիւնը ճմլող
հարցականներուն վրայ: Ան չէր հասած
վերջական պատասխաններու, որովհե-
տեւ արուեստին իմաստն ու նկարագիրը
խուզարկող այն հարցականները, որոնք
մղձաւանջային ալիքոճումի մը վերա-
ծած էին արուեստագէտին էութիւնը,
անպատասխան հարցումներ են, կամ ա-
ւելի յստակ տարազումով՝ հարցումներ,
որոնց պատասխանները եւս կը վերած-
ւին հարցումներու, յուսալացնելով հար-
ցում-պատասխաններու եւ պատասխան-
հարցումներու սրբիջլ վիսիւճն, դոր
քանդակու, ոչնչացնելու կիրքը նշմարելի
է գրեթէ բոլոր պատառներուն մէջ: Ի
վերջոյ, արուեստի պարագային պատաս-
խան մը գտնել՝ քացատրել կը նշանակէ,
եւ ան՝ որ կը սկսի բացատրել յուզումը,
միաժամանակ կը ճզնի ապացուցել պը-
տածը: Իսկ ապացոյցը կ'առաջացնէ
տակմաթիւք եզրակացութիւններ, որոնք
ստեղծագործութեան քարացումն ու մօ-
տայուա մահր մատնող ախտանշաններ
են:

Ինչ որ առաջին տկնարկով կը յատ-
կանչէ Փարիտ Լատտատի իւղաներկերը՝
փորձառական զրոշմն է: Փորձառական,
ան գիտնալով հանդերձ՝ թէ արուեստը
միշտ կենդանի պահող արիւնը վերջնա-

կան սահմանումներու շանգիլն է, աբուհանդերձ, կը տազնապի յայտնագործելու համար իր ճյւղարտութիւնը, որ շրջան մը ետք կրնայ ենթարկուիլ այնպիսի եղափոխութեան մը, որուն պատճառով վերջին հանգրտանը կրնայ հակադէր բեւեռը նկատուիլ իր սկզբնաւորութեան: Այդ է պատճառը թերեւս, որ Ծարխտ Հատտատի մօտ ամէն բան հնուրաւոր եւ սպասելի կը դարձնէ: Անկարելի է գեղադրական ընտրութիւնը ու գեղատեսիլը չափաճիւններ գոյութիւն չունին գեղանկարչին աշխարհէն ներս, եթէ փորձենք այդ աշխարհը դիտել դասական տեսանկիւնէ: Ընդհակառակն, բացարձակ ազատութեան մեկնող անիշխանութիւն մըն է գծելու արարքը, որ կը մօտենայ Արեւելուտքի անիշխանական գեղանկարչիւններու արուեստը բնորոշող Հորիզոններուն, ուր կատուցելն ու քանդելը կը դառնան հոմանիշ բառեր: Մօտենալով Արեւելուտքի անիշխանական գեղանկարչիւններուն Ծարխտ Հատտատ կը հեռանայ անոնցմէ իր իսկ աշխարհով, որ պարուրած է Արեւելքը յատկանշող մասմեսական սուփիզմով մը, որուն մենք կը հանդիպինք իր վրձնահարուածներուն մէջ, որոնց միջոցով ան կը փորձէ հասնիլ եւ ընդելուզուիլ Անձանութիւն:

Նման արեւելքի ճգնաւոր սուփիզին, որուն ճայնը կը սկսի բարձրանալ իր արտասանած իւրաքանչիւր «Ալլահ» բառին հետ, Ծարխտ Հատտատ եւս կ'ապրի այդ միտքի պահը իր վրձնահարուածներուն ածող ուժգնութեամբ, ու մեզի այնպէս կը թուի, որ կը գտնուինք մենակեաց ա'յն ճգնաւորին դէմ, որուն ներամփոփումէն ժայթքած «Ալլահ», «Ալլահ», «Ալլահ», ...» բացազանչութիւնը կ'արտայայտուի վրձնահարուածներով, որոնք կը ճամբորդեն Անձանութի բացերն ի վեր՝ մինչեւ որ նուազի ճշգնաւորը ուլակորոյս թմփիրին մէջ, որ ըստ սուփիզմի՝ ներամփոփման գերագոյն վիճակն է, ուր ճամբորդող Հողին կ'ընդելուզուի Աստուծոյ զաղափարին հետ ու զայն կ'աղատագրէ կրօնական սահմանումներէն:

Այս այն պահն է, ուր Հողեկան այս

կեդրոնացումէն կը գոյաւորուի աշխարհ մը, որուն եզրերը կը մօտենան իրարու, կ'ընդխառնուին, կը դառնան մի գոյութիւն: Հոս, աղատութիւնը կը գումարէ կանոնաւորն ու անկանոնը, գրաւչութիւնըն ու տգեղութիւնը, խորախորհուրդ միջոն ու մակերեսայինը, եւ այս այնպիսի ճամբորդական ոճով մը, որ մեզի կը թելադրէ միտամանակ եւ անիշխանական խենթը, եւ տրամախոհական շէնքը դիժ առ դիժ ու գոյն առ գոյն կառուցող մտածողը:

Ծարխտ Հատտատի վերջին ստեղծագործութիւնները դիտելէ ետք, մեր մէջ կ'արմատանայ այն համոզումը, թէ բնութեան կը քաղէ իր գոյները, իսկ երրորդական կարեւորութիւն կ'ընծայէ գիծերուն, հուսասարակչութեան, ստուերին, մարմիններու արտաքին տեսքին եւ այլ մանրամասնութիւններու:

Եւ ինչպէս մանուկ մը կը վազէ բնութեան մէջ անդրադիտակից հրճուանքով, նոյն եղանակով բնութեան քաղուած գոյները կը վազին սպիտակ պատուանի վրայ: Կտուին մէկ մասը Հողիվիճակը արտայայտող գոյնով մը սողողելէ ետք, կ'իշխան յար ու նման մանուկին, այսօր ջղային վրձնահարուածները կը ցատկո-



«Արիւիք բուզի վրայ»

տին, կը մտազլցին ու կը սահին, յառաջացնելով մէկէ աւելի զոյններով զրօսեւորուած հոգեվիճակները արուեստագէտին:

Այս աճն պահն է դարձնելու, երբ հոգեկան խաղաղութիւնը կը դրոսեորուի կապոյտ կամ կանաչ գունածեփուժով, որ կը յատկանշուի իր լաւատես ջինջութեամբ, այսինքն՝ մանուկի մը հրճուանքը երջանիկ ոճով մը կառուցելու պահը, բայց անուշադրարար կամ բնութեան մէկ կատակով կը գլորի մանուկը՝ իր հետ քանդելով բարձրացուցած աւագէ դղեակները: Նոյնը կը պատահի նաեւ Ճարիտ Հատտատի վրձինին, եւ ան ապրելի է հոգ իր կառուցած աւաղեայ դրդեակին քայքայումէն ծնած դառնութիւնը, մոլուցքով կը հարուածէ պատարար իր քնարական հերոսին եղանակով, որ իր գայրոյթը կ'արտայայտէ միտնուար ու կըբոտ կերպով գետինը սոսնահարուածելով:

Բայց Ճարիտ Հատտատի քնարական հերոսը, որուն եւ արուեստագէտին միջև կը կատարուի յարաշարժ երկախօսութիւն մը, անդիտակից մանուկը չէ միայն, այլ վերջնական կառուցումներու դէմ պայքարող անխիտանականը նաեւ, որ զուրկ չէ բանական դիտակցութենէն: Յեղատիտութիւնը միշտ երիտասարդ պահելու համար ան կը դիմէ գեղանկարչական հակայեղատիտութեան, որպէսզի օրէնք մը կամ կառայարելու եղանակ մը ջնջելու համար ճամբայ ելած յեղափոխութիւնն ալ իր կարգին չդառնայ նոր օրէնք եւ նոր վարչամեքենայ: Այս կ'ապացուցանեն իր աճն պատաստները, որոնք կը կոչուին «Հարաւայիմ մահ», «Վիրակի ցերեկուամ երազը» — բազկացած վեց կտորներէ — «Փետրուար 1», «Փետրուար 2», «Ճամբարդարիւն», «Արիւի քաղաքի վրայ», եւ այլն:

Եթէ Հարաւային Լիբանանի որդին՝ Հասան Զունի իր ծննդավայրին ողբերգութիւնը կը դրսեւորէ աղօտ դիմանրկարներու անապահովութիւնը ընդգծելով, Հարաւային Լիբանանի ողբերգութեամբ ալեկոծող Ճարիտ Հատտատ նոյն հոգեվիճակը կը կառուցէ գունաւոր վե-

րացազաւտութեամբ մը: «Հարաւայիմ մահ» պատաստի հասակն ի վար ուղղահայեաց էջքով մը կը հոսի հրակարմիր գոյնը, որ մահուան ճայել խորհրդանշող բանալի գոյնն է: Լեցնելէ ետք պատաստին երեք քառորդ տարածութիւնը՝ անող կարմիրը կը խուփէ Հարաւային Լիբանանի բնութեան ու մարդուն վրայ, այսինքն՝ պատաստին ծանրութեան կեդրոնը հանդիսացող յատակին հասակն ի վար, առաջացնելով խուճապահար գոյններու տուկնուկրայութիւն մը, որոնք կը խորհրդանշեն բնութիւնը — կանաչ, դեղին, նարնջագոյն —, մարդը՝ — բաց կապոյտ ու վարդադոյն — եւ հողը՝ — սրճադոյն ու կարմիր-հող —: Այս վերջին հանգրուանին մէջ, պատաստի յատակին վրայ փուլ կու գայ երկրաչափական կառույցի քայքայումը՝ նման կեանքի ու բնութեան վախճանական արամի կըտոյթին:

Ճարիտ Հատտատի կուսակները չունին հաճելի ըլլալու ձգտում: Հանդիսատեսին գոհունակութիւն պատճառելու եւ անոր գնողական տրամադրութիւնները արթնցնելու չեն միտեր: Այլ պարզապէս գծուած են, որովհետեւ այդ ոճով Ճարիտ Հատտատ կը կարծէ լեցուցած ըլլալ իր օրերն ու դատարկութիւնը մարդկային կեանքին: Իր ղտգոհութիւններն ու պատրանաթափութիւնները քայքայելով՝ մեթիք հաղորդակցութիւնը մեռք ձգելու եւ ապրելու եղանակն է գծադրութիւնը այս արուեստագէտին համար, որ իր Ղդային ու փոթորկոտ քոյին տակէն մերթ ընդ մերթ կ'երեւի մեզի: Ծայրայեղ երեւակայութեամբ մը ան կ'ապրի անխիտանութեան կեանքը, երեւակայութեամբ մը, որ կու գայ հոգիէն, կը դառնայ ներքին աչքը եւ կ'որսայ աճն՝ որ կը խուսափի տեսողական զգայարանքի հասողութիւններէն: Հոս պէտք է փնտռուի բանալին այն իրողութեան, որուն համամայն Ճարիտ Հատտատ չի ծանրանար շարժուն կամ քարացած մակերեսները բռնելու աշխատանքին վրայ, ընդհակառակն, կը ջանայ որսալ անտեսանելի մակարդակները ներաշխարհին եւ երբ կը յարդի իր սուղումներուն մէջ՝ մեզ

դէմ յանդիման կը դնէ շանթահարող առանկաներու :

Մանուկներու զծագրական ոճէն օգտուած վերացապաշտ-գերերապաշտ արւեստագէտ մըն է Պարիտ Հատտատ, հակառակ այն իրողութեան, որ իր պատասններուն մէջ կարելի չէ հանդիպել գերերապաշտ գեղանկարչութեան աւանդը յատկանշող ոչ մէկ տարրի: Բայց սերտելէ ետք զիմադրին ու հոգեբանական նկարագիրը այս նկարիչին, մեր մէջ աւելի եւս կը հաստատուի այն համոզումը, թէ հակապեղանկարչութեան ճղտող ու գեղապաշտ կառոյցներուն դէմ մենամարտող Պարիտ Հատտատ եւս գերերապաշտ է իր էութեամբ եւ աշխարհահայեացքով :

Իրտելէ ետք գեղանկարչութեան մերժումի ճակատը ներկայացնող այս նրկարիչին պատասնները, որոնք դասական հասկացողութեամբ՝ «հակապեղանկարչական խառնակչութիւններ» են, մեզի համար հասկնալի կը դառնայ Պրոթնը, երբ կ'ըսէ. «Ամէն քան մեզ կ'առաջնորդէ կարծեալ, քէ կայ քանակաւ մակարդակ մը, ուր կը միտնամ մահն ու կեանքը, երեւակայութիւնն ու իրականութիւնը, անցեալն ու ներկան, շարունակականն ու անշարունակականը» :

Ահա թէ ինչու Պարիտ Հատտատ կը խորտակէ բնութեան մարմիններուն կառուցողական դրաւչութիւնը, զրոհւորելու եւ փաստարանելու համար հակադիր տարրերէ բաղկացած պրըթոնեան աշխարհին վեհութիւնը, ուր ամէն մասնիկ — մարդ, խոտ, ծաղիկ, հող, երկինք, ջուր, եւայլն — կ'ապրի իր մենութիւնն ու մեքենայացած դարուն անհեթեթը, կ'ընդլզի, կ'ըմբոստանայ, կը խոյանայ կառոյցներուն վրայ, զանոնք քանդելով կը ծօտեցնէ իրարու եւ կ'առաջացնէ պահն ու մթնոլորտը, ուր մասնիկները

իր պատասններուն քայքայուելով ծնունդ

կու տան նոր վեհութեան մը, դոյներով ի դործ դրուող հաղորդակցութեան :

VI

Վերոյիշեալ երիտասարդ գեղանկարիչներուն բոլոր գործերը հաւասար չափով յաղորդութիւն չեն գտած: Թեքնիք անկիւնէ դիտած՝ Օլիֆէոս Շուիթիի վրէժինը շուտի հմուտ արուեստագէտի մը վրձինին ճարտարութիւնը: Այսուհանդերձ, ատիկա ժամանակի հարց է, ստացական պարագայ մը, էականը միւսն է, ինքնատիպ խորքը, աշխարհահայեացքը, պահ մը կամ հողելիճակ մը յաղորդակցն նուաճած պատասններուն փաստը:

Նոյնն է պարագան Պարիտ Հատտատի, եթէ մանաւանդ դասական ու «աքստեմիլ» չափանիշներով մօտենանք իրեն :

Ներկայացուած շորներուն ու դեռ սերունդի միւս անդամներուն մէջ, — որոնք լուռ էին անցեալ եղանակին, ինչպէս Սքամանիկա, Մահա Պայքաբատար, Եւայլն, — ամէնէն գեղագէտն ու դասականը Հասան Ճունին է, որ լաւագոյնս տիրապետած է իր վրձինին ու գոյներուն :

Անոնք, բոլորն ալ, կրած են որոշ ազդեցութիւններ, բայց կրցած են իրենց էութեան մէջ լուծել այդ ազդեցութեանն տարրեր եւ հարստացուցած են իրենց արտայայտական լեզուն՝ դոյնը, լոյսը, ստուերը, թափանցիկութիւնը, հաւասարակշռութիւնը, եւայլն :

Այս բոլորը մտածել կու տան, թէ հակառակ իր վերիվայրուժներուն, լիբանանեան գեղանկարչութիւնը կը դըտնելի հետաքրքրական փուլի մը մէջ: Մանաւանդ երիտասարդ սերունդն է, որ յոյս կը ներշնչէ՝ կենդանութեան մը նըշանը հանդիսացող իր յանդգնութիւններով եւ որոնումներով :

ՍԱՐԳՍԻ ՎԻՐԱԿՈՍԵԱՆ

(Յաջորդով՝ Առատուր Պզտիկեանի մասին)

digitised by A.R.A.R.®

ԿՂՎԱՐՆԵՐ

ՆՈՐԵՐԻՆ ՊԵՏՔ ԷՆ ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱԻԱՏԱԼ

Հ. Էդոյեանի «Սոնետների պսակ»ը հաստատում է, որ նոր մտածողութիւնը յաջողութեամբ կարող է տեղադրուել դասական ձևերի մէջ եւս: Անշուշտ, ողջունելի է «հին» ձևերին դիմելու բանաստեղծի նախասիրութիւնը, բայց չպէտք է մոռանալ, որ նա լիովին փոխել է սոնետի բովանդակութիւնը: Եթէ, իրապէս, զժուարագոյն մի ձևի յաղթահարումը Էդոյեանի բանաստեղծական կարողութեան վկայութիւնն է, ապա շարքի վերնագիրը՝ nostalgia բացատրում է այն մասամբ խորհրդատու իրականութիւնը, որ անկայ է «պսակում»: Թոփչեանը լաւ է նկատել երկու բանաստեղծների մտածողութեան ընդհանուր գծերը, անելացնել է պէտք միայն, որ Էդոյեանը, թող ներքին ասել, անէլի բանաստեղծական է: Էդոյեանի երազած գալիք իրականութեան ներդաշնակութիւնը, որին բանաստեղծը հասնում է կորուստների ու յայտնութիւնների զժուարին մի ճանապարհով, ընդգծում քնարականութիւն է հաղորդում սոնետներին: Էդոյեանի քնարականութիւնը ընդգծում է Յարութիւնեանից նրա տարբերութիւնը: Եղածին, արդէն յայտնիին հակադրուելու վերջինիս կիրքը ներքին տանում է դէպի երեսոյթները, նաեւ

բնութիւնը բանաստեղծականութեանից պըրկելով միտումը: Միայն այդպէս կարելի է հասկանալ «Պատուհանիս տակ սոնետներ» տողով սկսուող բանաստեղծութիւնը: Յարութիւնեանի եւ Էդոյեանի սերնդի որոնումները, որքան էլ «տարօրինակ» ու «ծայրայեղ» դրսեւորումներ ունենան, արդի զեղարուեստական պարզացման անկապտելի մասն են: Թէ ինչ արժէքներ կը ստեղծեն նոր բանաստեղծները, կը ստեղծեն, թէ ոչ, կ'ապացուցի ժամանակը, իսկ մինչ այդ նրանց պէտք է տալ ընթերցողներին հանդիպելու հընարատրութիւն, չէ՛ որ լինելութեան մէջ գտնուող երեսոյթների ամբողջացման բնականոն ուղիներից մէկն էլ, թերեւ ամենակարեւորը, լայն հասարակայնութեանը ներկայանալն է: Կայ շատ կարեւոր մի հանգամանք եւս: Եթէ արձակում աւազներին փոխարինելու է եկել Հր. Մաթեոսեանի տաղանդատու սերունդը, որը գլխատրում է արդէն պարզացման ընթացքը, ապա պոեզիայում գրական հերթափոխի խնդիրը շարունակում է մտահոգութիւն պատճառել: Ահա թէ ինչու մի առանձին հոգատարութիւն պէտք է ցուցաբերել բանաստեղծների երիտասարդ սերնդի հանդէպ:

ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆԵԱՆ

ՎԻՐԱԻՈՐԱԿԱՆ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆ...

Մեր այս թիւին մէջ արտագրուած Հենրիկ Էդոյեանի «Սոնետների պսակ»ին հետ «Սովետական գրականութիւն» ամսագիրը հրատարակութեան տուած էր նաեւ Արտեմ Յարութիւնեանէն շարք մը, առաւել՝ երկու այդ շարքերուն անդրադարձող Ալեքսանդր Թոփչեանի եւ Գառնիկ Անանեանի վերլուծական փորձերը, այն յոյսով, որ՝

«Տպագրելով նշուած բանաստեղծութիւններն ու յօդուածները, խմբագրութիւնը կարծում է, որ, իրենց բոլոր վիճելի կողմերով հանդերձ, այդ նիւթերը կարող են օգտակար լինել ժամանակակից պոեզիայի պարզացման ուղիների շուրջ հետազոյ գալ ջանալէճերի եւ մտորումների համար»:

Բանավէճ մը սկսելու եւ մտորումներ

կարգալու այս բաղձանքը, որքան մենք կը յիշենք, մնաց բաղձանքի սահմաններուն մէջ: Հայրենի մամուլի էջերուն այդ մասին խօսք չբացուեցաւ, հակառակ անոր, որ քննարկման կարգով հրատարակած բանաստեղծութիւններէն մա՛նաւանդ էրոյեանի «Սոնետների պսակ»ը կը բովանդակէր մտորումներ արձանագրելու պօրեղ թելադրութիւններ:

Ալեքսանդր Թոփչեան անելի երկար խօսած է այս վերջինին մասին, իսկ Գառնիկ Անանեանի ամբողջ ըսածը վերը արտագրուած հատուածն է:

Ճիշդ է Անանեանի հաստատումները այն մասին, որ էրոյեան նոր մտածողութիւնը յաջողութեամբ տեղաւորած է հին ձևերուն մէջ եւ «Սոնետների պսակ»ը ընդգծուած քնարակնութիւն մը ունի, եւ թէ՛ ձեւով ու խորքով անիկա կը հանդիսանայ «էրոյեանի բանաստեղծական կարողութեան վկայութիւնը»: Հասկընալի չեղաւ միայն, թէ ինչու երիտասարդ քննադատը տուեալ գործին մէջ աստիճան մը անելի մխրճուելու փոխարէն իր սակաւ տողերուն պզալի մասը լեցուցած է վարձապետութեամբ, թէ՛ երիտասարդ բանաստեղծներուն «պէտք է տալ ընթերցողներին հանդիպելու հնարատրութիւն, չէ՛ որ լինելութեան մէջ գտնուող երեւոյթների ամբողջացման բնականոն ուղիներից մէկն էլ, թերեւս ամենակարեւորը, լայն հասարակութեան ներկայանալն է»:

Լայն հասարակութիւնը արհամարհած չենք ըլլար, եթէ ըսենք, որ իրականութիւնը բնա՛ւ այ այդպէս չէ եւ լայն հասարակութիւնը հազի՛ւ թէ հեռաւոր կապ մը ունի լինելութեան մէջ գտնուող երեւոյթներուն խորացման ու բիրեղացման մէջ: Ոչ թէ լայն հասարակութիւնը, այլ բացառելով սովորական մակարդակներէն վեր բարձրացած քանի մը երիտասարդներ (Ռազմիկ Դաւոյեան, Ալպերտ Կոստանեան, Եայն), ըսենք առանց վերապահութեան, որ այսօրուան գրական կարծելած հասարակութիւնն անգամ քիչ ըսելիք ունի «Սոնետների պսակ»ին տաղանդաւոր բանաստեղծին եւ անոր սերունդին, ո՛ր մնաց լայն հասարակութիւնը,

որ տակաւին ա՛յսօր մասսայական տպաքանակներով կը սնանի եւ Իսահակեանի «էջ ջա՛ն հայրենիք, ինչքան սիրուն ես»ի պէս եւ Շիրազի Սիւ ու Մասիսի օրինակով գրուած տեսքանները բանաստեղծութիւն համարելու թմբիրը չէ թօթափած: Երիտասարդ բանաստեղծները, կը կարծենք, այնքան ալ հոգատարութեան պէտք չունին, իրենց փորձերը հասկնալու հոգը ունեցողներո՛ւ պէտք ունին անելի եւ քիչ մըն ալ հրատարակչութիւններու քաւարանին մէջ իրենց տառապանքը թեթեցնող բարեացակամ վերաբերումներու...

Երիտասարդներուն ամէնէն անելի պէտք եղածը ա՛յդ է հիմա, հրատարակչատուններուն մէջ անոնց վերապահուած չարչարանքները թեթեցնելու իրապէս անհրաժեշտ հոգատարութիւնը: Այս կապակցութեամբ բաղդատաբար բախտաւոր եղաւ Ռազմիկ Դաւոյեանը (չորս գրքոյկ), քիչ մըն ալ Արեւշատ Աւագեանը (երեք), անելի քիչ՝ Արմէն Մարտիրոսեանը (մէկ տետրակ): Միւսներէն, նոր շարժումը գլխաւորողներէն Հենրիկ էրոյեանի, Յովհաննէս Գրիգորեանի, Դաւիթ Յովհաննէսի, Արտեմ Յարութիւնեանի անուններով գոնէ մենք առանձին հատորներ չենք կարողացած, հաստոր ունեցած չըլլալու ցաւը կարողացած ենք սակայն: Անոնցմէ մէկը, Յովհ. Գրիգորեան, որուն «Աշուն» խորագրով «Գարուն» ամսագրին մէջ լոյս ընծայած «բանաստեղծութիւնը մի կատարեալ փոթորիկ ստեղծեց գրական աշխարհում», երկու տարի առաջ, գլուարթախոհ սա մթնոլորտին մէջ պիտի յայտնէր իր ցաւը.

«1973 թուականին գրել եմ ընդամենը 10 բանաստեղծութիւն, որից ճր տպագրուել է: Նախադարից սկսած ընդունւած է յաջողուած համարել անտիպ բանաստեղծութիւնները: Չուզե՛նալով խախտել մեր նախնիներից եկած այս զեղեցիկ (փրկարար) աւանդոյթը, անտիպ չորս բանաստեղծութիւններս յամառօրէն չեմ յանձնում տպագրութեան, գոնէ յաջողուած չորս բանաստեղծութիւն ունենալու ականակալիցով: Ի դէպ, «Հայաստան» հրատարակչութիւնը նոյնպէս հետեւում է այս աւանդոյթին՝ յամառօրէն չի տպա-

գրում գիրքս, երեւի գունէ մէկ յաշողուած գիրք ունենալաւ ականալիցով, այս, ի հարկէ, կատակով»:

Այս գանգատին մէջ Յովի. Գրիգորեան առանձին չէ: Ասկէ չորս տարի առաջ, Երիտասարդական բանաստեղծութեան մասին բացուած բանավէճին առիթով իր սերնդակիցներէն ուրիշներ եւս մատնանշեցին Նոյն վերքը:

«Ատանգաւոր ու հիւանդագին երետոյթն այն է, -- կ'ըսէր Արեւշատ Աւագեան, -- որ «Հայաստան» հրատարակչութեան առաջիկայ պլաններում տեղ չի գրտել Երիտասարդ բանաստեղծներից թէկուզ մէկն գիրքը»:

Ահա եւ Արմէն Մարտիրոսեանի բաղձանքը, բանաձեւուած Նոյն առիթով.

«Անիրաժեշտ է գնահատել Երիտասարդների ուժերը, առաւել եւս, անիրաժեշտ է տպագրել նրանց ստեղծագործութիւնները, իսկ տպագրելուց, գնահատելուց առաջ էլ՝ ձանաչել նրանց»:

Հաստ հասկնալի չէ Նոյնպէս, թէ ինչու «պոեզիայում գրական հերթափոխի խնդիրը շարունակում է մտահոգութիւն պատճառել» Գառնիկ Անանեանին:

Լայն հասարակութենէն գալիք բարոյական հոգատարութենէն աւելի, որ վիրատուական է գրականութեան մէջ իրենց յեղափոխական գործունէութեան խոր գիտակցութիւնը ունեցող այս երիտասարդներուն իմամբ, անոնք, ինչպէս ցոյց կու տան ցաւոտ փաստերը, պէտք ունին հրատարակչական հոգատարութիւններու: Հայրենի բանաստեղծութեան ներկայ հանգրուանին՝ մեր մտա-

ւորականները այս ուղղութեամբ պէտք է աշխուժացնեն իրենց պայքարը եւ քիչ մըն ալ փորձեն հասկնալ անսովորին ձգտող երիտասարդներուն դժնդակ միգրը եւ ոչ թէ Գառնիկ Անանեանի պէս արդէն գլուխ բերուած իրագործումներուն մօտէն արագ անցնելով խօսք բանան անհեթեթ հոգատարութիւններու մասին:

Ի վերջոյ Հր. Մաքեռասեանի տաղանդաւոր սերունդին քով ինչու անպայման մտահոգութիւններ պիտի պատճառեն ընթերցողին Մաքեռասեանի հասակակից բանաստեղծները, երբ ան, ընթերցողը իր տրամադրութեամբ տակ ունէր արդէն Դաւոյեանի «Տեքսիստ»-ն ու «Մեղրահաց»-էն տասնեակ մը գոհարներ, որոնց վրայ ահաւասիկ կ'աւելնայ էղօյնեանի չքնաղ «Պսակ»ը: Ոչ առանց մակարդակով, բայց անպայման ուշագրաւ կտորներ ունին ճանի երիտասարդներէն Յովի. Գրիգորեան, Արմէն Մարտիրոսեան, Արտեմ Յարութիւնեան, Իւրի Սահակեան, Դաւիթ Յովհաննէս, Արեւշատ Աւագեան, Ֆելիք Պետրոսեան, Հրաչեայ Սարաժեան, Գեորգ Օհանեան, հաւանաբար եւ ուրիշներ, որոնց փորձերում մէջ միրմուռու միգր աւելի արդիւնաւոր պիտի քլար անտարակոյս, քան՝ ըսի՛նք այդէն անգամ մը՝ իրական տուեալներուն անյարիր բաղդատութիւններով տող տողի վրայ դիպելու դիւրութիւնը:

Վերադառնալով էղօյնեանի «Մոնետների պսակ»ին, ստարեւ հատուած մը անար նուիրուած Ալեքսանդր Թափչեանի վերլուծումէն, որ ունի աւելի լուրջ քրնայք մը:--

ԳԱՍԱԿԱՆԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ...

Մարգուլ յաղթանակը եւ պարտութիւնը, յուսերժութեան նուաճումը, բայց կորստի սաղմը այդ նուաճման մէջ: Այս դրամատիկ հակասութիւնն արտայայտուած է ամբողջ «Պսակ»ում, իւրաքանչիւր տոննետում եւ գրեթէ իւրաքանչիւր տողում: Իսկ ամենայնուայ, թերեւս, երբ յարդ սննեան է, որտեղ բանաստեղծին յաջողուել է նաեւ ձեւը կատարելիս

«բովանդակացնել», ստեղծել ժանրային հարազատ կատոյց՝ թեզ-անթիթեզ-սինթեզ:

Առաջին քառուկը յաւերժութեան ձգտումի իրագործումն է, մարդն իր գոյութեան կնիքն է դնում՝ արձանագրում, զարիւրի մէջ թողնում իր հետքը. «Ես կը գրեմ ինչպէս մաքուր ապակի» (երեւ ըստեր...): Երկրորդ քառուկում բացուած է նուաճման խորքում ծը-

ւարած կործանման սաղմը. «Կը քարանայ իրի ի հասն ամասնաց / եւ կը ջնջուի յիշարութիւնն առաւելոյ»։ Մարդը կարծես յաղթում է ժամանակին, բայց եւ կորցնում իր մեծագոյն նուաճումը՝ յուր, զարեւրով կուտակուած փորձը եւ մուտ մերկ, անօգնական։ Մա յիշեցնում է թուամանանի «Նքիաթը Ուրաշիմայի մասին, որն ակամոյ խարեց Ժամանակին, սպրեց երեք Հարիւր տարի, սակայն նորից վերադառնալով մարդկանց՝ իրեն գտաւ մենակ եւ օտար։ Մոնետի տերցիններում արուած է այս դրամատիկ յատկութիւնը. «Կը շօշափեմ արքնաւցումը քն օրուայ, / որը նորից անեացում կը հագնի»։

Միւս սոնետներում այս Հակասութիւնը արտայայտուած է տարբեր պատկերներով։ Օրինակ, վեցերորդ սոնետում ծովի վրայ սաւառնող Գեղայուսին անտիթեզ է դառնում անընդ եւ կործանուող Իկարուսը, տասներեկերորդ սոնետում կեանքի այս տիպիկտիկան խտանում է մի գեղեցիկ պատկերի մէջ։

Քոչուներ՝ պոեզիայի յաւերժական խորհրդանշաններից մէկը, ներկայացրած է կեանքի երկու Հակադիր վիճակները՝ սկիզբ եւ վախճան, իրար մէջ Հիւսուած, միմեանցով պայմանաւորուած, կեանքը միայն թռիչքը չէ, կեանքը Հենց թռչնի քայքայումն է թռիչքի պահին, սա իսկական կենսահաստատում է մահուան դոյուլիան զգաստ փաստադրումով, ճիշդ այնպէս՝ ինչպէս Վահէ Քաջան է գրում. «Մտիը կեանքի մար-

տաղութիւնն է»։ Հ. Էդոյեանի սոնետներում այս Հակադիր վիճակներից ոչ մէկը բացարձակ իշխանութիւն չունի, կեանքը ներկայացուած է որպէս այս վիճակների անվախճան իրարայջորդում։

Սոնետների պսակի Հոյակապ կոտորցը բանաստեղծին կատարեալ Հնարաւորութիւն է ընձեռում ներկայացնելու կեանքի այս տիպիկտիկան, մարդու անդադար պայքարը, անկումը եւ վերելքը, յաղթանակը եւ պարտութիւնը։ Եթէ «սոնետի բովանդակութիւնը կեանքի շարժման օրէնքն է... դրամատիկ ձեւը՝ կեանքի շարժման դրամատիկ օրէնքին Համապատասխան» (Ե. Բեխեր), ապա սոնետների պսակը զառնում է մի ընդթայ, որի իւրաքանչիւր օղակը իր մէջ պարունակում է Հիմնական ձեւի եւ բովանդակութեան փոքր մոտեւը, իրար նման, բայց եւ տարբեր։ Ստեղծում է մի կառոյց, որի սարուկտուրան զարմանալիօրէն յիշեցնում է մարդկային կեանքի սարուկտուրան, իսկ թապը, որ կազմըւած է տասնչորս սոնետների առաջին տողերից, փակում է այդ շղթան եւ տալիս բոլոր տարբերակների կատարեալ մոտէլը։

«Սոնետների պսակը արամբանական շարունակութիւնն է Հենրիկ Էդոյեանի ստեղծագործական պրպտումների եւ երիտասարդ բանաստեղծին պէտք է ողջունել դասական ձեւերից ամենագատականին Համարձակօրէն դիմելու Համար։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՓՈՓՉԵԱՆ

ԽՄԲԳՐԱԿԱՆ ՆՈՑ

«Բազին»ի ներկայ համարին (Սեպտեմբեր) տպագրութիւնը գրեթէ աւարտած էր եւ հրատարակ պիտի հանուէր Սեպտեմբեր 20ին, երբ նոյն ամսոյն կիսուն Լիբանանը ցնցող ծանօթ դէպքերը աւելի սաստկացան ու ծաւալեցան, ընդհատելով ի միջի այլոց աշխատանքները նաեւ Սփիրգի եւ Զոհաբ Պլաթի շրջաններուն, ուր կը գտնուին մեր խմբագրատունն ու տպարանը:

Կորուսած շուրջ երկու այդ ամիսներուն հետեւանձով հարկադրելոցանք Սեպտեմբերի թիւին միացնել եւ Հոկտեմբերի թիւը: Կը յուսանք, որ ընթերցողները կ'ըմբռնեն մեր կացութիւնը եւ ներողամիտ կը գտնուին այս ակամայ քերացումին համար:

«Բազին»ի յաջորդ թիւը լոյս կը տեսնէ Դեկտեմբերի առաջին շաբթուան:

ՅԱԶՈՐԴՈՎ

«Բազին»ի գրախօսականներու շարքին շարունակութիւնը.

- | | |
|-------|--------------------------------------|
| Պ. Ս. | Իզնա Սարըսպլանի «Լո»ն |
| Յ. Մ. | Զարեհ Կրախումիի «Տօնակարգ»ը |
| Ս. Կ. | Միքայէլ Թարիզեանի «Գահաճ մեռիւններ»ը |

ՏԱՆՔԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻՏԱՆԱՆ	40 Լ. ՈՍԿԻ
ՍԻՏԱՍԱՀՄԱՆ	20 ՏՈՒՐ
ՀԵՏԱՎԱՃԱՌ	4 Լ. ՈՍԿԻ

باکین
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد اوتين كارتيك فزانجيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTERAIRE & ARTISTIQUE
Propriétaire
A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԴԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԹՅՈՒՆ

•

ՈՄԲՐՈՒՄ
Գ. ՅԵՆՊԵԱՆ

Հեռաձայն՝ 296898

Վարպուքեան հասցե

K. ARARADIAN
Rue Selim Boustani
Beyrouth -- Liban